

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ

### ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Կապանի քաղաքային համայնքը գտնվում է մարզի կենտրոնական մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Նորաշեն գյուղական համայնքին, հյուսիսից և արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Աճանան գյուղական համայնքին, արևելքից «Գ»-«Դ» հատվածով՝ Սյունիք գյուղական համայնքին, հարավից «Դ»-«Ե» հատվածով՝ պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն) և «Ե»-«Զ» հատվածով՝ Գեղանուշ գյուղական համայնքին, հարավից և արևմուտքից «Զ»-«Է» հատվածով՝ Լեռնաձոր գյուղական համայնքին, արևմուտքից և հյուսիսից «Է»-«Ը» հատվածով՝ Չորաստան գյուղական համայնքին, հյուսիսից «Ը»-«Ա» հատվածով՝ Առաջաձոր գյուղական համայնքին:

### ԿԱՊԱՆ – ՆՈՐԱՇԵՆԻԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

Կապան քաղաքային, Նորաշենիկ և Առաջաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 402 մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին, որտեղից սահմանագիծը ձորով նույն ուղղությամբ անցնում է 268 մ, հասնում թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ձորի ոլորոպտույտներով, թիվ 3-12 սահմանակետերով անցնում է 1381 մ, հասնում է թիվ 13 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, կրկին ձորի ոլորաններով, թիվ 14-16 սահմանակետերով անցնում է 874 մ, հասնում է թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս արևելք, հետո հյուսիս և թիվ 18 սահմանակետով անցնում 196 մ հասնում անտառի եզրին գտնվող թիվ 19 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է արևելք, ապա հյուսիս-արևելք, անտառի եզրով, թիվ 20-21 սահմանակետերով անցնում 418 մ հասնում Կապան քաղաքային, Նորաշենիկ և Աճանան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգույցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3539 մ է:

## **ԿԱՊԱՆԻ – ԱՃԱՆԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Կապան քաղաքային, Աճանան և Նորաշենիկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը լեռնային տեղանքով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 1773 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, այստեղից լանջով թեքվում է դեպի արևելք, թիվ 2-4 սահմանակետերով անցնում 608մ, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 6-7 սահմանակետերով անցնում 475 մ, հասնում թիվ 8 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևմուտք թիվ 9-13 սահմանակետերով անցնում 512 մ, հասնում է թիվ 14 սահմանակետին, այնուհետև թեքվում է հյուսիս-արևելք թիվ 15-18 սահմանակետերով անցնում 211 մ, հասնում է թիվ 19 սահմանակետին, այստեղից թեքվում է հարավ-արևելք թիվ 20-24 սահմանակետերով անցնում 782 մ, հասնում է թիվ 25 սահմանակետին: Թիվ 25 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, գետով թիվ 26-27 սահմանակետերով անցնում 433մ, հասնում թիվ 28 սահմանակետին: Թիվ 28 սահմանակետից սահմանագիծը լանջով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 795մ, հասնում թիվ 29 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, սարալանջով, թիվ 30-33 սահմանակետերով անցնում 1179 մ, հասնում Կապան քաղաքային, Աճանան և Սյունիքի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետը:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6768 մ է:

## **ԿԱՊԱՆԻ – ՍՅՈՒՆԻՔԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Կապան քաղաքային, Սյունիք գյուղական համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հատում դաշտային ճանապարհներ և լանջերով թիվ 1-8 սահմանակետերով անցնելով 2388մ հասնում է միջհամայնքային ճանապարհի եզրին տեղադրված թիվ 9 սահմանակետին, որտեղից թեքվում է արևմուտք, թիվ 10-14 սահմանակետերով անցնում 1342մ, հասնում թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, բնակավայրի հարավ-արևելյան եզրագծով թիվ 16-18 սահմանակետերով անցնում 332մ հասնում Օխչի գետի ափին գտնվող Կապան քաղաքային Սյունիք և Աճանան

գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4063մ է:

**ԿԱՊԱՆԻ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԱՂԻԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ)  
ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

«Դ»-«Ե» հատվածով սահմանագիծը համընկնում է Հայաստանի Հանրապետության և Աղբյուրի Հանրապետության պետական սահմանի հետ:

**ԿԱՊԱՆԻ – ԳԵՂԱՆՈՒՇԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»**

Կապան քաղաքային, Գեղանուշ և Լեռնաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, թիվ 1 սահմանակետով անցնում 294մ, հասնում թիվ 2 սահմանակետին, որտեղից անտառի եզրով թեքվում դեպի հարավ-արևելք, անցնում 997մ, հասնում է թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 82մ, հասնում է թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 307մ, հասնում թիվ 5 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, ապա հյուսիս-արևմուտք, անտառի բացատով թիվ 6-7 սահմանակետերով անցնում 647մ, հասնում անտառի եզրի թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, անտառի եզրով թիվ 9-12 սահմանակետերով անցնում է 1239մ, հասնում է թիվ 13 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, ձորով թիվ 14-23 սահմանակետերով անցնում է 2266մ, հասնում ձորի եզրի թիվ 24 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, անտառածածկ բլուրներով թիվ 25-36 սահմանակետերով անցնում 2661մ, հասնում թիվ 37 սահմանակետին: Թիվ 37 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, դարձյալ անտառի եզրով, տեղանքի խառը կտրտված ռելիեֆով, թիվ 38-79 սահմանակետերով անցնում 10997մ, հասնում է թիվ 80 սահմանակետին: Թիվ 80 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 86մ, հասնում Օխչի գետի ափին գտնվող թիվ 81 սահմանակետին, որտեղից թիվ 82-83 սահմանակետերով անցնում է 8516մ, հասնում գետի եզրի թիվ 84 սահմանակետին: Թիվ 84 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, հատում ճանապարհը, թիվ 85 սահմանակետով անցնում 950մ, հասնում ճանապարհի եզրին

գտնվող թիվ 86 սահմանակետին: Թիվ 86 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, շրջանցում անտառը, թիվ 87-104 սահմանակետերով անցնում 3470մ, հասնում է թիվ 105 սահմանակետին: Թիվ 105 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ արևելք, դաշտային ճանապարհով անցնում է 1185մ, հասնում է թիվ 106 սահմանակետին, ապա թեքվում է արևելք, անցնում 73մ, հասնում է թիվ 107 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս-արևելք, անտառեզրի ոլորաններով, թիվ 108-115 սահմանակետերով անցնում 1319մ, հասնում թիվ 116 սահմանակետին: Թիվ 116 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 117 սահմանակետով անցնում 590մ, հասնում բլրի զագաթին գտնվող թիվ 118 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք, թիվ 119 սահմանակետով անցնում է 669մ, հասնում Կապան քաղաքային, Գեղանուշ գյուղական համայնքների և պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 36348մ է:

#### **ԿԱՊԱՆԻ – ԼԵՌՆԱԾՈՐ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Զ»-«Ե»**

Կապան քաղաքային, Լեռնածոր և Չորաստան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ, թիվ 1-2 սահմանակետերով անցնում 568 մ, հասնում Կապան քաղաքային, Լեռնածոր և Գեղանուշ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 568 մ է:

#### **ԿԱՊԱՆԻ – ՉՈՐԱՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Ե»-«Ը»**

Կապան քաղաքային Չորաստան և Առաջածոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետից սահմանագիծը անտառի եզրագծով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 110 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ, անցնում 180 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 163 մ, հասնում թիվ 3 սահմանակետին, կրկին թեքվում հարավ և անցնելով 190 մ, հասնում է թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 201 մ, հասնում թիվ 5 սահմանակետին, ապա անտառի եզրով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 423 մ, հասնում թիվ 6 սահմանակետին,

ապա թեքվում է արևմուտք, անցնում 120 մ, հասնում թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անտառով անցնում 200 մ, հասնում ժայռի եզրին գտնվող թիվ 8 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անտառով անցնում 555 մ, հասնում թիվ 9 սահմանակետին, ապա անտառեզրի ոլորաններով թեքվում է հարավ-արևմուտք, հատում գետակը և թիվ 10-15 սահմանակետերով անցնելով 1182 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը անտառի եզրով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 492 մ, հասնում թիվ 17 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 483 մ, հասնում թիվ 18 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ, անցնում 191 մ, հասնում ժայռի գագաթին տեղադրված թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը ժայռով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 141 մ, հասնում թիվ 20 սահմանակետին, ապա կրկին թեքվում է հարավ-արևելք, ժայռերի գագաթներով, թիվ 21-23 սահմանակետերով անցնում 875 մ, հասնում բնակավայրի հարավ-արևելյան եզրագծի մոտ տեղադրված թիվ 24 սահմանակետին: Այստեղից սահմանագիծը բնակավայրի եզրագծով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում գետակը, թիվ 25-26 սահմանակետերով անցնում 354 մ, հասնում ժայռի վրա գտնվող թիվ 27 սահմանակետին, հետո թեքվում է հյուսիս-արևմուտք, թիվ 28 սահմանակետով անցնում 253 մ, հասնում ճանապարհի եզրի թիվ 29 սահմանակետին, որտեղից ճանապարհով շարունակվում է նույն ուղղությամբ, թիվ 30 սահմանակետով անցնում 396 մ, հասնում թիվ 31 սահմանակետին: Թիվ 31 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս, քիչ դեպի հյուսիս-արևելք, թիվ 32 սահմանակետով անցնում 245 մ, հասնում գետի և ճանապարհի հատման տեղում գտնվող թիվ 33 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս-արևմուտք, ճանապարհների հատման տեղով, թիվ 34-35 սահմանակետերով անցնում 1401 մ, հասնում թիվ 36 սահմանակետին: Այստեղից սահմանագիծը անտառի եզրագծով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 37-38 սահմանակետերով անցնում 674 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 39 սահմանակետին, ապա ձորով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 40 սահմանակետով անցնում 579 մ, հասնում ձորի և ճանապարհի հատման տեղում գտնվող թիվ 41 սահմանակետին, այստեղից ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անտառի եզրագծով և ճանապարհով, թիվ 42-43 սահմանակետերով անցնում 827 մ, հասնում ժայռի գլխին գտնվող թիվ 44 սահմանակետին: Թիվ 44 սահմանակետից սահմանագիծը ժայռերի գլխով հատելով գետը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 45 սահմանակետով անցնում 532մ, հասնում ձորի եզրին

գտնվող Կապան քաղաքային, Ձորաստան և Լեռնաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետին:

«Է»-«Ը» սահմանագծի ընդհանուր երկարությունը 10767 մ է:

### **ԿԱՊԱՆԻ – ԱՌԱՋԱԶՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ը»-«Ա»**

Կապան քաղաքային, Առաջաձոր և Նորաշենիկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1 սահմանակետով անցնում 404 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, թեքվում արևելք, անցնում 141 մ, հասնում թիվ 3 սահմանակետին, ապա կրկին հարավ-արևելք, թիվ 4 սահմանակետով անցնում 328 մ, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը անտառի եզրով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 245 մ, հասնում թիվ 6 սահմանակետին, թեքվում արևմուտք, դաշտային ճանապարհով անցնում 330 մ, հասնում թիվ 7 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 8 սահմանակետով անցնում 354 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը անտառեզրի ոլորապտույտներով, ժայռերի կատարներով, թիվ 10-22 սահմանակետերով անցնում 3357 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրի թիվ 23 սահմանակետին: Թիվ 23 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, անցնում 235 մ, հասնում թիվ 24 սահմանակետին, այստեղից անտառի եզրով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 25-26 սահմանակետերով անցնում 1446 մ, հասնում թիվ 27 սահմանակետին: Թիվ 27 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 28 սահմանակետով անցնում 459 մ, հասնում անտառեզրի թիվ 29 սահմանակետին: Թիվ 29 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անտառով անցնում 315 մ, հասնում թիվ 30 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 31 սահմանակետով անցնում 1177 մ, հասնում թիվ 32 սահմանակետին: Թիվ 32 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 33 սահմանակետով անցնում 930 մ, հասնում թիվ 34 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 35-37 սահմանակետերով անցնում 1155 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 38 սահմանակետին: Թիվ 38 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 301 մ, հասնում թիվ 39 սահմանակետին: Թիվ 39 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս, թիվ 40-41 սահմանակետերով անցնում 782 մ, հասնում Կապան քաղաքային, Առաջաձոր և

Ձորաստան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետին:

«Ը»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 11959 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱՎԿԵՐՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Դաստակերտ քաղաքային համայնքը գտնվում է մարզի հյուսիսային մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Տորունիք գյուղական համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Լոր գյուղական համայնքին, «Գ»-«Դ» հատվածով՝ Նոր Աստղաբերդ գյուղական համայնքին, հարավից «Դ»-«Ե»՝ հատվածով՝ պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն), արևմուտքից «Ե»-«Ա» հատվածով՝ Նժդեհ գյուղական համայնքին:

### **ԴԱՏԱՎԿԵՐՏ - ՏՈՐՈՒՆԻՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Դաստակերտ քաղաքային, Նժդեհ և Տորունիք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը առվով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 654մ, հասնում թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 2 սահմանակետով անցնում 1999մ, հասնում Դաստակերտ քաղաքային, Լոր և Տորունիք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2653մ է:

### **ԴԱՏԱՎԿԵՐՏ- ԼՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Դաստակերտ քաղաքային, Լոր և Տորունիք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 854 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 768 մ, հասնում է թիվ 2 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհով անցնում է 527 մ, հասնում է թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, կրկին հատում է դաշտային ճանապարհը, թիվ 4 սահմանակետով անցնում 2215 մ, հասնում է թիվ 5 սահմանակետին, այնուհետև նույն ուղղությամբ անցնում է 774 մ, հասնում է թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-

արևմուտք, հատում գետակը, անցնում 984 մ, հասնում է թիվ 7 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, հատում ձորը, անցնում 748 մ, հասնում է թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, գետակով անցնում 807 մ, հասնում է գետի ավին գտնվող թիվ 9 սահմանակետին, հետո թեքվում է հյուսիս-արևմուտք, գետով անցնում է 995 մ, հասնում թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է կրկին հյուսիս-արևմուտք, անցնում 131 մ, հասնում թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, թիվ 12-15 սահմանակետերով անցնում 2549 մ, հանում է թիվ 16 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ապա հարավ-արևմուտք, հատում է ջրբաժանը, հետո առվակները և 17-27 սահմանակետերով անցնում է 1591 մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 28 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ, դաշտային ճանապարհով, թիվ 29-31 սահմանակետերով անցնում 713մ, հանում թիվ 32 սահմանակետին: Թիվ 32 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, հատում է ջրբաժանը, ապա ձորակներ, առուներ, թիվ 33-47 սահմանակետերով անցնելով 1760 մ, հասնում Դաստակերտ քաղաքային, Լոր և Նոր Աստղաբերդ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 15416 մ է:

#### **ՂԱՍՏԱԿԵՐՏ -ՆՈՐ ԱՍՏՂԱԲԵՐԴ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Գ»-«Դ»**

Դաստակերտ քաղաքային Լոր և Նոր Աստղաբերդ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհով հատելով ձորակներ, բարձունքներ, առուներ, թիվ 1-35 սահմանակետերով անցնելով 2446մ, հասնում է Դաստակերտ քաղաքային համայնքի, Նոր Աստղաբերդ գյուղական համայնքի և պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2446մ է:

#### **ՂԱՍՏԱԿԵՐՏ–ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Դ»-«Ե»**

«Դ»-«Ե» հատվածով սահմանագիծը համընկնում է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանի հետ:

### **ԴԱՍՏԱԿԵՐՏ - ՆԺԴԵՅ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Ե»-«Ա»**

Դաստակերտ քաղաքային, Նժդեհ և Տորունիք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, հատում փլվածքներ, ձորով, թիվ 1-8 սահմանակետերով անցնում 1149մ, հասնում թիվ 9 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 10 սահմանակետով հատում միջհամայնքային ճանապարհը և Կիշկոլտի գետը, անցնում 311մ, հասնում թիվ 11 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է արևմուտք, թիվ 12-15 սահմանակետերով անցնում 724մ, հասնում է թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, թիվ 17-21 սահմանակետերով անցնում 827մ, հասնում է թիվ 22 սահմանակետին, այդտեղից կրկին թեքվում է հյուսիս-արևմուտք, թիվ 23-25 սահմանակետերով անցնում 413մ, հասնում է Այրի գետի ափին գտնվող թիվ 26 սահմանակետին: Թիվ 26 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հատում ջրբաժանը, թիվ 27-33 սահմանակետերով անցնում է 2045մ, հասնում թիվ 34 սահմանակետին, թիվ 34 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 541մ, հասնում թիվ 35 սահմանակետին, որից հետո սահմանագիծը, հատելով ձորակը, թիվ 36 սահմանակետով անցնում է 440մ, հասնում թիվ 37 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 539մ, հանում թիվ 38 սահմանակետին: Թիվ 38 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ձորով, թիվ 39 սահմանակետով անցնում 567մ, հասնում թիվ 40 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհով, թիվ 41-42 սահմանակետերով անցնում 1014մ, հասնում թիվ 43 սահմանակետին: Թիվ 43 սահմանակետից սահմանագիծը դարձյալ թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 443մ, հասնում թիվ 44 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, անցնում 526մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 45 սահմանակետին: Թիվ 45 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, դաշտային ճանապարհով, ապա ձորակով թիվ 46-51 սահմանակետերով անցնում 2092մ, հասնում թիվ 52 սահմանակետին: Թիվ 52 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, հատելով բարձրունքներ, բլուրներ, և ձորակներ, թիվ 53-95 սահմանակետերով անցնում է 2589մ, հասնում է բլրի գագաթին գտնվող թիվ 96 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 97-

99 սահմանակետերով անցնում 147մ, հասնում թիվ 100 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևմուտք, ձորով, բարձրունքներով թիվ 101-125 սահմանակետերով անցնում է 2888մ, հասնում թիվ 126 սահմանակետին: Թիվ 126 սահմանակետից սահմանագիծը կրկին թեքվում է հարավ-արևմուտք և դաշտային ճանապարհով թիվ 127-136 սահմանակետերով անցնում 1265մ, հասնում Դաստակերտ քաղաքային, Նժդեհ գյուղական համայնքների և պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն), տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 18520մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱԶԱՐԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Քաջարան քաղաքային համայնքը գտնվում է մարզի հարավարևմտյան մասում:

Համայնքը հյուսիսից և արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Լեռնաձոր գյուղական համայնքին, հարավից «Բ»-«Գ» հատվածով՝ Տաշտուն գյուղական համայնքին, արևմուտքից և հյուսիսից «Գ»-«Ա» հատվածով՝ Քաջարան գյուղական համայնքին:

### **ՔԱԶԱՐԱՆ – ԼԵՌՆԱԶՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Քաջարան քաղաքային, Լեռնաձոր և Քաջարան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը, որը գտնվում է դաշտային ճանապարհի եզրին, դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևելք, հասնում մինչև Ողջի գետի ձախակողմյան վտակը, ապա նույն ճանապարհով թեքվում դեպի հարավ-արևելք, թիվ 1-4 սահմանակետերով անցնում է 693 մ, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 6 սահմանակետով անցնում 347մ, հասնում թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս, անցնում 252 մ, հասնում դաշտային ճանապարհի և ձորի հատման տեղում գտնվող թիվ 8 սահմանակետին, այդտեղից դաշտային ճանապարհով թեքվում դեպի հարավ-արևելք, թիվ 9-13 սահմանակետերով անցնում 850 մ, հասնում ճանապարհի վրա տեղադրված թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ջրբաժանով, թիվ 15-19 սահմանակետերով անցնում 1139 մ, հասնում Ողջի գետի ափին տեղադրված թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում Ողջի գետը, թիվ 21 սահմանակետով անցնում 2313 մ, հասնում թիվ 22 սահմանակետին: Թիվ 22 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 23 սահմանակետով անցնում 2646 մ, հասնում Քաջարան քաղաքային, Լեռնաձոր և Տաշտուն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 8240 մ է:

**ՔԱԶԱՐԱՆ – ՏԱՇՏՈՒՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Քաջարան քաղաքային, Տաշտուն և Քաջարան գյուղական համայնքների տարածքների բաժանման՝ ճանապարհի եզրին գտնվող <<Ա>> հանգուցային սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 1 սահմանակետով անցնում 662մ, հասնում 2592.0 մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող Քաջարան քաղաքային, Տաշտուն և Լեռնաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման <<Բ>> հանգուցային սահմանակետին:

<<Բ>>-<<Գ>> սահմանագծի ընդհանուր երկարությունը 662 մ է:

**ՔԱԶԱՐԱՆ ՔԱՂԱՔ – ՔԱԶԱՐԱՆ ԳՅՈՒՂ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Ա»**

Քաջարան քաղաքային, Քաջարան և Լեռնաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է դաշտային ճանապարհի եզրին, սահմանագիծը թեքվում է արևմուտք, ճանապարհով անցնում 130 մ, հասնում թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 382 մ, հասնում դաշտային ճանապարհների հատման կետում գտնվող թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 206 մ, հասնում թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, դաշտային ճանապարհով, թիվ 4-8 սահմանակետերով անցնում է 862 մ, հասնում թիվ 9 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 335 մ, հասնում թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 300 մ, հասնում թիվ 11 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հարավ, անցնում 268 մ, հասնում թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, անցնում 112 մ, հասնում թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, թիվ 14 սահմանակետով անցնում 320 մ, հասնում թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, թիվ 16 սահմանակետով անցնում 508 մ, հասնում թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 18-20 սահմանակետերով անցնում 272 մ, հասնում թիվ 21 սահմանակետին, որը գտնվում է

Ողջի գետի ափին: Այնուհետև սահմանագիծը թեքվում է արևմուտք, գետի հոսանքի հակառակ ուղղությամբ, թիվ 22-54 սահմանակետերով անցնում 3136 մ, հասնում թիվ 55 սահմանակետին: Թիվ 55 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 56-62 սահմանակետերով անցնում է 4909 մ, հասնում թիվ 63 սահմանակետին: Թիվ 63 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անցնում 466 մ, հասնում թիվ 64 սահմանակետին: Թիվ 64 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 998 մ, հասնում 2605.5 մ նիշ ունեցող բլրի գագաթի Քաջարան քաղաքային, Քաջարան և Տաշտուն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 13206 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱԳԱՐԱԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Ազարակ գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավարևելյան մասում:

Համայնքը հյուսիս-արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Եղվարդ գյուղական համայնքին, հարավ-արևելքից և հարավ-արևմուտքից «Բ»-«Գ» հատվածով՝ պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն), հյուսիս-արևմուտքից «Գ»-«Դ» հատվածով՝ Խդրանց գյուղական համայնքին, «Դ»-«Ա» հատվածով՝ Ուժանիս գյուղական համայնքին:

### **ԱԳԱՐԱԿ - ԵՂՎԱՐԴ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Ազարակ, Եղվարդ և Ուժանիս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը Ուժանիս-Եղվարդ-Ազարակ խճուղով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-17 սահմանակետերով անցնում 2230 մ, հասնում թիվ 18 սահմանակետին, որը գտնվում է Ուժանիս-Եղվարդ-Ազարակ խճուղու եզրին, այստեղից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ջրբաժանով, թիվ 19-21 սահմանակետերով անցնում 1162 մ, հատելով դաշտային ճանապարհներ և ձորեր, հասնում «Ծավիկ» կոչվող եռանկյունաչափական կետին, որը թիվ 22 սահմանակետն է: Թիվ 22 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևելք, անցնում 247 մ, հասնում Ազարակ, Եղվարդ գյուղական համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն), տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3639 մ է:

### **ԱԳԱՐԱԿ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ)**

#### **ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

«Բ»-«Գ» հատվածով սահմանագիծը հանդնկնում է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանի հետ:

### **ԱԳԱՐԱԿ – ԽԴՐԱՆՑ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Ազարակ, Խդրանց և Ուժանիս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 234 մ, հասնում է թիվ 1 սահմանակետին, ապա նույն ուղղությամբ, թեքվելով քիչ դեպի հարավ, հատում է Ազարակ-Խդրանց միջհամայնքային ճանապարհը, թիվ 2-6 սահմանակետերով անցնում 2044 մ, հասնում ջրբաժանի վրա գտնվող թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից, սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, հատում գետը, անցնում 772 մ, հասնում թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 145 մ, հասնում թիվ 9 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, անցնում 114 մ, հասնում թիվ 10 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 11-12 սահմանակետերով անցնում 299 մ, հասնում Ազարակ, Խդրանց գյուղական համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3608 մ է:

#### **ԱԳԱՐԱԿ – ՈՒՇԱՆԻՍ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ա»**

Ազարակ, Ուժանիս և Եղվարդ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Ուժանիս-Եղվարդ միջհամայնքային ճանապարհի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում դաշտային ճանապարհը, թիվ 1-2 սահմանակետերով անցնելով 1004 մ, հասնում է բլրագագաթին գտնվող Ազարակ, Ուժանիս և Խդրանց գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1004 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱԼՎԱՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՍԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Ալվանք գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավային մասում:

Համայնքը արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Ծավ գյուղական համայնքին, «Բ»-«Գ» հատվածով՝ Շվանիձոր գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ պետական սահման (Իրանի Իսլամական Հանրապետություն), արևմուտքից «Դ»-«Ե» հատվածով՝ Մեղրի քաղաքային համայնքին, արևմուտքից և հյուսիսից «Ե»-«Ա» հատվածով՝ Վարդանիձոր գյուղական համայնքին:

### **ԱԼՎԱՆՔ – ԾԱՎ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Ալվանք, Ծավ և Վարդանիձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է 3023.9 մ նիշ ունեցող լեռան գագաթին, սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-5 սահմանակետերով անցնում 1965 մ, հասնում 2821.0 մ նիշ ունեցող լեռան գագաթին գտնվող թիվ 6 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, անցնում 438 մ, հասնում Ալվանք, Ծավ և Շվանիձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2403 մ է:

### **ԱԼՎԱՆՔ – ՇՎԱՆԻԶՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Ալվանք, Ծավ և Շվանիձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-2 սահմանակետերով անցնում 1980 մ, հասնում 2103.0 մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 4-5 սահմանակետերով, 1921.0 մ նիշ ունեցող բարձունքով անցնում 1365 մ, հասնում թիվ 6 սահմանակետին, որտեղից թեքվում է նույն ուղղությամբ, անցնում 918 մ, հասնում բարձունքի վրա գտնվող թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, անցնում 56 մ, հասնում թիվ 8 սահմանակետին, որտեղից բարձունքներով թեքվում է հարավ-արևելք, թիվ 9-10

սահմանակետերով անցնում 928 մ, հասնում թիվ 11 սահմանակետին, որտեղից բարձունքներով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, թիվ 12-16 սահմանակետերով անցնում 1150 մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է արևելք, անցնում 613 մ, հասնում թիվ 18 սահմանակետին, որտեղից ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 19-20 սահմանակետերով անցնում 988 մ, հասնում 1333.0 մ միջ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 21 սահմանակետին: Թիվ 21 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանով անցնում 541 մ, հասնում թիվ 22 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, անցնում 364 մ, հասնում 1252.3 մ միջ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 23 սահմանակետին, այնուհետև ջրբաժանով թեքվում է դեպի հարավ, թիվ 24 սահմանակետով անցնում 1169 մ, հասնում թիվ 25 սահմանակետին: Թիվ 25 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 312 մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 26 սահմանակետին, այնուհետև թեքվում դեպի հարավ-արևելք, անցնում 206 մ, հասնում հաջորդ բլրի վրա գտնվող թիվ 27 սահմանակետին, ապա նույն ուղղությամբ, թիվ 28-30 սահմանակետերով անցնում է 2122 մ, հասնում թիվ 31 սահմանակետին: Թիվ 31 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 32-33 սահմանակետերով անցնում 1724 մ, հասնում Ալվանք, Շվանիձոր գյուղական համայնքների և պետական սահման (Իրանի Իսլամական Հանրապետություն) տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 14440 մ է:

### **ԱԼՎԱՆՔ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

«Գ»-«Դ» հատվածով սահմանագիծը համընկնում է Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության պետական սահմանի հետ:

### **ԱԼՎԱՆՔ – ՄԵՂՐԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

Ալվանք, Վարդանիձոր գյուղական և Մեղրի քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ, թիվ 1-7 սահմանակետերով անցնում 2717 մ,

հատելով երկաթգիծը, հասնում Ալվանք գյուղական, Մեղրի քաղաքային համայնքների և պետական սահման (Իրանի Իսլամական Հանրապետություն) տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2717 մ է:

### **ԱԼՎԱՆՔ – ՎԱՐՂԱՆԻՉՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Ա»**

Ալվանք, Վարդանիձոր և Ծավ գյուղական համայնքների տարածքների բաժանման 3023.9 մ բարձրություն ունեցող գագաթին գտնվող «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա արևմուտք, անցնում 2570 մ, հատելով դաշտային ճանապարհը, հասնում 2521.0 մ բարձրություն ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 495 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, որտեղից ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ, թիվ 2-5 սահմանակետերով անցնում 1228 մ, հասնում ջրհավաքի եզրին գտնվող թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը ջրհավաքով թեքվում է դեպի հարավ, թիվ 7 սահմանակետով անցնում 409 մ, հասնում թիվ 8 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք, անցնում 276 մ, հասնում թիվ 9 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 10 սահմանակետով անցնում 945 մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 11 սահմանակետին, ապա թեքվում դեպի հարավ, անցնում 304 մ, հասնում թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը ջրհավաքով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 13-25 սահմանակետերով անցնում 4381 մ, հասնում 1665.4 մ նիշ ունեցող երկու ջրհավաքների հատման տեղում գտնվող թիվ 26 սահմանակետին: Թիվ 26 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 544 մ, հասնում թիվ 27 սահմանակետին, այնուհետև ջրբաժանով թեքվում է հարավ-արևելք, անցնում 509 մ, հասնում թիվ 28 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 354 մ, հասնում թիվ 29 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք, ջրբաժանով անցնում 418 մ, հասնում 2194.0 մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 30 սահմանակետին: Թիվ 30 սահմանակետից սահմանագիծը նույն ջրբաժանով թեքվում է կրկին հարավ-արևելք, անցնում 594 մ, հասնում թիվ 31 սահմանակետին: Թիվ 31 սահմանակետից սահմանագիծը ժայռերով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 32-45 սահմանակետերով անցնում 1810 մ, հասնում թիվ 46 սահմանակետին, որտեղից լանջերով թեքվում է նույն ուղղությամբ, հատում ջրբաժանը, թիվ 47-48 սահմանակետերով անցնում 855 մ, հասնում թիվ 49 սահմանակետին: Թիվ 49

սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 50-53 սահմանակետերով անցնում 1090 մ, հասնում լեռան գագաթին գտնվող թիվ 54 սահմանակետին, որտեղից բարձունքներով թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ-արևմուտք, թիվ 55-57 սահմանակետերով անցնում 1033 մ, հասնում լեռան գագաթին գտնվող թիվ 58 սահմանակետին: Թիվ 58 սահմանակետից սահմանագիծը թեք լանջով և ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 59-60 սահմանակետերով անցնում 1068 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 61 սահմանակետին: Թիվ 61 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 139 մ, որտեղից թեքվում է հարավ, անցնում 159 մ, հասնում Ալվանք, Վարդանիձոր գյուղական և Մեղրի քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 19181 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՎՆԵՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Ակներ գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսային մասում:

Համայնքը հյուսիսից և արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Վերիշեն գյուղական համայնքին, արևելքից և հարավից «Բ»-«Գ» հատվածով՝ Գորիս քաղաքային համայնքին, հարավից և արևմուտքից «Գ»-«Դ» հատվածով՝ Շինուհայր գյուղական համայնքին, հարավ-արևմուտքից «Դ»-«Ե» հատվածով՝ Հարժիս գյուղական համայնքին, արևմուտքից «Ե»-«Զ» հատվածով՝ Վաղատնի գյուղական համայնքին, «Զ»-«Ա» հատվածով՝ պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն):

### **ԱՎՆԵՐ – ՎԵՐԻՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Ակներ, Վերիշեն գյուղական համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման, լեռան գագաթին գտնվող «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 341 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից լանջերով թեքվում է դեպի արևելք, թիվ 2-8 սահմանակետերով անցնում 2784 մ, հասնում լեռան գագաթին գտնվող թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը բարձունքներով թեքվում է նույն ուղղությամբ, թիվ 10-17 սահմանակետերով անցնում 3413 մ, հասնում թիվ 18 սահմանակետին: Թիվ 18 սահմանակետից սահմանագիծը կրկին բարձունքներով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ապա հարավ-արևելք, թիվ 19-20 սահմանակետերով անցնում 1349 մ, հասնում թիվ 21 սահմանակետին: Թիվ 21 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ջրբաժանով, բարձունքներով, թիվ 22-27 սահմանակետերով անցնում է 3765 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 28 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, հատում գետակը, անցնում 351 մ, հասնում թիվ 29 սահմանակետին, այնուհետև թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 205 մ, հասնում թիվ 30 սահմանակետին: Թիվ 30 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևելք, ապա հարավ-արևելք, հատում առուն, դաշտային ճանապարհը, Գելիքերց սարի լանջով, թիվ 31-34 սահմանակետերով անցնում է 1263 մ, հասնում թիվ 35 սահմանակետին, կրկին

թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 423 մ, հասնում թիվ 36 սահմանակետին: Թիվ 36 սահմանակետից սահմանագիծը բնակավայրի եզրագծով թեքվում է դեպի հյուսիս, անցնում 92 մ, հասնում թիվ 37 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք, թիվ 38-39 սահմանակետերով անցնում 410 մ, հասնում թիվ 40 սահմանակետին: Թիվ 40 սահմանակետից սահմանագիծը բնակավայրի եզրագծով թեքվում է հարավ-արևելք, թիվ 41-47 սահմանակետերով անցնում 831 մ, հասնում թիվ 48 սահմանակետին: Թիվ 48 սահմանակետից սահմանագիծը բնակավայրի եզրագծով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 49-50 սահմանակետերով անցնում 753 մ, հասնում Ակներ, Վերիշեն, գյուղական և Գորիս քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 15980 մ է:

### **ԱԿՆԵՐ – ԳՈՐԻՍ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Ակներ, Վերիշեն գյուղական և Գորիս քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անտառի եզրագծով, դաշտային ճանապարհով, թիվ 1-4 սահմանակետերով անցնում 606 մ, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է կրկին դեպի հարավ-արևելք, անտառի եզրով, թիվ 6-48 սահմանակետերով և Գորիս-Լաչին միջպետական նշանակության ճանապարհով անցնում 3027 մ, հասնում թիվ 49 սահմանակետին: Թիվ 49 սահմանակետից սահմանագիծը լանջով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 50-53 սահմանակետերով անցնում 3143 մ, հատելով դաշտային ճանապարհներ, ձորեր, հասնում թիվ 54 սահմանակետին: Թիվ 54 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, անցնում 587 մ, հատելով դաշտային ճանապարհները, առուն, հասնում «Գուլիխուր» սարի գագաթին գտնվող թիվ 55 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 336 մ, հասնում թիվ 56 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանով անցնում 594 մ, հասնում թիվ 57 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա արևմուտք, թիվ 58-59 սահմանակետերով անցնում 1400 մ, հասնում թիվ 60 սահմանակետին: Թիվ 60 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 481 մ, հասնում ջրհավաքի եզրին գտնվող թիվ 61 սահմանակետին, որտեղից ջրհավաքով թեքվում է հարավ-արևելք, ապա հարավ, թիվ 62-73 սահմանակետերով անցնում 1160 մ, հասնում թիվ 74 սահմանակետին: Այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ, թիվ 75

սահմանակետով անցնում 931 մ, հատելով ձորը և դաշտային ճանապարհները, հասնում թիվ 76 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 63 մ, հասնում Ակներ, Շինուհայր գյուղական և Գորիս քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 12329 մ է:

#### **ԱԿՆԵՐ – ՇԻՆՈՒՀԱՅՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ`«Գ»-«Դ»**

Ակներ, Շինուհայր և Հարժիս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը լանջերով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, հատելով ճանապարհներ և փոքրիկ ձորքակներ, թիվ 1-8 սահմանակետերով անցնում է 736մ, հասնում թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը լանջերով թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով դաշտային ճանապարհներ, առուներ, թիվ 10-34 սահմանակետերով անցնում է 1911, հասնում թիվ 35 սահմանակետին, որը գտնվում է թմբի վրա: Թիվ 35 սահմանակետից սահմանագիծը թեքվում նույն ուղղությամբ, անցնում է 422մ, հասնում հաջորդ թմբի գագաթին գտնվող թիվ 36 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, լանջերով, ձորակներով թիվ 37-39 սահմանակետերով անցնում 1576մ, հասնում թիվ 40 սահմանակետին: Թիվ 40 սահմանակետից սահմանագիծը լանջով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 549մ, հասնում թիվ 41 սահմանակետին, որտեղից լանջերով, բարձրունքներով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 42-43 սահմանակետերով անցնում 2691մ, հատելով ձորակներ, դաշտային ճանապարհներ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 44 սահմանակետին: Թիվ 44 սահմանակետից սահմանագիծը թեք լանջերով թեքվում է արևելք, անցնում 1071մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 45 սահմանակետին, այնուհետև դաշտային ճանապարհով թեքվում է հարավ-արևելք, թիվ 46-50 սահմանակետերով անցնում 1696մ, հասնում գետի ափին գտնվող Ակներ, Շինուհայր գյուղական և Գորիս քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 10652մ է:

#### **ԱԿՆԵՐ – ՀԱՐժԻՍ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ`«Դ»-«Ե»**

Ակներ, Չարժիս և Վաղատնի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է սարալանջին, սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, լանջով անցնում 251 մ, հասնում թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը լանջով թեքվում է հարավ-արևելք, թիվ 2-19 սահմանակետերով անցնում 1123 մ, հասնում Ակներ, Չարժիս և Շինուհայր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1374 մ է:

### **ԱԿՆԵՐ – ՎԱՂԱՏԻՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ`«Ե»-«Զ»**

Ակներ, Վաղատին գյուղական համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Չանրապետություն) տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Սյունիքի լեռնաշղթայի լեռան գագաթին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 829 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից լեռնաշղթայով թեքվում է հարավ, անցնում 1423 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, այնուհետև լանջով թեքվում է հարավ-արևելք, անցնում 1076 մ, հասնում Ակներ, Վաղատին և Չարժիս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3327 մ է:

### **ԱԿՆԵՐ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԱԴՐԲԵՋԱՆԻ ՉԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ`«Զ»-«Ա»**

«Զ»-«Ա» հատվածով սահմանագիծը հանընկնում է Չայաստանի Չանրապետության և Ադրբեջանի Չանրապետության պետական սահմանի հետ:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՂԻՏՈՒ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Աղիտու գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսային մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն), արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Նորավան գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Վաղատնի գյուղական համայնքին, հարավից և արևմուտքից «Դ»-«Ե» հատվածով՝ Ույծ գյուղական համայնքին, արևմուտքից «Ե»-«Ա» հատվածով՝ Իշխանասար գյուղական համայնքին:

### **ԱՂԻՏՈՒ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԱՂՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը հանդնկնում է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանի հետ:

### **ԱՂԻՏՈՒ – ՆՈՐԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Աղիտու, Նորավան գյուղական համայնքների և Ադրբեջանի Հանրապետության տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ձորով անցնում 8468 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հարավ, թիվ 2-3 սահմանակետերով անցնում 252 մ, հասնում է թիվ 4 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, անցնում է 87 մ, հասնում թիվ 5 սահմանակետին, ապա նույն ուղղությամբ անցնում է 295մ, հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 7-12 սահմանակետերով անցնում 1023 մ, հասնում թիվ 13 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թիվ 14 սահմանակետով անցնում է 562 մ, հասնում թիվ 15 սահմանակետին, հետո թեքվում հարավ-արևելք, թիվ 16-19 սահմանակետերով անցնում է 760 մ, հասնում է թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից

սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 21-44 սահմանակետերով անցնում 3352 մ, հասնում Գորիս գնացող խճուղու եզրին գտնվող թիվ 45 սահմանակետին: Թիվ 45 սահմանակետից սահմանագիծը Նորավան գնացող ճանապարհով թեքվում է դեպի հարավ, թիվ 46-52 սահմանակետերով անցնում է 1121 մ, հասնում թիվ 53 սահմանակետին, որը գտնվում է ձորի եզրին, հետո ձորով թեքվում է հարավ, հատում Աղիտու, Նորավան ճանապարհը, թիվ 54-76 սահմանակետերով անցնում 2464 մ, հասնում թիվ 77 սահմանակետին: Թիվ 77 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, հատելով Աղիտու-Վաղատին միջհամայնքային ճանապարհը, ձորով անցնում է 2070 մ, հասնում Աղիտու, Նորավան և Վաղատին գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 20454 մ է:

### **ԱՂԻՏՈՒ – ՎԱՂԱՏԻՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Աղիտու, Նորավան և Վաղատին գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը գետով թեքվում է դեպի հարավ, թիվ 1-10 սահմանակետերով անցնում 560 մ, հասնում Որոտան գետի ափին գտնվող Աղիտու, Ույծ գյուղական և Սիսիան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 560 մ է:

### **ԱՂԻՏՈՒ – ՈՒՅԾ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

Աղիտու, Ույծ գյուղական և Սիսիան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 443 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից նույն ուղղությամբ, հատելով ձորակներ, ջրբաժաններ, առուներ թիվ 2-6 սահմանակետով անցնում է 2181 մ, հասնում թիվ 7 սահմանակետին, ապա թեքվում է քիչ դեպի արևմուտք, թիվ 8-11 սահմանակետերով անցնում 511 մ, հասնում թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 13 սահմանակետով անցնում 862 մ, հասնում թիվ 14 սահմանակետին, հետո կրկին թեքվում է հարավ-արևմուտք, ճանապարհով, թիվ 15-20 սահմանակետերով անցնում 1082 մ, հասնում Անգեղակոթ-Գորիս միջհամայնքային ճանապարհի հետ հատման թիվ 21 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք, անցնում 333 մ, հասնում է թիվ 22 սահմանակետին, թիվ 22

սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 180 մ, հասնում թիվ 23 սահմանակետին: Թիվ 23 սահմանակետից սահմանագիծը թիվ 24-33 սահմանակետերով անցնում է 2570 մ, հասնում թիվ 34 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, հատվում է միջհամայնքային ճանապարհին, թիվ 35-47 սահմանակետերով, դաշտային ճանապարհով անցնելով 2414 մ, հասնում է թիվ 48 սահմանակետին, որը գտնվում է Որոտան գետի ափին, որտեղից սահմանագիծը գետի հոսանքին հակառակ ուղղությամբ, թիվ 49-59 սահմանակետերով անցնում է 1184 մ, հասնում թիվ 60 սահմանակետին: Թիվ 60 սահմանակետից սահմանագիծը անցնելով 13 մ, հասնում է թիվ 61 սահմանակետին, ապա թեքվում հարավ-արևելք, թիվ 62-63 սահմանակետերով, Ույծ բնակավայրի եզրով անցնում է 120 մ, հասնում է թիվ 64 սահմանակետին, որտեղից շրջանցելով ջերմոցի տարածքը, թիվ 65-66 սահմանակետերով անցնում է 194 մ, հասնում թիվ 67 սահմանակետին: Թիվ 67 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, 68-74 սահմանակետերով անցնում է 604 մ, հասնում թիվ 75 սահմանակետին: Թիվ 75 սահմանակետից սահմանագիծը ճանապարհով անցնող ջրատար փակ խողովակին զուգահեռ թեքվում է դեպի արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք, թիվ 76-82 սահմանակետերով անցնելով 872 մ, հասնում ճանապարհի եզրին գտնվող թիվ 83 սահմանակետին: Թիվ 83 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 447 մ, հասնում Աղիտու, Ույծ գյուղական և Սիսիան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 13567 մ է:

#### **ԱՂԻՏՈՒ – ՍԻՍԻԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Ե»-«Զ»**

Աղիտու, Իշխանասար գյուղական և Սիսիան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը, որը գտնվում է Սիսիան ջրանցքի եզրին, ջրանցքով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 3302 մ, հասնում է թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվելով հարավ-արևելք ապա արևմուտք, թիվ 2-5 սահմանակետերով անցնում է 473 մ, հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 157 մ, հասնում Աղիտու, Ույծ գյուղական և Սիսիան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3392 մ է:

#### **ԱՂԻՏՈՒ – ԻՇՄԱՐՍԱՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Զ»-«Ա»**

Աղիտու, Իշխանասար գյուղական համայնքների և Ադրբեջանի Չանրապետության տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, դաշտային ճանապարհով, թիվ 1 սահմանակետով անցնում 482 մ, հասնում է թիվ 2 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, թիվ 3-18 սահմանակետերով անցնում 2002 մ, հասնում է թիվ 19 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 20-34 սահմանակետերով անցնելով 2034 մ, հասնում է թիվ 34 սահմանակետին: Թիվ 34 սահմանակետից սահմանագիծը գետի հունով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 6541 մ, հասնում է թիվ 36 սահմանակետին: Թիվ 36 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 1282 մ, հասնում է Աղիտու, Իշխանասար գյուղական և Սիսիան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 12341 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՂՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Աղվանի գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավարևմտյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Հալիձոր գյուղական համայնքին, «Բ»-«Գ» հատվածով՝ Բարձրավան գյուղական համայնքին, արևելքից «Գ»-«Դ» հատվածով՝ Տանձավեր գյուղական համայնքին, հարավից «Դ»-«Ե» հատվածով՝ Անտառաշատ գյուղական համայնքին, արևմուտքից «Ե»-«Զ» հատվածով՝ Քաշունի գյուղական համայնքին, «Զ»-«Ա» հատվածով՝ Տանձատափ գյուղական համայնքին:

### **ԱՂՎԱՆԻ – ՀԱԼԻԶՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Աղվանի, Տանձատափ և Հալիձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային «Գոլուկայա» կոչվող եռանկյունաչափական սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 202մ, հասնում թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, հատում ջրբաժանը, անցնում է 463մ, հասնում է թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 3-4 սահմանակետերով անցնում 257մ, հասնում թիվ 5 սահմանակետին, որը գտնվում է ժայռի եզրին, ապա թեքվում է արևելք, թիվ 6 սահմանակետով անցնում 277մ, հասնում Աղվանի, Հալիձոր և Տանձատափ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1199 մ է:

### **ԱՂՎԱՆԻ – ԲԱՐՉՐԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Աղվանի, Հալիձոր և Բարձրավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թիվ 1-5 սահմանակետերով, ճանապարհով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 810 մ, հասնում երկու ճանապարհների հատման տեղում գտնվող Աղվանի, Տանձավեր և

Բարձրավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 827 մ է:

### **ԱՂՎԱՆԻ – ՏԱՆՃԱՎԵՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Գեղի, Նոր Աստղաբերդ և Լոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 155մ, հասնում է թիվ 1 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 2-7 սահմանակետերով, ձորով անցնում է 805մ, հասնում է ձորի եզրի թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք և անտառի եզրով թիվ 9-19 սահմանակետերով անցնում է 676մ, հասնում է թիվ 20 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, դաշտային ճանապարհով թիվ 21-24 սահմանակետերով անցնում է 857մ, հասնում է թիվ 25 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը ձորով թիվ 26-29 սահմանակետերով անցնում է 264մ, հասնում է թիվ 30 սահմանակետին, որը գտնվում է անտառի եզրին: Թիվ 30 սահմանակետից սահմանագիծը անտառի եզրով, թիվ 31-46 սահմանակետերով անցնում է 2836մ, հասնում է թիվ 47 սահմանակետին: Թիվ 47 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, և թիվ 48, 49 սահմանակետերով անցնում է 1059մ, հասնում է թիվ 50 սահմանակետին, ապա թեքվում է արևելք, թիվ 52 սահմանակետով անցնում է 484մ, հասնում է թիվ 53 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, հատում ձորոր, առուներթիվ 54 սահմանակետով անցնում է 935մ, հասնում է թիվ 55 սահմանակետին: Թիվ 55 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 620մ, հասնում է թիվ 56 սահմանակետին, ապա կրկին թեքվում է հարավ-արևելք, անցնում 194մ, հասնում է թիվ 57 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թիվ 58-63 սահմանակետերով անցնում է 2042մ, հասնում է թիվ 64 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 219մ, հասնում է թիվ 65 սահմանակետին: Թիվ 65 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, հատում դաշտային ճանապարհը, անդունդի եզրով, թիվ 65-66 սահմանակետերով, անցնելով 904մ, հասնում է թիվ 67 սահմանակետին, որտեղ միանում է Կարաբաղչայ գետի աջակողմյան վտակին, որից հետո սահմանագիծը թիվ 68-77 սահմանակետից սահմանագիծը վտակով, նույն ուղղությամբ, թեքվում է արևելք, հատում Կարաբաղչայ գետը, հետո թեքվում է հյուսիս-արևմուտք,

շրջանցելով ժայռերը, ապա թեքվում է հարավ-արևելք, անցնում 2906մ, հասնում է ժայռեզրի թիվ 78 սահմանակետին: Թիվ 78 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թփուտների եզրով թիվ 79-83 սահմանակետերով անցնում է 1899մ, հասնում է թիվ 84 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, թիվ 85 սահմանակետով անցնում է 463մ, հասնում է թիվ 86 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հարավ, թիվ 87-89 սահմանակետով անցնում Գեղի բնակավայրի կողքովանցնում է 1497մ, հասնում է անտառի եզրին գտնվող թիվ 90 սահմանակետին: Թիվ 90 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, ապա անտառի եզրով, լեռան լանջով, կտրտված խիտ ռելեֆով, թիվ 91-107 սահմանակետերով անցնում 15135մ, հասնում է թիվ 108 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անտառի բացատով անցնում 590մ, հասնում է թիվ 109 սահմանակետին, ապա հատում է ձորը և կրկին անտառի եզրով սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, և թիվ 110-118 սահմանակետերով անցնում է 1077մ, հասնում է թիվ 119 սահմանակետին, որից հետո թեքվում է արևմուտք, անցնում 355մ, հասնում է թիվ 120 սահմանակետին: Թիվ 120 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, թիվ 121 սահմանակետով, դաշտային ճանապարհով անցնում է 397մ, հասնում է թիվ 122 սահմանակետին, ապա թեքվում է արևմուտք, ձորով անցնում է 451մ, հասնում է թիվ 123 սահմանակետին: Թիվ 123 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 124-127 սահմանակետերով, անտառի եզրով անցնում է 740մ, հասնում թիվ 128 սահմանակետին: Թիվ 128 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, ձորով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 129-130 սահմանակետերով անցնում է 386 մ, հասնում թիվ 131 սահմանակետին: Թիվ 131 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, անցնում է 787 մ, հասնում է թիվ 132 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 133-134 սահմանակետերով անցնում 310 մ, հասնում թիվ 135 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թիվ 136-141 սահմանակետերով անցնում է 1517 մ, հասնում թիվ 142 սահմանակետին: Թիվ 142 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք և թիվ 143-145 սահմանակետերով անցնում է 1330 մ, հասնում թիվ 146 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հարավ, անցնում 311 մ, հասնում թիվ 147 սահմանակետին: Թիվ 147 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում թիվ 148 սահմանակետով, անցնում 872 մ, հասնում է թիվ 149 սահմանակետին: Թիվ 149 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, թիվ 50 սահմանակետով անցնում 752 մ, հասնում է Գեղի, Լեռնաձոր և Նոր

Աստղաբերդ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 34081 մ է:

### **ԳԵՂԻ – ԼՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Զ»-«Ա»**

Գեղի, Լոր և Շենաթաղ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, հատում դաշտային ճանապարհը, հետո գործող առվով, թիվ 1-9 սահմանակետերով անցնում 705 մ, հասնում թիվ 10 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, թիվ 11-23 սահմանակետերով, դաշտային ճանապարհին զուգահեռ անցնում 1086 մ, հասնում թիվ 24 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 395 մ, հասնում Գեղի, Լոր և Լոր Աստղաբերդ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2186 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՍԱՐՁԻ ԳՈՐԱՅՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Գորայք գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսային մասում:

Համայնքը հյուսիս-արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն), արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Ծղուկ գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Շաղատ գյուղական համայնքին, արևմուտքից «Դ»-«Ա» հատվածով՝ Վայոց Ձորի մարզին:

### **ԳՈՐԱՅՔ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը համընկնում է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանի հետ:

### **ԳՈՐԱՅՔ – ԾՂՈՒԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Գորայք, Ծղուկ գյուղական համայնքների և պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն), տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 1-40 սահմանակետերով դաշտային ճանապարհով, ձորակներով ու ձորերով անցնում է 2812 մ, հասնում թիվ 41 սահմանակետին, ապա լանջով թեքվում է հարավ-արևելք թիվ 42-48 սահմանակետերով անցնում 784 մ, հասնում թիվ 49 սահմանակետին: Թիվ 49 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անցնում 557 մ, հասնում թիվ 50 սահմանակետին, այդտեղից սահմանագիծը Կոշաբուլախ գետով թեքվում է դեպի հարավ, անցնելով 5849 մ, հասնում թիվ 51 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը հատվելով Որոտան գետի հետ, հոսանքի հակառակ ուղղությամբ թիվ 52-63 սահմանակետերով անցնելով 1042 մ, հասնում է Որոտան գետի ափին գտնվող թիվ 64 սահմանակետին: Թիվ 64 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 65-66 սահմանակետերով անցնելով 1035 մ, հասնում է թիվ 67 սահմանակետին, որից հետո ջրբաժանով թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 68-71 սահմանակետերով անցնում 918 մ, հասնում է թիվ 72 սահմանակետին: Թիվ 72

սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհով հատելով առուներ, ձորակներ և ջրբաժան առուներով թիվ 73-89 սահմանակետերով անցնելով 5110 մ, հասնում է թիվ 90 սահմանակետին: Թիվ 90 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, հատելով դաշտային ճանապարհներ, ձորակներ և ձորեր, թիվ 91-109 սահմանակետերով անցնում է 3104 մ, հասնում թիվ 110 սահմանակետին: Թիվ 110 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 542 մ, հասնում թիվ 111 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հարավ, ապա հարավ-արևելք, հետո հարավ-արևմուտք և թիվ 112-133 սահմանակետերով անցնում 2060 մ, հասնում է թիվ 134 սահմանակետին: Թիվ 134 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, ապա հարավ-արևելք, անցնելով ջրբաժանով, հատելով ձորը և դաշտային ճանապարհը, թիվ 135-143 սահմանակետերով անցնելով 3902 մ, հասնում է ճանապարհի խաչմերուկում գտնվող թիվ 144 սահմանակետին: Թիվ 144 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնելով 465 մ, հասնում է Գորայք, Ծղակ և Շաղաթ գյուղական նհամայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 28180 մ է:

#### **ԳՈՐԱՅՔ – ՇԱՂԱԹ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Գորայք, Շաղաթ գյուղական համայնքների և Վայոց Ձորի մարզի տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 4366 մ, հասնում թիվ 4 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, անցնում 605 մ, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում է 1866 մ, հասնում է թիվ 6 սահմանակետին, այդտեղից թեքվում է արևելք, անցնում 306 մ, հասնում է թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 490 մ, հասնում Գորայք, Շաղաթ և Ծղուկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7633 մ է:

#### **ԳՈՐԱՅՔ – ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՍԱՐՁ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ա»**

«Դ»-«Ա» հատվածով սահմանագիծը համընկնում է Սյունիքի և Վայոց Ձորի մարզերի սահմանի հետ:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՒԴԵՄՆԻՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ**

### **ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Գուդեմնիս գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավարևմտյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Վահրավար գյուղական համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Լեհվազ գյուղական համայնքին, հարավ-արևելքից «Գ»-«Դ» հատվածով՝ Մեղրի քաղաքային համայնքին, հարավից «Դ»-«Ե» հատվածով՝ Կուրիս գյուղական համայնքին, հարավ-արևմուտքից «Ե»-«Ա» հատվածով պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն):

### **ԳՈՒԴԵՄՆԻՍ – ՎԱՀՐԱՎԱՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Գուդեմնիս, Վահրավար գյուղական համայնքների և պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը Վահրավար գետով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ապա հարավ-արևելք, թիվ 1-10 սահմանակետերով անցնում 6157 մ, հասնում թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ, թիվ 12 սահմանակետով անցնում 278 մ, հասնում Կարճևան ջրանցքի եզրին գտնվող թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը Կարճևանի ջրանցքից թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 591 մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 15-16 սահմանակետերով անցնում 763 մ, հասնում դամբարանադաշտի եզրին գտնվող թիվ 17 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 18-19 սահմանակետերով անցնելով 654 մ, հասնում թիվ 20 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի արևելք, թիվ 21 սահմանակետով անցնում 267 մ, հասնում Գուդեմնիս, Վահրավար և Լեհվազ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 8710 մ է:

### **ԳՈՒԴԵՄՆԻՍ – ԼԵՀՎԱԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Գուղեմնիս, Վահրավար և Լեհվազ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը բլրի գագաթից թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 330 մ, հասնում 1407.4 մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանով, թիվ 2-8 սահմանակետերով անցնում 2358 մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 10 սահմանակետով անցնում 687 մ, հասնում թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, արտադրական մասի եզրով անցնում 187 մ, հասնում թիվ 12 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 259 մ, հասնում Մեղրի գետի ափին գտնվող Գուղեմնիս, Լեհվազ գյուղական և Մեղրի քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3821 մ է:

#### **ԳՈՒԴԵՄՆԻՍ – ՄԵՂՐԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Գուղեմնիս, Լեհվազ գյուղական և Մեղրի քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը Մեղրի գետով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-7 սահմանակետերով անցնում 985 մ, հասնում Մեղրի գետի վտակի ափին գտնվող թիվ 8 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 488 մ, հասնում թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 196 մ, հասնում ջրբաժանի վրա գտնվող թիվ 10 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ, անցնում 253 մ, հասնում ջրհավաքի թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը ջրհավաքով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 12 սահմանակետով անցնում 745 մ, հասնում «Կարմիրքար» լեռնաշղթայի վրա գտնվող թիվ 13 սահմանակետին, ապա լեռնաշղթայով թեքվում է դեպի արևմուտք, անցնում 466 մ, հասնում Գուղեմնիս, Կուրիս գյուղական և Մեղրի քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3133 մ է:

#### **ԳՈՒԴԵՄՆԻՍ – ԿՈՒՐԻՍ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

Գուղեմնիս, Կուրիս գյուղական համայնքների և պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ձորակով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-5 սահմանակետերով անցնում 942 մ, հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 7-9 սահմանակետերով անցնում 2125 մ, հասնում թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ջրբաժանով, թիվ 11-12 սահմանակետերով, ճանապարհի և անտառի եզրով անցնում 1128 մ, հասնում Կարճևանի ջրանցքի եզրին գտնվող թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 467 մ, հասնում թիվ 14 սահմանակետին. ապա թեքվում դեպի հարավ, անցնում 81 մ, հասնում ջրհավաքի թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը նույն ջրհավաքով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 16-18 սահմանակետերով անցնում 810 մ, հասնում թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 142 մ, հասնում վարելահողի եզրին գտնվող թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, վարելահողի եզրով, թիվ 21-22 սահմանակետերով անցնում 891 մ, հասնում թիվ 23 սահմանակետին: Թիվ 23 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 798 մ, հասնում ջրբաժանի վրա գտնվող թիվ 24 սահմանակետին: Թիվ 24 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 1103 մ, հասնում ճանապարհի եզրին գտնվող թիվ 25 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 26-27 սահմանակետերով անցնում 540 մ, հասնում թիվ 28 սահմանակետին: Թիվ 28 սահմանակետից սահմանագիծը նույն ուղղությամբ, թիվ 29 սահմանակետով անցնում է 579 մ, հասնում թիվ 30 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 55մ, հասնում ջրհավաքի թիվ 31 սահմանակետին, որտեղից ջրհավաքով թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 162 մ, հասնում թիվ 32 սահմանակետին, կրկին ջրհավաքով թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 247 մ, հասնում թիվ 33 սահմանակետին: Թիվ 33 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ, թիվ 34 սահմանակետով անցնում 1011 մ, հասնում բարձունքի վրա գտնվող Գուղեմնիս, Կուրիս գյուղական և Մեղրի քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 11081մ է:

**ԳՈՒԴԵՄՆԻՍ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԱՂՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ)**

**ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Ա»**

«Ե»-«Ա» հատվածով սահմանագիծը համընկնում է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանի հետ:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԱՎԻԹ ԲԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Դավիթ Բեկ գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավարևելյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Շուռնուխ գյուղական համայնքին, հյուսիսից և արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն), հարավ-արևելքից «Գ»-«Դ» հատվածով՝ Կաղնուտ գյուղական համայնքին, հարավից «Դ»-«Ե» հատվածով՝ Արծվանիկ գյուղական համայնքին, հարավ-արևմուտքից «Ե»-«Զ» հատվածով՝ Զափնի գյուղական համայնքին, արևմուտքից «Զ»-«Ա» հատվածով՝ Սևաքար գյուղական համայնքին:

### **ԴԱՎԻԹ ԲԵԿ – ՇՈՒՆՈՒՄ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Դավիթ Բեկ, Շուռնուխ և Սևաքար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անտառով, առվով անցնում 1855 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս, անցնում 212 մ, հասնում Դավիթ Բեկ, Շուռնուխ գյուղական համայնքների և պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2067 մ է:

### **ԴԱՎԻԹ ԲԵԿ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

«Բ»-«Գ» հատվածով սահմանագիծը հանընկնում է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանի հետ:

### **ԴԱՎԻԹ ԲԵԿ – ԿԱՂՆՈՒՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Դավիթ Բեկ, Կաղնուտ գյուղական համայնքների և պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը լանջերով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 1313 մ, հասնում թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը լանջով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ, թիվ 5 սահմանակետով անցնում 675 մ, հասնում անտառի եզրին գտնվող թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը անտառի միջով թեքվում է դեպի արևմուտք, թիվ 7-17 սահմանակետերով անցնում 1630 մ, հասնում թիվ 18 սահմանակետին: Թիվ 18 սահմանակետից սահմանագիծը անտառի եզրագծով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ապա հարավ-արևելք, թիվ 19-21 սահմանակետերով անցնում 671 մ, հասնում գետի ափին գտնվող թիվ 22 սահմանակետին, որտեղից գետով թեքվում է հարավ-արևելք, անցնում 249 մ, հասնում Դավիթ Բեկ, Կաղնուտ և Արծվանիկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4538 մ է:

#### **ԴԱՎԻԹ ԲԵԿ – ԱՐԾՎԱՆԻԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

Դավիթ Բեկ, Արծվանիկ և Չափնի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ճանապարհի եզրին, սահմանագիծը թեք լանջով թեքվում է դեպի հյուսիս, թիվ 1-4 սահմանակետերով անցնում 537 մ, հասնում ճանապարհի եզրին գտնվող թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը ճանապարհով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 6 սահմանակետով անցնում 295 մ, հասնում թիվ 7 սահմանակետին, այնուհետև լանջով թեքվում է նույն ուղղությամբ, թիվ 8 սահմանակետով անցնում 232 մ, հասնում թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 90 մ, հասնում լեռան գագաթին գտնվող թիվ 10 սահմանակետին, որտեղից լանջով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 11-15 սահմանակետերով անցնում 1308 մ, հասնում թիվ 16 սահմանակետին, այնուհետև թեքվում է հյուսիս, անցնում 77 մ, հասնում թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը անտառի եզրով թեքվում է դեպի հարավ-արևելք, բնակավայրի եզրագծով, դաշտային և միջհամայնքային ճանապարհներով, ձորերով և ձորակներով, թիվ 18-57 սահմանակետերով անցնում 5901 մ, հասնում թիվ 58 սահմանակետին: Թիվ 58 սահմանակետից սահմանագիծը անտառի եզրագծով

թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 59 սահմանակետով անցնում 942 մ, հասնում թիվ 60 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 121 մ, հասնում գետի ափին գտնվող թիվ 61 սահմանակետին: Թիվ 61 սահմանակետից սահմանագիծը գետով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 252 մ, հասնում Դավիթ Բեկ, Արծվանիկ և Կաղնուտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 9755 մ է:

#### **ԴԱՎԻԹ ԲԵԿ – ՉԱՓՆԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Ե»-«Զ»**

Դավիթ Բեկ, Չափնի և Սևաքար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը գետով թեքվում է դեպի հարավ, անցնում 126 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի արևելք, ապա հարավ-արևելք, թիվ 2-10 սահմանակետերով անցնում 1691 մ, հատելով ձորեր, հասնում ճանապարհի եզրին գտնվող թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը ճանապարհով թեքվում է դեպի հարավ, ապա արևելք, թիվ 12-14 սահմանակետերով անցնում 615 մ, հասնում Դավիթ Բեկ, Չափնի և Արծվանիկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2306 մ է:

#### **ԴԱՎԻԹ ԲԵԿ – ՍԵՎԱՔԱՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Զ»-«Ա»**

Դավիթ Բեկ, Սևաքար և Շուռնուխ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 1821 մ, հասնում թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը լանջով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 2-3 սահմանակետերով անցնում 380 մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 4 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, ձորով, թիվ 5 սահմանակետով անցնում 155 մ, հասնում է թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 88 մ, հասնում է թիվ 7 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, ձորով անցնում 74 մ, հասնում է թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 144 մ, հասնում թիվ 9 սահմանակետին, որտեղից ձորով թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 40 մ, հասնում թիվ 10 սահմանակետին, ապա թեքվում է

հարավ-արևելք, թիվ 11 սահմանակետով անցնում 121 մ, հասնում է Շաբադին գետի  
ափին գտնվող, Դավիթ Բեկ, Սևաքար և Չափնի գյուղական համայնքների  
տարածքների բաժանման «Ձ» հանգուցային սահմանակետին:

«Ձ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2823 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Եղեգ գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսային մասում:

Համայնքը արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Սևաքար գյուղական համայնքին, «Բ»-«Գ» հատվածով՝ Աճանան գյուղական համայնքին, արևմուտքից «Գ»-«Դ» հատվածով՝ Նորաշենիկ գյուղական համայնքին, «Դ»-«Ե» հատվածով՝ Շրվենանց գյուղական համայնքին, արևմուտքից և հյուսիսից «Ե»-«Զ» հատվածով՝ Վերին Խոտանան գյուղական համայնքին, հյուսիսից «Զ»-«Ա» հատվածով՝ Շուռնուխ գյուղական համայնքին:

### **ԵՂԵԳ - ՍԵՎԱՔԱՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Եղեգ, Սևաքար և Շուռնուխ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը գետակով թեքվում է հարավ, անցնում 2611 մ, հասնում է թիվ 1 սահմանակետին, որտեղից սահմանագիծը կրկին թեքվում է հարավ, անցնում 120 մ, հասնում թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է հարավ-արևելք, անցնում 341 մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 3 սահմանակետին, ապա թեքվում է հարավ, բացատով անցնում 344 մ, հասնում ջրբաժանի վրա գտնվող թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, հատում ձորը և թիվ 5 սահմանակետով անցնելով 669 մ՝ հասնում է բացատի եզրին գտնվող թիվ 6 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 7-11 սահմանակետերով անցնում 1521 մ, հասնում է թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 13-14 սահմանակետերով անցնելով 454 մ՝ հասնում է բացատի եզրին գտնվող թիվ 15 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 297 մ, հասնում է թիվ 16 սահմանակետին, որը գտնվում է ջրբաժանի վրա: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, հատում Եղեգ-Սևաքար միջհամայնքային ճանապարհը, լանջով անցնելով 343 մ՝ հասնում է թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ջրբաժանով, թիվ 18-21 սահմանակետերով անցնում է 1194 մ, հասնում լեռան գագաթին գտնվող թիվ 22

սահմանակետին: Թիվ 22 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում ջրբաժանով, հատվում ձորերի և ձորակների հետ, թիվ 21-24 սահմանակետերով անցնելով 1190 մ` հասնում թիվ 27 սահմանակետին: Թիվ 27 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, լանջով անցնելով 163 մ, հասնում թիվ 28 սահմանակետին, ապա թեքվում է հարավ, հատում ձորը և թիվ 29-32 սահմանակետերով անցնելով 1282 մ, հասնում է Եղեգ, Սևաքար և Աճանան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 10532մ է:

#### **ԵՂԵԳ - ԱՃԱՆԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Բ»-«Գ»**

Եղեգ, Աճանան և Սևաքար համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Չանախչի գետի ձախակողմյան վտակի ափին, սահմանագիծը գետով` հոսանքի ուղղությամբ, թեքվում է հարավ, թիվ 1-7 սահմանակետերով անցնում 948 մ, հասնում Եղեգ, Աճանան և Նորաշենիկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետը:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը` 948 մ է:

#### **ԵՂԵԳ - ՆՈՐԱՇԵՆԻԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Գ»-«Դ»**

Եղեգ, Նորաշենիկ, Շրվենանց գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ապա հարավ և թիվ 1-5 սահմանակետերով անցնելով 2003 մ, հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 7-11 սահմանակետերով, լեռնաշղթայով և ջրբաժանով անցնում 1547 մ, հասնում Եղեգ, Աճանան և Նորաշենիկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը` 3550 մ է:

#### **ԵՂԵԳ - ՇՐՎԵՆԱՆՑ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Դ»-«Ե»**

Եղեգ, Վերին Խոտանան և Շրվենանց գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 1-2 սահմանակետերով անցնում 1199 մ, հասնում թիվ 3 սահմանակետին, ապա թեքվում է արևմուտք, անցնում 88 մ, հասնում է թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ջրբաժանով, թիվ 5-13 սահմանակետերով անցնում 1373 մ, հասնում թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 295 մ, հասնում է թիվ 15 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 16 սահմանակետով անցնում 636 մ, հասնում Եղեգ, Նորաշենիկ և Շրվենանց համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին, որը գտնվում է բլրի գագաթին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3591 մ է:

### **ԵՂԵԳ - ՎԵՐԻՆ ԽՈՏԱՆԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Ե»-«Զ»**

Եղեգ, Վերին Խոտանան և Շուռնուխ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, թիվ 1 սահմանակետով անցնելով 435 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 2 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, ձորով, թիվ 3 սահմանակետով անցնում 966 մ, հասնում թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 65 մ, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ձորով անցնում 1460 մ, հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 7 սահմանակետով անցնում 243 մ, հասնում թիվ 8 սահմանակետին, որը գտնվում է բարձունքի վրա: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ձորով, թիվ 9-16 սահմանակետերով անցնում 740 մ, հասնում թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնելով 155 մ, հասնում թիվ 18 սահմանակետին, ապա թեքվում հարավ, անցնում 185 մ, հասնում թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 20 սահմանակետով անցնում 657 մ, հասնում թիվ 21 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, անցնում 419 մ, հասնում թիվ 22 սահմանակետին, հետո թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 23-24 սահմանակետերով անցնում 520 մ, հասնում թիվ 25 սահմանակետին: Թիվ 25 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 207 մ, հասնում

թիվ 26 սահմանակետին: Թիվ 26 սահմանակետից սահմանագիծը կրկին թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 27 սահմանակետով անցնելով 493 մ, հասնում Եղեգ, Վերին Խոտանան և Շրվենանց համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6545 մ է:

### **Եղեգ - ՇՈՒՆՈՒՄ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Զ»-«Ա»**

Եղեգ, Սևաքար և Շուռնուխ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 60մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 2-4 սահմանակետերով, անտառի եզրով անցնում է 746 մ, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 182 մ, հասնում Եղեգ, Վերին Խոտանան և Շուռնուխ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 988 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԹԱՆԱՀԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Թանահատ գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսային մասում:

Համայնքը արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Թասիկ գյուղական համայնքին, հարավից «Բ»-«Գ» հատվածով՝ Արևիս գյուղական համայնքին, արևմուտքից և հյուսիսից «Գ»-«Ա» հատվածով՝ Սալվարդ գյուղական համայնքին:

### **ԹԱՆԱՀԱՏ – ԹԱՍԻԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Թանահատ, Սալվարդ և Թասիկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը գետով թեքվում է դեպի հարավ, անցնում 1715 մ, հասնում Թանահատ, Թասիկ և Արևիս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1715 մ է:

### **ԹԱՆԱՀԱՏ - ԱՐԵՎԻՍ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Թանահատ, Թասիկ և Արևիս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 626 մ, հասնում է թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևմուտք, հատում ջրբաժանը, անցնում 902 մ, հասնում թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը նույն ուղղությամբ, հատում է առուներ, դաշտային ճանապարհով անցնում 451 մ, հասնում է թիվ 3 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 912 մ, հասնում թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 5 սահմանակետով հատում Քարկերտ գետակը, անցնում 1311 մ, հասնում թիվ 6 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 7 սահմանակետով անցնում 2508 մ, հասնում թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 9-12 սահմանակետերով անցնում 496 մ, հասնում Սիսիան գետի ափին գտնվող թիվ 13 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հյուսիս-

արևելք, գետով անցնում է 1184 մ, հասնում Թանահատ, Արևիս և Թասիկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 8390 մ է:

### **ԹԱՆԱՀԱՏ – ՍԱԼՎԱՐԴ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Ա»**

Թանահատ, Սալվարդ և Թասիկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ջրբաժանով, թիվ 1-5 սահմանակետերով անցնում է 991 մ, հասնում է թիվ 6 սահմանակետին, որտեղից սահմանագիծը փոխում է եռլողությունը դեպի հարավ, թիվ 7 սահմանակետով անցնում 1020 մ, հասնում թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 531 մ, հասնում թիվ 9 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում է 414 մ, հասնում է թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք, հատելով ձորակներ, առուներ, թիվ 11-18 սահմանակետերով անցնում է 972 մ, հասնում թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա հարավ-արևմուտք և դաշտային ճանապարհով, թիվ 20-32 սահմանակետերով անցնում 2374մ, հասնում է թիվ 33 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 34 սահմանակետով անցնում է 340 մ, հասնում է թիվ 35 սահմանակետին: Թիվ 35 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 36-38 սահմանակետերով անցնում 2281 մ, հասնում է թիվ 39 սահմանակետին: Թիվ 39 սահմանակետից սահմանագիծը կտրուկ թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 631 մ, հասնում է թիվ 40 սահմանակետին: Թիվ 40 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհով, հատելով առուներ, ձորակներ, թիվ 41-75 սահմանակետերով անցնում է 2464 մ, հասնում թիվ 76 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 764 մ, հասնում Թանահատ, Սալվարդ և Արևիս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 12782 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԹԱՍԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ**

### **ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Թասիկ գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսային մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Հացավան գյուղական համայնքին, արևելքից՝ «Բ»-«Գ» հատվածով՝ Բնունիս գյուղական համայնքին, հարավից՝ «Գ»-«Դ» հատվածով՝ պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն), հարավ-արևմուտքից «Դ»-«Ե» հատվածով սահմանակից է Արկիս գյուղական համայնքին, արևմուտքից «Ե»-«Զ» հատվածով՝ Թանահատ գյուղական համայնքին, «Զ»-«Ա» հատվածով՝ Սալվարդ գյուղական համայնքին:

### **ԹԱՍԻԿ – ՀԱՑԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Թասիկ, Հացավան և Սալվարդ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 249 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, հետո նույն ուղղությամբ, թիվ 2 սահմանակետով անցնում է 357 մ, հասնում թիվ 3 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, թիվ 4 սահմանակետով անցնում 742 մ, հասնում է թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, հատում միջհամայնքային ճանապարհը, անցնում 242 մ, հասնում թիվ 6 սահմանակետին, հետո կրկին թեքվում է հարավ-արևելք, անցնում 178 մ, հասնում է Սիսիան գետի եզրին գտնվող թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը գետով, հոսանքին հակառակ ուղղությամբ թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ, այնուհետև հարավ-արևելք, անցնում 2549 մ, հասնում Թասիկ, Բնունիս և հացավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4317 մ է:

### **ԹԱՍԻԿ – ԲՆՈՒՆԻՍ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Թասիկ, Բնունիս և Հացավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում ձորը, թիվ 1-9 սահմանակետերով անցնում 1585մ, հասնում թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում է 361 մ, հասնում թիվ 11 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 77 մ, հասնում թիվ 12 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 13-17 սահմանակետերով անցնում 596մ, հասնում թիվ 18 սահմանակետին: Թիվ 18 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ և թիվ 19-21 սահմանակետերով անցնելով 309 մ, հասնում թիվ 22 սահմանակետին: Թիվ 22 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 59 մ, հասնում թիվ 23 սահմանակետին, ապա նույն ուղղությամբ թիվ 24 սահմանակետով անցնում է 1341 մ, հասնում թիվ 25 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք, անցնում 920 մ, հասնում թիվ 26 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք, անցնում 228 մ, հասնում թիվ 27 սահմանակետին, որը գտնվում է Այուրտ սարի գագաթին: Թիվ 27 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 513 մ, հասնում թիվ 28 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևմուտք, հատում դաշտային ճանապարհը, ջրբաժանը, թիվ 29-34 սահմանակետերով անցնում 2133 մ, հասնում թիվ 35 սահմանակետին: Թիվ 35 սահմանակետից սահմանագիծը նույն ուղղությամբ թիվ 36 սահմանակետով անցնում է 1379մ, հասնում թիվ 37 սահմանակետին: Թիվ 37 սահմանակետից սահմանագիծը, որը գտնվում է բլրի գագաթին թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 441 մ, հասնում թիվ 38 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, գետով անցնում է 9348 մ, հասնում թիվ 39 սահմանակետին: Թիվ 39 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 40-41 սահմանակետերով անցնում 151 մ, հասնում Թասիկ, Բնունիս գյուղական համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 19441 մ է:

**ԹԱՍԻԿ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԱՊՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ)**

**ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

«Գ»-«Դ» հատվածով սահմանագիծը հանընկնում է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանի հետ:

### **ԹԱՍԻԿ – ԱՐԵՎԻՍ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

Թասիկ, Թանահատ և Արևիս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, հետո հարավ-արևելք, գետով անցնում է 2155 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է արևմուտք, անցնում 187 մ, հասնում է թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 հմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, թիվ 3-5 սահմանակետերով անցնում 451 մ, հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 7-10 սահմանակետերով անցնում 464 մ, հասնում է թիվ 11 սահմանակետին, ապա կրկին թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 12-13 սահմանակետերով անցնում է 529 մ, հասնում թիվ 14 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք թիվ 15 սահմանակետով անցնում է 107 մ, հասնում է թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, անցնում է 291 մ, հասնում է թիվ 17 սահմանակետին, որից հետո սահմանագիծը, որը գտնվում է ձորի եզրին, թեքվում է հարավ-արևմուտք, հատում Թաղթակերպ գետը, ապա թեքվում դեպի հարավ, այնուհետև հարավ-արևմուտք, հետո հետո դեպի հարավ-արևելք, թիվ 18 սահմանակետով անցնում 986 մ, հասնում թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 20-31 սահմանակետերով անցնում 1041մ, հատելով ձորը հասնում թիվ 32 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ, ապա հարավ-արևմուտք և թիվ 33-34 սահմանակետերով անցնում է 2738 մ, հասնում թիվ 35 սահմանակետին, որը գտնվում է գետի ափին: Թիվ 35 սահմանակետից սահմանագիծը գետով թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 5748 մ, հասնում թիվ 36 սահմանակետին, ապա թեքվում է հարավ, թիվ 37-39 սահմանակետերով անցնում է 232 մ, հասնում Թասիկ, Արևիս գյուղական համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 14929 մ է:

### **ԹԱՍԻԿ – ԹԱՆԱՀԱՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»**

Թասիկ, Թանահատ և Սալվարդ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը գետով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 1715 մ, հասնում Թասիկ, Թանահատ և Արևիս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1715 մ է:

#### **ԹԱՍԻԿ – ՍԱԼՎԱՐԴ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Զ»-«Ա»**

Թասիկ, Սալվարդ և Հացավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 245 մ, հասնում է թիվ 1 սահմանակետին, ապա դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 2 սահմանակետով անցնում 873 մ, հասնում թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը շարունակվում է նույն ուղղությամբ, հատում Կապլիգյուլ լճակը, թիվ 4-5 սահմանակետերով անցնում 1525 մ, հասնում է թիվ 6 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 7-8 սահմանակետերով անցնում 402 մ, հասնում Սիսիան գետի ափին գտնվող Թասիկ, Սալվարդ և Թանահատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3047 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԻՇԽԱՆԱՍԱՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Իշխանասար գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսային մասում:

Համայնքը արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Աղիտու գյուղական համայնքին, արևելքից և հարավից «Բ»-«Գ» հատվածով՝ Սիսիան քաղաքային համայնքին, հարավից և արևմուտքից «Գ»-«Դ» հատվածով՝ Շաքի գյուղական համայնքին, հյուսիսից «Դ»-«Ա» հատվածով՝ պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն):

### **ԻՇԽԱՆԱՍԱՐ - ԱՂԻՏՈՒ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Իշխանասար, Աղիտու գյուղական համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, դաշտային ճանապարհով, թիվ 1 սահմանակետով անցնում 482 մ, հասնում է թիվ 2 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, թիվ 3-18 սահմանակետերով անցնում 2002 մ, հասնում է թիվ 19 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 20-34 սահմանակետերով անցնելով 2034 մ, հասնում է թիվ 34 սահմանակետին: Թիվ 34 սահմանակետից սահմանագիծը գետի հունով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 6541 մ, հասնում է թիվ 36 սահմանակետին: Թիվ 36 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 1282 մ, հասնում է Իշխանասար, Աղիտու գյուղական և Սիսիան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 12341 մ է:

### **ԻՇԽԱՆԱՍԱՐ – ՍԻՍԻԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Իշխանասար, Աղիտու գյուղական և Սիսիան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը, որը գտնվում է Սիսիան ջրանցքի եզրին, թիվ 1-5 սահմանակետերով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ձորով անցնում է 1389 մ, հասնում թիվ 6 սահմանակետին, որտեղից սահմանագիծը հատելով ջրբաժանը, թիվ 7-14 սահմանակետերով անցնում

է 1446 մ, դաշտային ճանապարհով հասնում թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը շեղվում է ճանապարհից, թեքվում հարավ-արևմուտք, թիվ 16-20 սահմանակետերով անցնում 1428 մ, հասնում է թիվ 21 սահմանակետին, այնուհետև թեքվում հարավ, թիվ 22-25 սահմանակետերով անցնում 1142 մ, հասնում թիվ 26 սահմանակետին, ապա թեքվում է հարավ, հետո արևելք, թիվ 26-32 սահմանակետերով անցնում է 782 մ, հասնում թիվ 34 սահմանակետին: Թիվ 34 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 1103 մ, հասնում է Իշխանասար, Շաքի գյուղական և Սիսիան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7290մ է:

### **ԻՇԽԱՆԱՍԱՐ – ՇԱՔԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Գ»-«Դ»**

Իշխանասար, Շաքի գյուղական համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն)տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, լանջով, թիվ 1-3 սահմանակետերով անցնելով 791 մ, հասնում վարելահողի եզրին գտնվող թիվ 4 սահմանակետին, ապա սահմանագիծը նույն ճանապարհով, թիվ 5-23 սահմանակետերով անցնում է 1058 մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 24 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 131 մ, հասնում թիվ 25 սահմանակետին, հետո թեքվում է հարավ, անցնում 229 մ, հասնում է թիվ 26 սահմանակետին, որը գտնվում է գետի ափին: Թիվ 26 սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով հատելով ձորակներ, առուներ, դաշտային ճանապարհին զուգահեռ, թիվ 27-80 սահմանակետերով անցնում է 4140 մ, հասնում թիվ 81 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 81 սահմանակետով անցնում 1011 մ, հասնում թիվ 83 սահմանակետին, այդտեղից թեքվում է հարավ, անցնում 893 մ, հասնում 84 սահմանակետին, հետո թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 278 մ, հասնում է գետի ափին գտնվող թիվ 85 սահմանակետին, հետո գետով թեքվում է դեպի հարավ, թիվ 86-90 սահմանակետերով անցնում է 1409 մ, հասնում թիվ 91 սահմանակետին: Թիվ 91 սահմանակետից սահմանագիծը հատվում է Սիսիանի ջրանցքի հետ, ապա թեքվում է հարավ-արևելք, թիվ 92-109 սահմանակետերով հատում Անգեղակոթ-Շաքի միջհամայնքային ճանապարհը և անցնում է 3795 մ, հասնում Որոտան գետի եզրին գտնվող թիվ 110 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 934 մ, հասնում թիվ 122 սահմանակետին,

կրկին թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնելով 167 մ, հասնում Գորիս տանող ճանապարհի եզրին գտնվող Իշխանասար, Շաքի գյուղական և Սիսիան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 14836 մ է:

**ԻՇԽԱՆԱՍԱՐ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՐՄԱՆ (ԱՂՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ)**

**ՍԱՐՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ա»**

«Դ»-«Ա» հատվածով սահմանագիծը համընկնում է Հայաստանի Հանրապետության և Աղրբեջանի Հանրապետության պետական սահմանի հետ:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՀՎԱԶ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Լեհվազ գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավային մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Լիճք գյուղական համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Վարդանիձոր գյուղական համայնքին, հարավ-արևելքից «Գ»-«Դ» հատվածով՝ Մեղրի քաղաքային համայնքին, հարավից «Դ»-«Ե» հատվածով՝ Գուդեմնիս գյուղական համայնքին, «Ե»-«Զ» հատվածով՝ Վահրավար գյուղական համայնքին, արևմուտքից «Զ»-«Ա» հատվածով՝ պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն):

### **ԼԵՀՎԱԶ - ԼԻՃՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Լեհվազ, Լիճք գյուղական համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի արևելք, ապա հյուսիս-արևելք, անցնում 2020 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից ջրբաժանով թեքվում է դեպի հյուսիս-արևելք և արևելք, թիվ 2-9 սահմանակետերով անցնում 2464 մ, հասնում թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը բարձունքներով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 11-16 սահմանակետերով անցնում 1192 մ, հասնում թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 2222 մ, հասնում թիվ 18 սահմանակետին: Թիվ 18 սահմանակետից սահմանագիծը բարձունքներով թեքվում է դեպի արևելք, թիվ 19-22 սահմանակետերով անցնում 1905 մ, հասնում թիվ 23 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 269 մ, հասնում թիվ 24 սահմանակետին: Թիվ 24 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 25 սահմանակետով անցնում 761 մ, հասնում թիվ 26 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 27 սահմանակետով անցնում 449 մ, հասնում Լեհվազ, Լիճք և Վարդանիձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 11282 մ է:

### **ԼԵՀՎԱԶ - ՎԱՐՂԱՆԻՉՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Լեհվազ, Լիճք և Վարդանիձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը Մեղրի գետով թեքվում է դեպի հարավ, ապա արևմուտք, թիվ 1-7 սահմանակետերով անցնում 2252 մ, հասնում թիվ 8 սահմանակետին, որտեղից գետի վտակով, թիվ 9-11 սահմանակետերով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 1218 մ, հասնում 1653.0 մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 427 մ, հասնում ջրբաժանի վրա գտնվող թիվ 13 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ, անցնում 385 մ, հասնում թիվ 14 սահմանակետին, որտեղից ամառանոցների եզրագծով անցնում է 447 մ, հասնում Մեղրի գետի վտակի ափին գտնվող թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 16-17 սահմանակետերով անցնում 306 մ, հասնում թիվ 18 սահմանակետին: Թիվ 18 սահմանակետից Բուզակյար գետակով սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 19-21 սահմանակետերով անցնում 1727 մ, հասնում Մեղրի գետի ափին գտնվող թիվ 22 սահմանակետին: Այնուհետև Մեղրի գետով, թիվ 23-38 սահմանակետերով անցնում է 3218 մ, հասնում թիվ 39 սահմանակետին: Թիվ 39 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, անցնում 900 մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 40 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 348 մ, հասնում ջրբաժանի թիվ 41 սահմանակետին, հետո թեքվում է դեպի հյուսիս, անցնում 273 մ, հասնում թիվ 42 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի արևելք, անցնում 306 մ, հասնում ջրբաժանի վրա գտնվող թիվ 43 սահմանակետին: Թիվ 43 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 288 մ, հասնում ջրհավաքի եզրին գտնվող թիվ 44 սահմանակետին, այնուհետև ջրհավաքով, թիվ 45-65 սահմանակետերով անցնում 4165 մ, հասնում Լեհվազ, Վարդանիձոր գյուղական և Մեղրի քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 16260 մ է:

### **ԼԵՅՎԱԶ - ՄԵՂՐԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Լեհվազ, Գուղեմնիս գյուղական և Մեղրի քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ճանապարհի եզրից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 488 մ, հասնում ջրբաժանի վրա գտնվող թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից

սահմանագիծը նույն ուղղությամբ անցնում է 587 մ, հասնում ջրբաժանի վրա գտնվող թիվ 2 սահմանակետին, ապա թեքվում դեպի արևելք, թիվ 3 սահմանակետով անցնում 610 մ, հասնում ջրհավաքի եզրին գտնվող Լեհվազ, Վարդանիձոր գյուղական և Մեղրի քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1685 մ է:

#### **ԼԵՅՎԱԶ - ԳՈՒՂԵՄՆԻՍ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Դ»-«Ե»**

Լեհվազ, Գուղեմնիս և Վահրավար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը բլրի գագաթից թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 330 մ, հասնում 1407.4 մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանով, թիվ 2-8 սահմանակետերով անցնում 2358 մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 10 սահմանակետով անցնում 687 մ, հասնում թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, արտադրական մասի եզրով անցնում 187 մ, հասնում թիվ 12 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 259 մ, հասնում Մեղրի գետի ափին գտնվող Լեհվազ, Գուղեմնիս գյուղական և Մեղրի քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3821 մ է:

#### **ԼԵՅՎԱԶ - ՎԱՀՐԱՎԱՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Ե»-«Զ»**

Լեհվազ, Վահրավար գյուղական համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ապա հարավ-արևելք, թիվ 1-12 սահմանակետերով անցնում 1312 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի արևելք, թիվ 14-39 սահմանակետերով անցնում 1299 մ, հասնում թիվ 40 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս, անցնում 123 մ, հասնում թիվ 41 սահմանակետին: Թիվ 41 սահմանակետից սահմանագիծը գետով թեքվում է դեպի արևելք, թիվ 42-59 սահմանակետերով անցնում 4299 մ, հասնում թիվ 60

Խնճորեսկ, Խնածախ և Քարաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 506 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, ապա ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 385 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 3,4 սահմանակետերով անցնում 748 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրի թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևելք, հատում դաշտային ճանապարհները, թիվ 6-9 սահմանակետերով անցնում 1104մ հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 10 սահմանակետին: 10 սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 11,12 սահմանակետերով անցնում է 707մ հատելով Հագարի գետը, հասնում թիվ 13 սահմանակետին, այնուհետև թիվ 13-32 սահմանակետերով թեքվում է դեպի արևելք, Հագարի գետով անցնելով 3579 մ` հասնում է թիվ 33 սահմանակետին: Թիվ 33 սահմանակետից սահմանագիծը գետով թեքվում է դեպի հյուսիս, և թիվ 34-36 սահմանակետերով անցնում 633մ հասնում է թիվ 37 սահմանակետին: Թիվ 37 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 38-39 սահմանակետերով, լեռնալանջով անցնում 795 մ հասնում ձորի եզրին գտնվող թիվ 40 սահմանակետին: Թիվ 40 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք: Թիվ 41-45 սահմանակետերով անցնում 1527 մ, հատելով ձորը և ջրբաժանը հասնում է Խնճորեսկ, Տեղ և Քարաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 9985 մ է:

### **ԽՆՃՈՐԵՍԿ – ՏԵՂ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Գ»-«Դ»**

Խնձորեսկ, Տեղ և Քարաշեն համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ճանապարհով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 1 սահմանակետով անցնում 553 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 390 մ հասնում ձորի եզրին գտնվող թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 189 մ, հասնում թիվ 4 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, թիվ 5 սահմանակետով անցնում 743 մ և լեռնալանջով հասնում ձորի եզրին գտնվող թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը ձորով, թիվ 7-12 սահմանակետերով անցնում 801 մ, հասնում է ձորի և ճանապարհի հատման տեղում գտնված թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը ճանապարհով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 14 սահմանակետով անցնում 529 մ հասնում թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, լեռնալանջով, հատում գետակը, ապա ձորով, թիվ 16-26 սահմանակետերով անցնում է 3107 մ, հասնում թիվ 27 սահմանակետին, որը գտնվում է Աղստև գետի ափին: Թիվ 27 սահմանակետից սահմանագիծը Հագարի գետով՝ հոսանքի ուղղությամբ թեքվում է դեպի արևելք, թիվ 28-38 սահմանակետերով անցնում 1886 մ հասնում է երկու ձորերի միացման տեղում գտնվող Խնձորեսկ, Տեղ գյուղական համայնքների պետական սահմանի տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 8199 մ է:

#### **ԽՆՁՈՐԵՍԿ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԱՂՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ)**

##### **ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Դ»-«Ե»**

«Դ»-«Ե» հատվածով սահմանագիծը հանընկնում է Հայաստանի Հանրապետության և Աղբրեջանի Հանրապետության պետական սահմանի հետ:

#### **ԽՆՁՈՐԵՍԿ – ՆԵՐՔԻՆ ԽՆՁՈՐԵՍԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Ե»-«Զ»**

Խնձորեակ, Ներքին Խնձորեակ գյուղական համայնքների և պետական սահմանափ տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է գետի ափին, սահմանագիծը գետով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք, թիվ 1-11 սահմանակետերով անցնում է 200 մ, հասնում թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 167 մ, հասնում թիվ 13 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, հատում ձորը ու դաշտային ճանապարհը, թիվ 13-14 սահմանակետերով անցնում 1035 մ՝ հասնում է թիվ 15 սահմանակետը: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը գետով թեքվում է դեպի հարավ արևելք, թիվ 16,17 սահմանակետերով անցնում է 1038 մ, հասնում թիվ 18 սահմանակետին, այնուհետև թեքվում դեպի հարավ-արևմուտք անցնում 206 մ հասնում է Խնձորեակ, Ներքին Խնձորեակ գյուղական համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4446 մ է:

**ԽՆՁՈՐԵԱԿ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ)**  
**ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Զ»-«Ե»**

«Զ»-«Ե» հատվածով սահմանագիծը հանընկնում է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանի հետ:

**ԽՆՁՈՐԵԱԿ – ՀԱՐԹԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Ե»-«Ը»**

Խնձորեակ, Հարթաշեն գյուղական և Գորիս քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետից սահմանագիծը Գորիս-Լաչին ճանապարհով թեքվում է դեպի արևելք, թիվ 1-6 սահմանակետերով անցնում 614 մ հասնում թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 8 սահմանակետով անցնելով 681 մ, հասնում ճանապարհների և ձորի հատման խաչմերուկում գտնվող թիվ 9 սահմանակետին : Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 317 մ, հասնում թիվ 10 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, թիվ 11 սահմանակետով անցնում 397 մ, հասնում թիվ 12 սահմանակետին: Թիվ 12

սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 469 մ, ապա ձորերով ու ժայռերով հասնում թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 846 մ, հատելով ձորակներ ու ժայռեր, հասնում թիվ 14 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 482 մ, հատելով ձորեր ու ժայռեր, հասնում թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 16 սահմանակետով անցնում 1382 մ, հատելով ձորեր, ժայռեր, հասնում թիվ 17 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևելք, թիվ 18-22 սահմանակետերով անցնում 2096 մ, հատելով դաշտային ճանապարհը, հասնում թիվ 23 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի արևելք անցնում 243 մ, հասնում է թիվ 24 սահմանակետին: Թիվ 24 սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 25-39 սահմանակետերով անցնում 2845 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 40 սահմանակետին: Թիվ 40 սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով, ջրբաժանով, ապա լեռնալանջով , թիվ 41-47 սահմանակետերով անցնում 1891 մ` հասնում է թիվ 48 սահմանակետին: Թիվ 48 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 49-50 սահմանակետերով անցնում է 1023 մ, հասնում Խնձորեսկ, Հարթաշեն համայնքների և պետական սահմանի տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետին:

«Է»-«Ը» սահմանագծի ընդհանուր երկարությունը 13285 մ է:

### **ԽՆՁՈՐԵՍԿ – ԳՈՐԻՍ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Ը»-«Թ»**

Խնձորեսկ, Վերիշեն գյուղական և Գորիս քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է հարավ անցնում 421 մ, հասնում թիվ 1 սահմանակետին որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 2 սահմանակետով, ջրբաժանով և լանջով անցնում 1262 մ, հասնում թիվ 3 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 4 սահմանակետով անցնում 1239 մ հատելով դաշտային ճանապարհը հասնում ձորի եզրին գտնվող թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևելք, անցնում 215 մ, հասնում թիվ 6

սահմանակետին, որը գտնվում է Էրզանիձոր լեռան գագաթին, ապա թեքվում է հյուսիս-արևելք, ժայռերով անցնում 248 մ, հասնում թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևելք,անցնում 215 մ, հասնում թիվ 8 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 168 մ, հասնում ժայռի գագաթին տեղադրված թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ձորով անցնում 778 մ, հատելով դաշտային ճանապարհը հասնում գետի ափին գտնվող թիվ 10 սահմանակետին, թեքվում է հարավ-արևմուտք, գետով անցնում 513 մ, հասնում Գորիս-Լաչին ճանապարհի եզրին գտնվող թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը ճանապարհով թեքվում է հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, թիվ 12-24 սահմանակետերով անցնում 1544 մ, հասնում է Խնձորեսկ, Հարթաշեն գյուղական և Գորիս քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Թ» հանգուցային սահմանակետին:

«Ը»-«Թ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6303 մ է:

#### **ԽՆՁՈՐԵՍԿ – ՎԵՐԻՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ «Թ»-«Ա»**

Խնձորեսկ, Խնածախ և Վերիշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թմբերով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-2 սահմանակետերով անցնում 1429 մ, հասնում թիվ 3 սահմանակետին, որտեղից լեռնալանջով թեքվում է նույն ուղղությամբ, անցնում 335 մ, հասնում թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անցնում 130 մ, հասնում Խնձորեսկ, Հարթաշեն գյուղական և Գորիս քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Թ» հանգուցային սահմանակետին:

«Թ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1894մ է:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽՈԶՆԱՎԱՐ ԳՅՈՒՂԱՎԱՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱՎԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆՎԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Խոզնավար գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսարևելյան մասում:

Համայնքը հյուսիսից և արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն), հարավից «Բ»-«Գ» հատվածով՝ Խնածախ գյուղական համայնքին, «Գ»-«Դ» հատվածով՝ Վաղատուր գյուղական համայնքին, արևմուտքից «Դ»-«Ա» հատվածով՝ Վերիշեն գյուղական համայնքին:

**ԽՈԶՆԱՎԱՐ – ՊԵՏԱՎԱՆ ՍԱՀՄԱՆ ( ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ)  
ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Ա»-«Բ»**

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը հանրնկնում է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանի հետ:

**ԽՈԶՆԱՎԱՐ – ԽՆԱԾԱԽ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Խոզնավար, Խնածախ գյուղական համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն), տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1 սահմանակետով անցնում 556 մ, հասնում Խոզնավար, Խնածախ և Վաղատուր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 556 մ է:

**ԽՈԶՆԱՎԱՐ – ՎԱՂԱՏՈՒՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Խոզնավար, Խնածախ և Վաղատուր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք՝ լանջով, ապա ջրբաժանով թիվ 1-3 սահմանակետերով անցնում 1202 մ, հասնում «Դադմեղիք» կոչվող թիվ 4 եռանկյունաչափական սահմանակետին:

Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս արևմուտք, հատում ձորը, անցնում 447մ, հասնում թիվ 5 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 747 մ, հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 7 սահմանակետով անցնում 940մ, հասնում թիվ 8 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 9-17 սահմանակետերով անցնում 3358մ, հասնում թիվ 18 սահմանակետին: Թիվ 18 սահմանակետից սահմանագիծը թեքվելով դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 19 սահմանակետով անցնում է 1011մ, հասնում թիվ 20 սահմանակետին, որտեղից սահմանագիծը դարձյալ թեքվում է հարավ-արևմուտք, ձորով, լեռնալանջով անցնում 387մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 21 սահմանակետին: Թիվ 21 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում ձորը, լեռնալանջով, թիվ 22-23 սահմանակետերով անցնում 1848մ, հասնում թիվ 24 սահմանակետին: Թիվ 24 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով առուներ, դաշտային ճանապարհներ, անցնելով 992 մ, հասնում է Խոզնավար, Վաղատուր և Վերիշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 10932 մ է:

#### **ԽՈՋՆԱՎԱՐ – ՎԵՐԻՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ա»**

Խոզնավար, Վերիշեն գյուղական համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն), տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը սարալանջով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 1728 մ, հասնում Խոզնավար, Վաղատուր և Վերիշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1728 մ է:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆՎԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Ծավ գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավարևելյան մասում:  
Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է ճակատեն գյուղական համայնքին, «Բ»-«Գ» հատվածով՝ Շիկահող գյուղական համայնքին, «Գ»-«Դ» հատվածով՝ Սրաշեն գյուղական համայնքին, արևելքից «Դ»-«Ե» հատվածով՝ Ներքին Հանդ գյուղական համայնքին, հարավից «Ե»-«Զ» հատվածով՝ Նռնաձոր գյուղական համայնքին, «Զ»-«Է» հատվածով՝ Շվանիձոր գյուղական համայնքին, «Է»-«Ը» հատվածով՝ Ալվանք գյուղական համայնքին, արևմուտքից «Ը»-«Թ» հատվածով՝ Վարդանիձոր գյուղական համայնքին, «Թ»-«Ժ» հատվածով՝ Լիճք գյուղական համայնքին, արևմուտքից և հյուսիսից «Ժ»-«Ա» հատվածով Լեռանձոր գյուղական համայնքին:

**ԾԱՎ - ԾԱԿԱՏԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Ա»-«Բ»**

Ծավ, ճակատեն և Լեռնաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 128 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, այդտեղից ջրբաժանով սահմանագիծը թիվ 2-8 սահմանակետերով անցնում է 1272 մ, հասնում դաշտային ճանապարհի վրա տեղադրված թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը նույն ուղղությամբ անցնում է 536 մ, հասնում թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 263 մ, հասնում Ծավ, ճակատեն և Շիկահող գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2199 մ է:

**ԾԱՎ – ՇԻԿԱՀՈՂ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Բ»-«Գ»**

Ծավ, Շիկահող և ճակատեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 170 մ, հասնում թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 2 սահմանակետով անցնում 286 մ, հասնում թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է

հարավ-արևելք, թիվ 4-6 սահմանակետերով անցնում 1342 մ, հասնում թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 8-17 սահմանակետերով անցնում 2901 մ, հասնում Ծավ, Շիկահող և Սրաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4699 մ է:

#### **ԾԱՎ – ՍՐԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ «Գ»-«Դ»**

Ծավ, Սրաշեն և Շիկահող գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անցնում 224 մ, հասնում թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 435 մ, հասնում թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, ջրբաժանով, թիվ 3-6 սահմանակետերով անցնում է 288 մ, հասնում թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 8-9 սահմանակետերով անցնելով 191 մ, հասնում թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 368 մ, հասնում թիվ 11 սահմանակետին, ապա թեքվում է հարավ անցնում 325 մ, հասնում թիվ 12 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք, թիվ 13 սահմանակետով անցնում է 771 մ, հասնում է թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անցնում 399 մ, հասնում է թիվ 15 սահմանակետին, հետո թեքվում է արևելք, թիվ 16-17 սահմանակետերով անցնում 592 մ, հասնում թիվ 18 սահմանակետին, այնուհետև անտառեզրով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 19-22 սահմանակետերով անցնելով 667 մ, հասնում է թիվ 23 սահմանակետին: Թիվ 23 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 180 մ, հասնում է թիվ 24 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 297 մ, հասնում է թիվ 25 սահմանակետին: Թիվ 25 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անցնում 145 մ, հասնում է թիվ 26 սահմանակետին, ապա անտառեզրով թեքվում է դեպի արևելք, անցնում 313 մ, հասնում թիվ 27 սահմանակետին: Թիվ 27 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ապա դեպի հարավ, թիվ 28-29 սահմանակետերով անցնում 449 մ, հասնում թիվ 30 սահմանակետին: Թիվ 30 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հատում դաշտային ճանապրհը, թիվ 31 սահմանակետով անցնում 728 մ, հասնում թիվ 32 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ,

անցնում 583 մ, հասնում թիվ 33 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 420 մ և անտառապատ լանջով հասնում թիվ 34 սահմանակետին: Թիվ 34 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 279 մ, հասնում է թիվ 35 սահմանակետին, որից հետո թեքվում է արևելք, անցնում 411 մ, հասնում թիվ 36 սահմանակետին: Թիվ 36 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, ապա հյուսիս, անտառեզրով, թիվ 37 սահմանակետով անցնում 576 մ, հասնում թիվ 38 սահմանակետին, հետո թեքվում է դեպի արևելք, անցնում 269 մ, հասնում թիվ 39 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 224 մ, հասնում թիվ 40 սահմանակետին: Թիվ 40 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 41-43 սահմանակետերով անցնում 805 մ, հասնում թիվ 44 սահմանակետին, այստեղից անտառեզրով պարբերաբար թեքվելով հարավ-արևելք, ապա հյուսիս-արևելք, թիվ 45-47 սահմանակետերով անցնում 1097 մ, հասնում թիվ 48 սահմանակետին: Թիվ 48 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 353 մ, հասնում թիվ 49 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 306 մ, հասնում է թիվ 50 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք, անցնում 120 մ, հասնում թիվ 51 սահմանակետին: Թիվ 51 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անտառի բացատի եզրագծով անցնում 518 մ, հասնում է թիվ 52 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք, անցնում 334 մ, հասնում է թիվ 53 սահմանակետին: Թիվ 53 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 528 մ, հասնում թիվ 54 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, անտառի եզրագծով հատելով դաշտային ճանապարհը, թիվ 55-56 սահմանակետերով անցնում 1264 մ, հասնում բացատի եզրին գտնվող թիվ 57 սահմանակետին: Թիվ 57 սահմանակետից սահմանագիծը անտառի եզրով թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 58-59 սահմանակետերով անցնում 974 մ, հասնում թիվ 60 սահմանակետին: Թիվ 60 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 61-63 սահմանակետերով անցնելով 1529 մ, հասնում Ծավ, Սրաշեն և Ներքին Հանդ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 16962 մ է:

**ԾԱՎ – ՆԵՐՔԻՆ ՀԱՆԴ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Դ»-«Ե»**

Ծավ, Ներքին Հանդ և Սրաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ջրբաժանով անցնում 293 մ, հասնում է թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է հարավ, անցնում 312 մ, հասնում թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, հատում դաշտային ճանապարհը, թիվ 3-4 սահմանակետերով անցնելով 803 մ, հասնում թիվ 5 սահմանակետին, որը գտնվում է ժայռի եզրին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, հատում Խաչինչայ գետը, անցնում 247 մ, հասնում է թիվ 6 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, թիվ 7 սահմանակետով անցնում 803 մ, հասնում թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, թիվ 9-10 սահմանակետերով անցնում 516 մ, հասնում թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 12 սահմանակետով անցնում 796 մ, հասնում թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, գետով անցնում 2620 մ, հասնում թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 386 մ, հասնում թիվ 15 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 16-17 սահմանակետերով անցնում 609 մ, հասնում թիվ 18 սահմանակետին, այնուհետև թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 183 մ, հասնում թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 20-21 սահմանակետերով անցնում 823 մ, հասնում թիվ 22 սահմանակետին, որից հետո սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 398 մ, հասնում թիվ 23 սահմանակետին: Թիվ 23 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 24-25 սահմանակետերով անցնում 1069 մ, հասնում թիվ 26 սահմանակետին: Թիվ 26 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անցնում 300 մ, հասնում թիվ 27 սահմանակետին: Թիվ 27 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 296 մ, հասնում թիվ 28 սահմանակետին: Թիվ 28 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, անցնում 505 մ, հասնում թիվ 29 սահմանակետին: Թիվ 29 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 315 մ, հասնում թիվ 30 սահմանակետին: Թիվ 30 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անցնում 457 մ, հասնում թիվ 31 սահմանակետին, հետո թեքվում է հարավ-արևելք, անցնում 644 մ, հասնում թիվ 32 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է արևելք անցնում 358 մ, հասնում թիվ 33 սահմանակետին: Թիվ 33 սահմանակետից սահմանագիծը ճանապարհին զուգահեռ թեքվում է դեպի հարավ, անցնում 125 մ,

հասնում թիվ 34 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 35-38 սահմանակետերով անցնում 319 մ, հասնում թիվ 39 սահմանակետին: Թիվ 39 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 40-47 սահմանակետերով անցնում 628 մ, հասնում թիվ 48 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է արևելք, թիվ 49-50 սահմանակետերով անցնում 554 մ, հասնում թիվ 51 սահմանակետին: Թիվ 51 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 52-59 սահմանակետերով անցնում 930 մ, հասնում թիվ 60 սահմանակետին: Թիվ 60 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, թիվ 61-64 սահմանակետերով անցնում 691 մ, հասնում Ծավ, Ներքին Հանդ և Նռնաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 15980 մ է:

#### **ԾԱՎ – ՆՈՆԱՁՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Ե»-«Զ»**

Ծավ, Նռնաձոր և Շվանիձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, թիվ 1-2 սահմանակետերով անցնում է 1212 մ, հասնում է 2167.0 մ նիշ ունեցող բլրի գագաթի թիվ 3 սահմանակետին, այնուհետև ջրբաժանով թեքվելով դեպի հարավ-արևելք, թիվ 4-7 սահմանակետերով անցնելով 2242 մ, հասնում է 2367.0 մ նիշ ունեցող բլրի գագաթի թիվ 8 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 401 մ, հասնում է Ծավ, Ներքին Հանդ և Նռնաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3855 մ է:

#### **ԾԱՎ – ՇՎԱՆԻՁՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Զ»-«Է»**

Ծավ, Շվանիձոր և Ալվանք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս, անցնում 500մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը բլրի գագաթից, թամբով թեքվում է դեպի արևելք, ջրբաժանով անցնում 641մ, հասնում 2825.8 նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 2 սահմանակետին, այնուհետև ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 870մ, հասնում ջրբաժանի վրա գտնվող թիվ 3 սահմանակետին:

Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 188մ, հասնում 2621.0մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 4 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 410մ, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 412 մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 6 սահմանակետին, այնուհետև նույն ջրբաժանով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 384 մ, հասնում 2447.0 մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 7 սահմանակետին, այնուհետև նույն ջրբաժանով անցնում 359 մ, հասնում թամբի վրա գտնվող թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով անցնում է 475 մ, հասնում 2431.0 մ նիշ ունեցող բարձունքի վրա գտնվող թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 922 մ, ջրբաժանով հասնում 2329.0 մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանով անցնում 295մ, հասնում թիվ 11 սահմանակետին, որտեղից նույն ջրբաժանով թեքվում է նույն ուղղությամբ, հատում 2232.0մ, նիշ ունեցող լեռնանցքը, անցնում 601մ, հասնում թիվ 12 սահմանակետին, ապա անցնում է նույն ջրբաժանով, հասնում 2313 նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից, նույն ջրբաժանով անցնելով 186մ, հասնում է թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 382մ, հասնում 2356մ նիշ ունեցող բարձրունքի վրա գտնվող թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, անցնում 558մ, հատելով թամբը, հասնում 2366.9մ նիշ ունեցող «Գյումարանդաղ» բարձրունքի վրա գտնվող թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 159մ, հասնում նույն բլրի հյուսիսային մասում գտնվող թիվ 17 սահմանակետին, ապա նույն ջրբաժանով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 431մ, հասնում թիվ 18 սահմանակետին: Որտեղից ջրբաժանով, նույն ուղղությամբ անցնում է 240մ, հասնում թիվ 19 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի արևելք, անցնում 300մ, հասնում թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 323մ, հասնում 2059.0 մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 21 սահմանակետին: Թիվ 21 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 570մ, հասնում ջրհավաքի եզրին գտնվող թիվ 22 սահմանակետին: Թիվ 22 սահմանակետից սահմանագիծը ջրհավաքով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 23-24 սահմանակետերով անցնելով 646մ, հասնում թիվ 25 սահմանակետին: Թիվ 25

սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 598մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 26 սահմանակետին այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանով անցնում 500մ, հասնում 2373.0մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող Ծավ, Շվանիձոր և Նռնաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Է» սահմանագծի ընդհանուր երկարությունը 11114 մ է:

#### **ԾԱՎ – ԱԼՎԱՆՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Է»-«Ը»**

Ծավ, Ալվանք և Վարդանիձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է 3023.9 մ նիշ ունեցող լեռան գագաթին, սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-5 սահմանակետերով անցնում 1965 մ, հասնում 2821.0 մ նիշ ունեցող լեռան գագաթին գտնվող թիվ 6 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, անցնում 438 մ, հասնում Ծավ, Ալվանք և Շվանիձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետին:

«Է»-«Ը» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2403 մ է:

#### **ԾԱՎ – ՎԱՐԴԱՆԻՁՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Ը»-«Թ»**

Ծավ, Վարդանիձոր և Լիճք գյուղական համայնքների տարածքների բաժանման 2874.3մ բարձրություն ունեցող լեռան գագաթին գտնվող «Թ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 834 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 762 մ, հատելով դաշտային ճանապարհը, հասնում 2818.0 մ բարձրություն ունեցող եռանկյունաչափական կետին, որը հանդիսանում է թիվ 2 սահմանակետը: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը բարձունքներով, նույն ուղղությամբ, թիվ 3-5 սահմանակետերով անցնում է 2850 մ, հասնում 3249.0 մ նիշ ունեցող գագաթի թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը բարձունքներով թեքվում է դեպի հարավ, թիվ 7-8 սահմանակետերով անցնում 1422 մ, հասնում «Բայբուզան» լեռան գագաթին գտնվող թիվ 9 սահմանակետին, որտեղից բարձունքներով, ջրբաժանով թեքվում է հարավ-արևելք, թիվ 10-13 սահմանակետերով անցնում 1715 մ, հասնում 2931.3 մ նիշ ունեցող թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը կրկին բարձունքներով և ջրբաժանում թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 732 մ, հասնում 2931.3 մ նիշ

ունեցող թիվ 15 սահմանակետին, այնուհետև բարձրավանդակով, գազաթներով, ջրբաժանով թեքվում է դեպի հարավ, թիվ 16-20 սահմանակետերով անցնում 2129 մ, հասնում «ճգնավոր» լեռան գազաթին գտնվող Վարդանիձոր, Ծավ և Ալվանք գյուղական համայնքների տարածքների բաժանման 3023.9 մ բարձրություն ունեցող գազաթին գտնվող «Ը» հանգուցային սահմանակետին:

«Ը»-«Թ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 10444 մ է:

#### **ԾԱՎ – ԼԻՃՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Թ»-«Ժ»**

Ծավ, Լիճք և Լեռնաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «ժ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 862 մ, հասնում Ծավ, Լիճք և Վարդանիձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Թ» հանգուցային սահմանակետին:

«Թ»-«ժ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 862 մ է:

#### **ԾԱՎ – ԼԵՌՆԱՁՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Ժ»-«Ա»**

Ծավ, ճակատեն և Լեռնաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, լեռան լանջերով անցնում 3123 մ, հասնում թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, ձորերով, թիվ 2-7 սահմանակետերով անցնում 1473 մ, հասնում թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը նույն ուղղությամբ, թիվ 9 սահմանակետով անցնում է 296 մ, հասնում թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անցնում 519 մ, հասնում թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 12 սահմանակետով անցնում 898 մ, հասնում թիվ 13 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 14-15 սահմանակետերով անցնում 1270 մ, հասնում թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, թիվ 17-18 սահմանակետերով անցնում 1349 մ, հասնում թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, թիվ 20 սահմանակետով անցնում 1100 մ, հասնում թիվ 21 սահմանակետին: Թիվ 21 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 22 սահմանակետով անցնում 505 մ, հասնում Ծավ, Լեռնաձոր և Լիճք գյուղական համայնքների տարածքների բաժանման «ժ» հանգուցային սահմանակետին:

«ժ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 10536 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾՂՈՒԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ**

### **ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Ծղուկ գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսային մասում:

Համայնքը «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն), արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Սառնակունք գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Շաղատ գյուղական համայնքին, արևմուտքից «Դ»-«Ա» հատվածով՝ Գորայք գյուղական համայնքին:

### **ԾՂՈՒԿ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ)**

#### **ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը հանդնկնում է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանի հետ:

### **ԾՂՈՒԿ – ՍԱՌՆԱԿՈՒՆՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Ծղուկ, Սառնակունք համայնքների և պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Տուլյար գետի ափին, սահմանագիծը գետով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում Սիսիան ջրանցքը, ապա նույն գետով, թիվ 1 սահմանակետով անցնում է 5214 մ, հասնում է թիվ 2 սահմանակետին, այդտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, ընթացքում հատելով ջրբաժաններ և ձորակներ անցնելով 456 մ, հասնում է թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անցնում է 37 մ, հասնում թիվ 4 սահմանակետին, որը գտնվում է Մուխուրթարյան գետի ափին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, հասնում ճանապարհին և նույն ճանապարհի վրա գտնվող թիվ 5-9 սահմանակետերով անցնելով 289 մ, հասնում է թիվ 10 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թիվ 11-29 սահմանակետերով անցնելով 1772 մ, հասնում է թիվ 30 սահմանակետին, ապա կտրուկ թեքվում է հարավ-արևելք, թիվ 31-39 սահմանակետերով անցնում է 996 մ, հասնում թիվ 40 սահմանակետին: Թիվ 40

սահմանակետից սահմանագիծը կրկին թեքվում է հարավ-արևմուտք, ձորով, հատելով առուներ, թիվ 41-68 սահմանակետերով անցնում է 1347 մ, հասնում թիվ 69 սահմանակետին: Թիվ 69 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, ձորով, թիվ 70-97 սահմանակետերով անցնում 7345 մ, հասնում թիվ 98 սահմանակետին, այդտեղից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, հասնում ճանապարհին և ճանապարհով ու բնակավայրի կողքով, թիվ 98-105 սահմանակետերով անցնելով 2053 մ, հասնում է թիվ 106 սահմանակետին: Թիվ 106 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 107-113 սահմանակետերով անցնում է 1899 մ, հասնում թիվ 114 սահմանակետին, որտեղից կտրուկ թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 1357 մ, հասնում է Որոտան գետի ափին գտնվող թիվ 115 սահմանակետին: Թիվ 115 սահմանակետից սահմանագիծը Որոտան գետի ուղրաններով թիվ 115-135 սահմանակետերով անցնում է 3517 մ, հասնում վտակի հետ հատման տեղում գտնվող թիվ 136 սահմանակետին: Թիվ 136 սահմանակետից սահմանագիծը վտակով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, վտակով, հոսանքի հակառակ ուղղությամբ, թիվ 137-146 սահմանակետերով անցնում 3236 մ, հասնում Ծղուկ, Շաղատ, Սառնակունք համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 29518 մ է:

#### **ԾՂՈՒԿ – ՇԱՂԱՏ ՍԱՐՆԱԿՈՒՆԵՐԸ՝ «Գ»-«Դ»**

Ծղուկ, Գորայք և Շաղատ գյուղական համայնքների տարածքների հողերի բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով ճանապարհը և գետը անցնում է 1406 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, այնուհետև նույն ուղղությամբ անցնում է 1261 մ, հասնում ջրբաժանի թիվ 2 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 1083 մ, հասնում է թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, անցնում 647 մ, հասնում է թիվ 4 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք, հատելով ձորը, գետը, թիվ 5 սահմանակետով անցնում է 1565 մ, հասնում է թիվ 6 սահմանակետին, ապա թեքվում հյուսիս-արևելք, թիվ 7-8 սահմանակետերով անցնում 1879 մ, հասնում թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնելով 545 մ, հասնում է Գորայք, Սառնակունք և Շաղատ համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 8386 մ է:

#### **ԾՂՈՒԿ – ԳՈՐԱՅՔ ՍԱՐՆԱԿՈՒՆԵՐԸ՝ «Դ»-«Ա»**

Ծղուկ, Գորայք գյուղական համայնքների և պետական սահմանին (Ադրբեջանի Յանրապետություն) տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 1-40 սահմանակետերով դաշտային ճանապարհով, ձորակներով ու ձորերով անցնում է 2812 մ, հասնում թիվ 41 սահմանակետին, ապա լանջով թեքվում է հարավ-արևելք թիվ 42-48 սահմանակետերով անցնում 784 մ, հասնում թիվ 49 սահմանակետին: Թիվ 49 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անցնում 557 մ, հասնում թիվ 50 սահմանակետին, այդտեղից սահմանագիծը Կոշաբուլախ գետով թեքվում է դեպի հարավ, անցնելով 5849 մ, հասնում թիվ 51 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը հատվելով Որոտան գետի հետ, հոսանքի հակառակ ուղղությամբ թիվ 52-63 սահմանակետերով անցնելով 1042 մ, հասնում է Որոտան գետի ափին գտնվող թիվ 64 սահմանակետին: Թիվ 64 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 65-66 սահմանակետերով անցնելով 1035 մ, հասնում է թիվ 67 սահմանակետին, որից հետո ջրբաժանով թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 68-71 սահմանակետերով անցնում 918 մ, հասնում է թիվ 72 սահմանակետին: Թիվ 72 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհով հատելով առուներ, ձորակներ և ջրբաժան առուներով թիվ 73-89 սահմանակետերով անցնելով 5110 մ, հասնում է թիվ 90 սահմանակետին: Թիվ 90 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, հատելով դաշտային ճանապարհներ, ձորակներ և ձորեր, թիվ 91-109 սահմանակետերով անցնում է 3104 մ, հասնում թիվ 110 սահմանակետին: Թիվ 110 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 542 մ, հասնում թիվ 111 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հարավ, ապա հարավ-արևելք, հետո հարավ-արևմուտք և թիվ 112-133 սահմանակետերով անցնում 2060 մ, հասնում է թիվ 134 սահմանակետին: Թիվ 134 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, ապա հարավ-արևելք, անցնելով ջրբաժանով, հատելով ձորը և դաշտային ճանապարհը, թիվ 135-143 սահմանակետերով անցնելով 3902 մ, հասնում է ճանապարհի խաչմերուկում գտնվող թիվ 144 սահմանակետին: Թիվ 144 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնելով 465 մ, հասնում է Գորայք, Ծղուկ և Շաղատ գյուղական միհամայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 28180 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՂՆՈՒՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Կաղնուտ գյուղական համայնքը գտնվում է մարզի կենտրոնական մասում:

Համայնքը արևելքից և հյուսիս-արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն), հարավից «Բ»-«Գ» հատվածով սահմանակից է Ուժանիս գյուղական համայնքին, արևմուտքից «Գ»-«Դ» հատվածով՝ Արծվանիկ գյուղական համայնքին, հյուսիս-արևմուտքից «Դ»-«Ա» հատվածով՝ Դավիթ Բեկ գյուղական համայնքին:

### **ԿԱՂՆՈՒՏ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Ա»-«Բ»**

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը համընկնում է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանի հետ:

### **ԿԱՂՆՈՒՏ – ՈՒԺԱՆԻՍ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Կաղնուտ, Ուժանիս և Արծվանիկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 350 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս-արևելք, ապա հարավ-արևելք, թիվ 2 սահմանակետով անցնում 273 մ, հասնում թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 139 մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 4 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, հատվում դաշտային ճանապարհների հետ, անտառի եզրով անցնում 366 մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս, անտառի միջով անցնում 151 մ, հասնում թիվ 6 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, անցնում 453 մ, հասնում թիվ 7 սահմանակետին, հետո թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 8-9 սահմանակետերով անցնում 676 մ, հասնում անտառի եզրին գտնվող թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևելք, անտառի եզրագծի ոլորաններով, թիվ 11-31

սահմանակետերով անցնում 1774 մ, հասնում թիվ 32 սահմանակետին: Թիվ 32 սահմանակետից սահմանագիծը դաձյալ անտառի եզրագծով, թիվ 33 սահմանակետով անցնում է 190 մ, հասնում Կաղնուտ, Ուժանիս գյուղական համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4372 մ է:

### **ԿԱՂՆՈՒՏ – ԱՐԾՎԱՆԻԿ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Կաղնուտ, Դավիթ Բեկ և Արծվանիկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ձորով անցնում 639 մ, հասնում է թիվ 1 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է արևմուտք, թիվ 2 սահմանակետով անցնում 408 մ, հասնում է թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք և թիվ 4-9 սահմանակետերով անցնում է 722 մ, հասնում է թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, հատում ձորակներ, դաշտային ճանապարհներ և թիվ 11-12 սահմանակետերով, ժայռի եզրով անցնում 340 մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 14 սահմանակետով, անտառի եզրով, սարալանջով և ջրբաժանով անցնում է 844 մ, հասնում առվի եզրին տեղադրված թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, այնուհետև հարավ, թիվ 16 սահմանակետով անցնելով 373 մ, հասնում է Կարակիտու գետի ափին գտնվող թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը գետով, թիվ 18-20 սահմանակետերով անցնելով 450 մ, հասնում է թիվ 21 սահմանակետին: Թիվ 21 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնելով 129 մ, հասնում է թիվ 22 սահմանակետին: Թիվ 22 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 23 սահմանակետով անցնելով 257 մ, հասնում թիվ 24 սահմանակետին: Թիվ 24 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, սարալանջով, թիվ 25-27 սահմանակետերով անցնելով 514 մ, հասնում է դաշտային ճանապարհի մոտ գտնվող թիվ 28 սահմանակետին: Թիվ 28 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, անցնելով 286 մ, հասնում թիվ 29 սահմանակետին: Թիվ 29 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 30-31 սահմանակետերով, ձորակներով անցնելով 681 մ, հասնում ժայռի եզրին գտնվող թիվ 32

սահմանակետին: Թիվ 32 սահմանակետից սահմանագիծը ժայռի եզրագծով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 33-37 սահմանակետերով անցնելով 684 մ, հասնում ժայռի եզրին գտնվող թիվ 38 սահմանակետին: Թիվ 38 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հատում է ձորակներ, դաշտային ճանապարհը, ժայռի եզրով, թիվ 39-41 սահմանակետերով անցնելով 1215 մ, հասնում է Կաղնուտ, Արծվանիկ և Ուժանիս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7544 մ է:

#### **ԿԱՂՆՈՒՏ – ԴԱՎԻԹ ԲԵԿ ՍԱՅՍԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ա»**

Կաղնուտ, Դավիթ Բեկ գյուղական համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը լանջերով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 1313 մ, հասնում թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը լանջով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ, թիվ 5 սահմանակետով անցնում 675 մ, հասնում անտառի եզրին գտնվող թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը անտառի միջով թեքվում է դեպի արևմուտք, թիվ 7-17 սահմանակետերով անցնում 1630 մ, հասնում թիվ 18 սահմանակետին: Թիվ 18 սահմանակետից սահմանագիծը անտառի եզրագծով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ապա հարավ-արևելք, թիվ 19-21 սահմանակետերով անցնում 671 մ, հասնում գետի ափին գտնվող թիվ 22 սահմանակետին, որտեղից գետով թեքվում է հարավ-արևելք, անցնում 249 մ, հասնում Կաղնուտ, Դավիթ Բեկ և Արծվանիկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4538 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՐՃԵՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Կարճևան գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավարևմտյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Կուրիս գյուղական համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Մեղրի քաղաքային համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ պետական սահմանին (Իրանի Իսլամական Հանրապետություն), արևմուտքից «Դ»-«Ա» հատվածով՝ պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն):

### **ԿԱՐՃԵՎԱՆ – ԿՈՒՐԻՍ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Կարճևան, Կուրիս գյուղական համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից , որը գտնվում է Ջանգեզուր լեռնաշղթայի վրա, սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 348 մ, հասնում Կարճևան գետի ափին գտնվող թիվ 1 սահմանակետին, որտեղից նշված գետով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 2-5 սահմանակետերով անցնում 1698 մ, հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 195 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 7 սահմանակետին, որտեղից թեքվում դեպի արևելք, անցնում 198 մ, հասնում 1355.0 մ նիշ ունեցող թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը ջրհավաքով թեքվում է դեպի հյուսիս, թիվ 9-10 սահմանակետերով անցնում 1252 մ, հասնում 1869.9 մ նիշ ունեցող «Ստեփանանց գյաղակ» եռանկյունաչափական կետին, որը հանդիսանում է թիվ 11 սահմանակետը: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, անցնում 879 մ, հասնում է ջրբաժանի վրա գտնվող թիվ 12 սահմանակետին, այնուհետև ջրբաժանով թեքվում դեպի հարավ-արևելք, թիվ 13-14 սահմանակետերով անցնելով 786 մ, հասնում ճանապարհի եզրին գտնվող 1234.1 մ նիշ ունեցող թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է նույն ուղղությամբ, ջրբաժանով անցնում 348 մ, հասնում 1169.2 մ նիշ ունեցող թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, անցնում 551 մ, հասնում 1117.4 մ նիշ

ունեցող թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է կրկին դեպի արևելք, անցնում 131 մ, հասնում թիվ 18 սահմանակետին, այնուհետև ջրբաժանով թեքվում դեպի հարավ-արևելք, թիվ 19-20 սահմանակետերով անցնում 1411 մ, հասնում բլրի գագաթին գտնվող Կարճևան, Կուրիս գյուղական և Մեղրի քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7797 մ է:

#### **ԿԱՐՃԵՎԱՆ – ՄԵՂՐԻ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Բ» - «Գ»**

Մեղրի քաղաքային, Կարճ7ան և Կուրիս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է բլրի գագաթին, սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ, անցնում 271 մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 1 սահմանակետին, այնուհետև նույն ջրբաժանով թեքվում դեպի հարավ-արևմուտք, թիվ 2 սահմանակետով անցնում 581 մ, հասնում թիվ 3 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ, անցնում 250 մ, հասնում 1176.3 մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, Սիզնախի լեռնաշղթայով, թիվ 5 սահմանակետով անցնում 758 մ, հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը նույն լեռնաշղթայով թեքվում է դեպի հարավ, թիվ 7-9 սահմանակետերով անցնում 903 մ, հասնում 1118.0 մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք անցնում 112 մ, հասնում թիվ 11 սահմանակետին, ապա ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 326 մ, հասնում թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 238 մ, հասնում թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում դեպի հարավ-արևմուտք, անցնում 411 մ, հասնում 1022.4 մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվում դեպի հարավ-արևելք թիվ 15 սահմանակետով անցնում 713 մ, հասնում 929.2 մ նիշ ունեցող ժայռի գագաթին գտնվող թիվ 16 սահմանակետին, այնուհետև թեքվում դեպի հարավ-արևելք, թիվ 17 սահմանակետով անցնելով 1286մ, հատելով երկաթգիծը, ապա ճանապարհը, հասնում Արաքս գետի մոտ գտնվող, Կարճևան գյուղական, Մեղրի քաղաքային համայնքների և պետական սահման (Իրանի Իսլամական Հանրապետության) տարածքների բաժանման, «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ» - «Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5849 մ է:  
**ԿԱՐՃԵՎԱՆ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ)**  
**ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ» - «Դ»**

«Գ»-«Դ» հատվածով սահմանագիծը համընկնում է Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության պետական սահմանի հետ:

**ԿԱՐՃԵՎԱՆ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԱՂՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ)**  
**ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ» - «Ա»**

«Դ»-«Ա» հատվածով սահմանագիծը համընկնում է Հայաստանի Հանրապետության և Աղբբեջանի Հանրապետության պետական սահմանի հետ:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿՈՒՐԻՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Կուրիս գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավարևմտյան մասում:

Համայնքը հյուսիսից և արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Գուղեմնիս գյուղական համայնքին, հարավից «Բ»-«Գ» հատվածով՝ Մեղրի քաղաքային համայնքին, «Գ»-«Դ» հատվածով՝ Կարճևան գյուղական համայնքին, արևմուտքից «Դ»-«Ա» հատվածով՝ պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն):

### **ԿՈՒՐԻՍ -ԳՈՒԴԵՄՆԻՍ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Կուրիս, Գուղեմնիս գյուղական համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ձորակով թեքվում է դեպի արևելք, թիվ 1-5 սահմանակետերով անցնում 942 մ, հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 7-9 սահմանակետերով անցնում 2124 մ, հասնում թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ջրբաժանով, ճանապարհի և անտառի եզրով, թիվ 11-12 սահմանակետերով անցնում 1128 մ, հասնում Կարճևանի ջրանցքի եզրին գտնվող թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 467 մ, հասնում թիվ 14 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, անցնում 81 մ, հասնում ջրհավաքի թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը նույն ջրհավաքով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 16-18 սահմանակետերով անցնում 811 մ, հասնում թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 142 մ, հասնում վարելահողի եզրին գտնվող թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, վարելահողի եզրով, թիվ 21-22 սահմանակետերով անցնում 891 մ, հասնում թիվ 23 սահմանակետին: Թիվ 23 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 798 մ, հասնում ջրբաժանի վրա գտնվող թիվ 24 սահմանակետին:

Թիվ 24 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 1103 մ, հասնում ճանապարհի եզրին գտնվող թիվ 25 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 26-28 սահմանակետերով անցնում 1073 մ, հասնում թիվ 29 սահմանակետին: Թիվ 29 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 187մ, հասնում թիվ 30 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 219մ, հասնում ջրհավաքի եզրին գտնվող թիվ 31 սահմանակետին, որտեղից ջրհավաքով թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 162 մ, հասնում թիվ 32 սահմանակետին, կրկին ջրհավաքով թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 247 մ, հասնում թիվ 33 սահմանակետին: Թիվ 33 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ, թիվ 34 սահմանակետով անցնում 1011 մ, հասնում բարձունքի վրա գտնվող Կուրիս, Գուդեննիս գյուղական և Մեղրի քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 11386 մ է:

#### **ԿՈՒՐԻՍ – ՄԵՂՐԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Բ»-«Գ»**

Կուրիս, Կարճևան գյուղական և Մեղրի քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 275 մ, հասնում 1256.1 մ միջ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի արևմուտք, ջրբաժանով անցնում 248 մ, հասնում բլրի գագաթին գտնվող Կուրիս, Կարճևան գյուղական և Մեղրի քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 523 մ է:

#### **ԿՈՒՐԻՍ – ԿԱՐՃԵՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Գ»-«Դ»**

Կուրիս, Կարճևան գյուղական համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից , որը գտնվում է Ջանգեզուր լեռնաշղթայի վրա, սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 348 մ, հասնում Կարճևան գետի ափին գտնվող թիվ 1 սահմանակետին, որտեղից նշված գետով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 2-5 սահմանակետերով անցնում 1698 մ, հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-

արևելք, անցնում 195 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 7 սահմանակետին, որտեղից թեքվում դեպի արևելք, անցնում 198 մ, հասնում 1355.0 մ նիշ ունեցող թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը ջրհավաքով թեքվում է դեպի հյուսիս, թիվ 9-10 սահմանակետերով անցնում 1252 մ, հասնում 1869.9 մ նիշ ունեցող «Ստեփանանց գյաղակ» եռանկյունաչափական կետին, որը հանդիսանում է թիվ 11 սահմանակետը: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, անցնում 879 մ, հասնում է ջրբաժանի վրա գտնվող թիվ 12 սահմանակետին, այնուհետև ջրբաժանով թեքվում դեպի հարավ-արևելք, թիվ 13-14 սահմանակետերով անցնելով 786 մ, հասնում ճանապարհի եզրին գտնվող 1234.1 մ նիշ ունեցող թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է նույն ուղղությամբ, ջրբաժանով անցնում 348 մ, հասնում 1169.2 մ նիշ ունեցող թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, անցնում 551 մ, հասնում 1117.4 մ նիշ ունեցող թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է կրկին դեպի արևելք, անցնում 131 մ, հասնում թիվ 18 սահմանակետին, այնուհետև ջրբաժանով թեքվում դեպի հարավ-արևելք, թիվ 19-20 սահմանակետերով անցնում 1411 մ, հասնում բլրի գագաթին գտնվող Կուրիս, Կարճևան գյուղական և Մեղրի քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7797 մ է:

**ԿՈՒՐԻՍ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՅՄԱՆ (ԱՊՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ)  
ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ա»**

«Դ»-«Ա» հատվածով սահմանագիծը համընկնում է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանի հետ:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱԼԻՉՈՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Հալիձոր գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսային մասում:

Համայնքը հյուսիսից և արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Շինուհայր գյուղական համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Բարձրավան գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Աղվանի գյուղական համայնքին, արևմուտքից «Դ»-«Ե» հատվածով՝ Տանձատափ գյուղական համայնքին, «Ե»-«Զ» հատվածով՝ Տաթև գյուղական համայնքին, «Զ»-«Ա» հատվածով՝ Հարժիս գյուղական համայնքին:

### **ՀԱԼԻՉՈՐ-ՇԻՆՈՒՀԱՅՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Հալիձոր, Շինուհայր և Հարժիս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հյուսիս-արևելք թիվ 1 սահմանակետով անցնում 478մ, հասնում թիվ 2 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 359մ, հասնում է թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք անցնում 386մ, հասնում է թիվ 4 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 159մ, հասնում է թիվ 5 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 6-7 սահմանակետերով անցնում 497մ, հասնում ճանապարհների հատման տեղում գտնվող թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 9-22 սահմանակետերով անցնում 2024մ, հասնում թիվ 23 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 259մ, հասնում թիվ 24 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք, անցնում 201մ, հասնում թիվ 25 սահմանակետին: Թիվ 25 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ճանապարհի ոլորաններով, թիվ 26-33 սահմանակետերով անցնում 1501մ, հասնում թիվ 34 սահմանակետին: Թիվ 34 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 529մ, հասնում թիվ 35 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 36-39 սահմանակետերով անցնում 858մ, հասնում թիվ 40

սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ և հարավ-արևելք, թիվ 41-42 սահմանակետերով անցնում 1466մ, հասնում է Հալիձոր, Բարձրավան և Շինուհայր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 8717մ է:

### **ՀԱԼԻՁՈՐ-ԲԱՐՉՐԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Բ»-«Գ»**

Հալիձոր, Բարձրավան և Աղվանի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Որոտան գետի վտակի ափին, սահմանագիծը վտակով, ապա Որոտան գետով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1 սահմանակետով անցնում 367մ, հասնում թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք թիվ 3-4 սահմանակետերով անցնում 375մ, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 231մ, հասնում ժայռի գագաթին գտնվող թիվ 6 սահմանակետին, այնուհետև հատելով ժայռերը, թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 104մ, հասնում թիվ 7 սահմանակետին, ապա նորից ժայռերով նույն ուղղությամբ, թիվ 8-9 սահմանակետերով անցնում է 1029մ, հասնում թիվ 10 սահմանակետին, որը գտնվում է գետի ափին, որտեղից թեքվում է դեպի հարավ, թիվ 11-13 սահմանակետերով անցնում 941մ, հասնում թիվ 14 սահմանակետին, որը գտնվում է Որոտան գետի վտակի ափին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 172մ, հասնում թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 66մ, հասնում թիվ 16 սահմանակետին, որը գտնվում է ժայռի գագաթին, այստեղից սահմանագիծը ժայռի գագաթով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնելով 71մ, հասնում թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը կտրուկ թեքվում է դեպի հարավ, անցնում 572մ, հասնում ձորի բերանի թիվ 18 սահմանակետին: Թիվ 18 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ձորով, ապա լանջով թիվ 19-22 սահմանակետերով անցնում 836մ, հասնում թիվ 23 սահմանակետին, ապա թեքվելով դեպի հարավ, թիվ 24-31 սահմանակետերով անցնելով 1092մ, հասնում ժայռի գագաթի թիվ 32 սահմանակետին: Թիվ 32 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք թիվ 33-34 սահմանակետերով, անցնում 782մ, հասնում թիվ 35 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հարավ, անցնում 412մ, հասնում Հալիձոր, Աղվանի և Տանձատափ

գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7050մ է:

### **ՀԱԼԻՉՈՐ-ԱՂՎԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Գ»-«Դ»**

Հալիճոր, Բարձրաշեն և Աղվանի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային «Գոլուկայա» կոչվող եռանկյունաչափական սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 202մ, հասնում թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, հատում ջրբաժանը, անցնում է 463մ, հասնում է թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 3-4 սահմանակետերով անցնում 257մ, հասնում թիվ 5 սահմանակետին, որը գտնվում է ժայռի եզրին, ապա թեքվում է արևելք, թիվ 6 սահմանակետով անցնում 277մ, հասնում Հալիճոր Աղվանի և Տանձատափ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1199մ է:

### **ՀԱԼԻՉՈՐ-ՏԱՆՁԱՏԱՓ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Դ»-«Ե»**

Հալիճոր, Տանձատափ և Աղվանի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Որոտան գետի ափին, սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 1-2 սահմանակետերով անցնում 690մ, հասնում թիվ 3 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 4-7 սահմանակետերով անցնում 800մ, հասնում թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 519մ, հասնում թիվ 9 սահմանակետին, այստեղից ժայռերով թեքվում դեպի հարավ-արևմուտք, թիվ 10-12 սահմանակետերով անցնում 1198մ, հասնում թիվ 13 սահմանակետին, ապա կրկին թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 679մ, հատում է ձորերը, առուն, ժայռի վրա գտնվող թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը դարձյալ թեքվում է դեպի հարավ-արևմուտք, և անտառի եզրագծով անցնում 610մ, հասնում թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից դասահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 516մ, հասնում թիվ 16 սահմանակետին, ապա թեքվում է արևելք, անցնում 177մ, հասնում թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը նորից թեքվելով

դեպի հարավ-արևելք՝ ժայռերի եզրագծով, թիվ 18-20 սահմանակետերով, անցնում 778մ, հասնում է թիվ 21 սահմանակետին: Թիվ 21 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 406մ, հասնում է թիվ 22 սահմանակետին: Թիվ 22 սահմանակետից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 23 սահմանակետով անցնում 366մ, հասնում «Գոլուկայա» կոչվող եռանկյունաչափական կետին, որը հանդիսանում է Հալիձոր, Տաթև և Հարժիս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետը:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6739 մ է:

### **ՀԱԼԻՉՈՐ-ՏԱԹԵՎ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Ե»-«Զ»**

Հալիձոր, Տաթև և Հարժիս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Որոտան գետի ափին, սահմանագիծը Որոտան գետով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 420մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 556մ, հասնում թիվ 2 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք, անցնում 503մ, անտառով հասնում թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 4-13 սահմանակետերով անցնում 2909մ, հասնում Հալիձոր, Տանձատափ և Տաթև գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4388մ է:

### **ՀԱԼԻՉՈՐ-ՀԱՐԺԻՍ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Զ»-«Ա»**

Հալիձոր, Հարժիս և Շինուհայր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 200մ, հասնում թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևմուտք, թիվ 2 սահմանակետով անցնում 679մ, հասնում է թիվ 3 սահմանակետին, որտեղից առվով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 549մ, հասնում է թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 5-8 սահմանակետերով անցնում 956մ, հասնում առվի և ճանապարհի հատման թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ, թիվ 10 սահմանակետով անցնում

374մ, հասնում թիվ 11 սահմանակետին, ապա թեքվում հյուսիս-արևելք և հարավ-արևմուտք, թիվ 12-18 սահմանակետերով անցնում 1566մ, հասնում ժայռի վրա գտնվող թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հյուսիս-արևելք, ժայռերով և թիվ 20-24 սահմանակետերով անցնելով 1037մ, հասնում է թիվ 25 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 646մ, հասնում թիվ 26 սահմանակետին, ապա կտրուկ թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 186մ, հատում ձորը և հասնում անտառեզրի թիվ 27 սահմանակետին, ապա թեքվում դեպի հարավ-արևելք, անտառով, թիվ 28-31 սահմանակետերով անցնում 1134մ, հատելով ձորերը, ձորակները, դաշտային ճանապարհները, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 32 սահմանակետին, որտեղց թեքվում է հյուսիս-արևմուտք, ապա հարավ-արևմուտք, ձորով, թիվ 33-34 սահմանակետերով անցնում 570մ, հասնում Որոտան գետի ափին գտնվող Հալիձոր, Հարժիս և Տաթև գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ձ» հանգուցային սահմանակետին:

«Ձ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7897մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՐԺԻՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Հարժիս գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսարևմտյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Ակներ գյուղական համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Շինուհայր գյուղական համայնքին, հարավ-արևելքից «Գ»-«Դ» հատվածով՝ Հալիձոր գյուղական համայնքին, հարավից «Դ»-«Ե» հատվածով՝ Տաթև գյուղական համայնքին, արևմուտքից «Ե»-«Զ» հատվածով՝ Լծեն գյուղական համայնքին, «Զ»-«Է» հատվածով՝ Դարպաս գյուղական համայնքին, «Է»-«Ը» հատվածով՝ Որոտան գյուղական համայնքին, «Է»-«Ը» հատվածով՝ Վաղատնի գյուղական համայնքին:

### **ՀԱՐԺԻՍ - ԱԿՆԵՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Հարժիս, Ակներ և Վաղատն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է սարալանջին, սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, լանջով անցնում 251 մ, հասնում թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը լանջով թեքվում է հարավ-արևելք, թիվ 2-19 սահմանակետերով անցնում 1123 մ, հասնում Հարժիս, Ակներ և Շինուհայր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1374 մ է:

### **ՀԱՐԺԻՍ – ՇԻՆՈՒՀԱՅՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Հարժիս, Շինուհայր և Բռուն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը լանջով թեքվում է դեպի հարավ, թիվ 1 սահմանակետով անցնում 671մ, հասնում սարի գագաթին գտնվող թիվ 2 սահմանակետին, որտեղից բարձրունքներով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 3-5 սահմանակետերով անցնում 2277մ, հատելով ձորը, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը լանջերով թեքվում է կրկին դեպի հարավ-արևելք, թիվ 7 սահմանակետով, անցնում 1680մ, հատելով ձորեր և դաշտային

ճանապարհներ, հասնում լեռան գագաթին գտնվող թիվ 8 սահմանակետին, այնուհետև ջրբաժանով, լանջով թեքվում է հարավ, ապա հարավ-արևմուտք, թիվ 9 սահմանակետով անցնում 3291մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 11-23 սահմանակետերով անցնում 1107մ, հասնում Գորիս-Անգեղակոթ միջհամայնքային ճանապարհի եզրին գտնվող թիվ 24 սահմանակետին: Թիվ 24 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, թիվ 25 սահմանակետով անցնում 533մ, հասնում թիվ 26 սահմանակետին, որտեղից լանջով թեքվում է հարավ-արևելք, անցնում 696մ, հասնում թիվ 27 սահմանակետին: Թիվ 27 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 373մ, հատելով միջհամայնքային ճանապարհը, հասնում թիվ 28 սահմանակետին, որտեղից քարակույտերի մոտով, թիվ 29 սահմանակետով, անցնում 546մ, հասնում թիվ 30 սահմանակետին: Թիվ 30 սահմանակետից սահմանագիծը լանջով թեքվում է դեպի հարավ, անցնում 369մ, հասնում թիվ 31 սահմանակետին, ապա լանջով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 342մ, հասնում ձորի և ճանապարհի հատման տեղում գտնվող թիվ 32 սահմանակետին: Թիվ 32 սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 119մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 33 սահմանակետին: Թիվ 33 սահմանակետից սահմանագիծը առվով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 34-39 սահմանակետերով անցնում 1068մ, հասնում թիվ 40 սահմանակետին: Թիվ 40 սահմանակետից սահմանագիծը նույն ուղղությամբ լեռնալանջով, թիվ 41-44 սահմանակետերով անցնում է 1895մ, հասնում լեռան ստորոտի դաշտային ճանապարհի եզրին գտնվող Չարժիս, Շինուհայր և Չալիձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 14967 մ է:

### **ՉԱՐԺԻՍ – ՉԱԼԻԶՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Չարժիս, Շինուհայր և Չալիձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 200մ, հասնում թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևմուտք, թիվ 2 սահմանակետով անցնում 679մ, հասնում է թիվ 3 սահմանակետին, որտեղից առվով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 549մ, հասնում է թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 5-8

սահմանակետերով անցնում 956մ, հասնում առվի և ճանապարհի հատման թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ, թիվ 10 սահմանակետով անցնում 374մ, հասնում թիվ 11 սահմանակետին, ապա թեքվում հյուսիս-արևելք և հարավ-արևմուտք, թիվ 12-18 սահմանակետերով անցնում 1566մ, հասնում ժայռի վրա գտնվող թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հյուսիս-արևելք, ժայռերով և թիվ 20-24 սահմանակետերով անցնելով 1037մ, հասնում է թիվ 25 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 646մ, հասնում թիվ 26 սահմանակետին, ապա կտրուկ թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 186մ, հատում ձորը և հասնում անտառեզրի թիվ 27 սահմանակետին, ապա թեքվում դեպի հարավ-արևելք, անտառով, թիվ 28-31 սահմանակետերով անցնում 1134մ, հատելով ձորերը, ձորակները, դաշտային ճանապարհները, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 32 սահմանակետին, որտեղց թեքվում է հյուսիս-արևմուտք, ապա հարավ-արևմուտք, ձորով, թիվ 33-34 սահմանակետերով անցնում 570մ, հասնում Որոտան գետի ափին տեղադրված Հարժիս, Հալիձոր և Տաթև գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7897 մ է:

### **ՀԱՐՇԻՍ – ՏԱԹԵՎ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

Հարժիս, Տաթև և Լծեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Որոտան գետի ափին, սահմանագիծը Որոտան գետի հոսանքով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-43 սահմանակետերով անցնում 7560 մ, հասնում Հարժիս, Տաթև և Հալիձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7560 մ է:

### **ՀԱՐՇԻՍ – ԼԾԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»**

Հարժիս, Լծեն և Դարպաս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Երևան-Գորիս հանրապետական նշանակության ճանապարհի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 676 մ, հասնում թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, լանջով, թիվ 5 սահմանակետով

անցնում 976 մ, հասնում թիվ 6 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, լեռնալանջով, թիվ 7-14 սահմանակետերով անցնելով 3031 մ, հասնում Շիշթափա լեռան գագաթին գտնվող թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը կրկին թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 300 մ, հասնում Ժայռի վրա գտնվող թիվ 16 սահմանակետին, այնուհետև շարունակվում է նույն ուղղությամբ, անցնում 804 մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 17 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 794 մ, հասնում Որոտան գետի ափին գտնվող թիվ 18 սահմանակետին: Թիվ 18 սահմանակետից սահմանագիծը Որոտան գետով՝ հոսանքի ուղղությամբ, թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 19-30 սահմանակետերով անցնում 2566 մ, հասնում Հարժիս, Լժեն և Տաթև գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 9147 մ է:

#### **ՀԱՐԺԻՍ – ԴԱՐՊԱՍ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Զ»-«Ե»**

Հարժիս, Դարպաս և Որոտան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-2 սահմանակետերով անցնում 1492 մ, հասնում Հարժիս, Լժեն և Դարպաս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1492 մ է:

#### **ՀԱՐԺԻՍ – ՈՐՈՏԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Ը»**

Հարժիս, Որոտան և Վաղատնի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 650 մ, հատելով ձորակը և դաշտային ճանապարհը, հասնում թիվ 4 սահմանակետին, որտեղից լանջով թեքվում է նույն ուղղությամբ, թիվ 5-7 սահմանակետերով անցնում 525 մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը լանջով թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 9 սահմանակետով անցնում 352 մ, հասնում թիվ 10 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք, անցնում 560 մ, հատելով բարձր լարման գիծը, հասնում

Հարժիս, Դարպաս և Որոտան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետին:

«Է»-«Ը» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2087 մ է:

### **ՀԱՐԺԻՍ – ՎԱՂԱՏՆԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ը»-«Ա»**

Հարժիս, Բռուն և Վաղատնի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը լանջով թեքվում է դեպի հարավ, անցնում 1618 մ, հատելով Սյունիքի լեռնաշղթան, ձորեր, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից լանջով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 967 մ, հասնում լեռան գագաթին գտնվող թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը կրկին լանջով թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 3 սահմանակետով անցնում 2145 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 4 սահմանակետին, որտեղից ձորով անցնում է 272 մ, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը նույն ուղղությամբ անցնում է 176 մ, հասնում ճանապարհի եզրին գտնվող Հարժիս, Որոտան և Վաղատնի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետին:

«Ը»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5178 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՉՈՐԱՍՏԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Չորաստան գյուղական համայնքը գտնվում է մարզի կենտրոնական մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Վանեք գյուղական համայնքին, «Բ»-«Գ» հատվածով՝ Օխտար գյուղական համայնքին, արևելքից «Գ»-«Դ» հատվածով՝ Առաջաձոր գյուղական համայնքին, «Դ»-«Ե» հատվածով՝ Կապան քաղաքային համայնքին, հարավից և արևմուտքից «Ե»-«Ա» հատվածով՝ Լեռնաձոր գյուղական համայնքին:

### **ՉՈՐԱՍՏԱՆ – ՎԱՆԵՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Չորաստան, Վանեք և Լեռնաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 1-2 սահմանակետերով անցնում 807 մ, հասնում է թիվ 3 սահմանակետին, որտեղից թեքվելով հարավ-արևելք, թիվ 4-7 սահմանակետերով անցնում է 1716 մ, հասնում թիվ 8 սահմանակետին, այնուհետև թեքվելով արևելք, թիվ 9-18 սահմանակետերով անցնելով 1758 մ, հասնում է թիվ 19 սահմանակետին, ապա թեքվելով հյուսիս-արևելք, թիվ 20-22 սահմանակետերով անցնում 1464 մ, հասնում է թիվ 23 սահմանակետին, որտեղից թեքվելով արևելք, թիվ 24-27 սահմանակետերով անցնում է 1716 մ, հասնում թիվ 28 սահմանակետին, այնուհետև թեքվելով հարավ, թիվ 29 սահմանակետով անցնում է 613 մ, հասնում է թիվ 30 սահմանակետին, ապա կտրուկ թեքվում է արևելք, անցնում է 109 մ, հասնում է թիվ 31 սահմանակետին, որտեղից թեքվելով հարավ-արևմուտք, թիվ 32-36 սահմանակետերով անցնում է 624 մ, հասնում է թիվ 37 սահմանակետին, այնուհետև թեքվելով հյուսիս-արևելք, թիվ 38-42 սահմանակետերով անցնում է 1511 մ, հասնում Չորաստան, Վանեք և Օխտար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 10318 մ է:

### **ՉՈՐԱՍՏԱՆ – ՕԽՏԱՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Ձորաստան, Օխտար և Վանեք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 1 սահմանակետով անցնում 277 մ, հասնում դաշտային ճանապարհների հատման թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվելով արևելք, դաշտային ճանապարհով, թիվ 3-7 սահմանակետերով անցնում 468 մ, հասնում թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 95 մ, հասնում թիվ 9 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հարավ, անցնում 59 մ, հասնում թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևելք, անցնում 65 մ, հասնում թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծ թեքվում է հյուսիս, անցնում 68 մ, հասնում թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 99 մ, հասնում թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 213 մ, հասնում թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 15-19 սահմանակետերով անցնում 677 մ, հասնում թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 21-22 սահմանակետերով անցնում 270 մ, հասնում թիվ 23 սահմանակետին: Թիվ 23 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, Չանախչի գետով, թիվ 24-33 սահմանակետերով անցնում 1422 մ, հասնում Ձորաստան, Օխտար և Առաջաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3714 մ է:

### **ՁՈՐԱՍՏԱՆ – ԱՌԱՋԱՁՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Ձորաստան, Առաջաձոր և Օխտար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը գետով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 2336 մ, հասնում գետի ափին գտնվող թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 2 սահմանակետով անցնում 176 մ, հասնում թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անցնում 231 մ, հասնում թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 5 սահմանակետով անցնում 320 մ, հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 7

սահմանակետով անցնում 528 մ, հասնում թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անցնում 258 մ, հասնում թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, թիվ 10-13 սահմանակետերով անցնում 543 մ, հասնում Ձորաստան, Առաջաձոր գյուղական և Կապան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4392 մ է:

### **ՁՈՐԱՍՏԱՆ – ԿԱՊԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

Ձորաստան, Առաջաձոր գյուղական և Կապան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը անտառի եզրագծով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 110 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ, անցնում 180 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 163 մ, հասնում թիվ 3 սահմանակետին, կրկին թեքվում հարավ և անցնելով 190 մ, հասնում է թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 201 մ, հասնում թիվ 5 սահմանակետին, ապա անտառի եզրով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 423 մ, հասնում թիվ 6 սահմանակետին, ապա թեքվում է արևմուտք, անցնում 120 մ, հասնում թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անտառով անցնում 200 մ, հասնում ժայռի եզրին գտնվող թիվ 8 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անտառով անցնում 555 մ, հասնում թիվ 9 սահմանակետին, ապա անտառեզրի ոլորաններով թեքվում է հարավ-արևմուտք, հատում գետակը և թիվ 10-15 սահմանակետերով անցնելով 1182 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը անտառի եզրով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 492 մ, հասնում թիվ 17 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 483 մ, հասնում թիվ 18 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ, անցնում 191 մ, հասնում ժայռի գագաթին տեղադրված թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը ժայռով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 141 մ, հասնում թիվ 20 սահմանակետին, ապա կրկին թեքվում է հարավ-արևելք, ժայռերի գագաթներով, թիվ 21-23 սահմանակետերով անցնում 875 մ, հասնում բնակավայրի հարավ-արևելյան եզրագծի մոտ տեղադրված թիվ 24 սահմանակետին: Այստեղից սահմանագիծը բնակավայրի եզրագծով թեքվում

է դեպի հարավ-արևմուտք, հատում գետակը, թիվ 25-26 սահմանակետերով անցնում 354 մ, հասնում ժայռի վրա գտնվող թիվ 27 սահմանակետին, հետո թեքվում է հյուսիս-արևմուտք, թիվ 28 սահմանակետով անցնում 253 մ, հասնում ճանապարհի եզրի թիվ 29 սահմանակետին, որտեղից ճանապարհով շարունակվում է նույն ուղղությամբ, թիվ 30 սահմանակետով անցնում 396 մ, հասնում թիվ 31 սահմանակետին: Թիվ 31 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս, քիչ դեպի հյուսիս-արևելք, թիվ 32 սահմանակետով անցնում 245 մ, հասնում գետի և ճանապարհի հատման տեղում գտնվող թիվ 33 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս-արևմուտք, ճանապարհների հատման տեղով, թիվ 34-35 սահմանակետերով անցնում 1401 մ, հասնում թիվ 36 սահմանակետին: Այստեղից սահմանագիծը անտառի եզրագծով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 37-38 սահմանակետերով անցնում 674 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 39 սահմանակետին, ապա ձորով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 40 սահմանակետով անցնում 579 մ, հասնում ձորի և ճանապարհի հատման տեղում գտնվող թիվ 41 սահմանակետին, այստեղից ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անտառի եզրագծով և ճանապարհով, թիվ 42-43 սահմանակետերով անցնում 827 մ, հասնում ժայռի գլխին գտնվող թիվ 44 սահմանակետին: Թիվ 44 սահմանակետից սահմանագիծը ժայռերի գլխով հատելով գետը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 45 սահմանակետով անցնում 532մ, հասնում ձորի եզրին գտնվող Ջորաստան, Լեռնաձոր գյուղական և Կապան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 10767 մ է:

### **ՁՈՐԱՍՏԱՆ – ԼԵՌՆԱՁՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Ե»-«Ա»**

Ձորաստան, Լեռնաձոր և Վանեք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, ձորով անցնում է 1398 մ, հասնում է թիվ 1 սահմանակետին, որտեղից նույն ուղղությամբ, թիվ 2-3 սահմանակետերով անցնում է 725 մ, հասնում է թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անցնում 396 մ, հասնում է թիվ 5 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք և թիվ 6 սահմանակետով անցնում է 873 մ, հասնում է թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, թիվ 8 սահմանակետով անցնում է 1023 մ, հասնում է թիվ 9 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք, անցնում 308 մ, հասնում է թիվ 10 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-

արևելք, անցնում 300 մ, հասնում է թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 12 սահմանակետով անցնում է 588 մ, հասնում է թիվ 13 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հարավ, ձորով, թիվ 14-15 սահմանակետերով անցնում է 1862 մ, հասնում թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը անտառի եզրագծով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ, թիվ 17-18 սահմանակետերով անցնում 1365 մ, հասնում թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը անտառի եզրագծով շրջանցում է դեպի հարավ-արևմուտք, հարավ, ապա արևելք, թիվ 20-31 սահմանակետերով անցնում 3800 մ, հասնում Ջորաստան, Լեռնաձոր գյուղական և Կապան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 12638 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱԿԱՏԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Ճակատեն գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավարևելյան մասում:

Համայնքը հյուսիսից և արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն), հարավից «Բ»-«Գ» հատվածով՝ Շիկահող գյուղական համայնքին, արևելքից «Գ»-«Դ» հատվածով՝ Ծավ Գյուղական համայնքին, «Դ»-«Ե» հատվածով՝ Լեռնաձոր գյուղական համայնքին, հյուսիսից «Ե»-«Ա» հատվածով՝ Գեղանուշ գյուղական համայնքին:

### **ՃԱԿԱՏԵՆ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը համընկնում է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանի հետ:

### **ՃԱԿԱՏԵՆ – ՇԻԿԱՀՈՂ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Ճակատեն, Շիկահող գյուղական համայնքների և պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն), տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 31 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է արևմուտք, անցնում 302մ, հասնում թիվ 2 սահմանակետին: թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 3 սահմանակետով անցնում 661 մ, հասնում թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 109 մ, հասնում թիվ 5 սահմանակետին, ապա նույն ուղղությամբ, անտառի եզրագծով թիվ 6 սահմանակետով անցնում է 410 մ, հասնում թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, թիվ 8 սահմանակետով անցնում 400 մ, հասնում թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անտառի եզրագծով թիվ 10-11 սահմանակետերով անցնում 776 մ, հասնում թիվ 12 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 192մ, հասնում թիվ 13 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս արևմուտք անցնում 251մ, հասնում թիվ 14

սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք թիվ 15 սահմանակետով անցնում 440մ, հասնում թիվ 16 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևմուտք, հատում դաշտային ճանապարհը, ձորը և թիվ 17-22 սահմանակետերով անցնում 1889մ, հասնում թիվ 23 սահմանակետին: Թիվ 23 սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է հյուսիս-արևելք, միանում գետակին, ապա թեքվում է արևելք և հարավ-արևելք, թիվ 25-33 սահմանակետերով անցնում 2314 մ, հասնում թիվ 24 սահմանակետին: Թիվ 24 սահմանակետից սահմանագիծը անտառի եզրագծով թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 16750 մ, հասնում Շիկահող, Գակատեն և Ծավ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 24525 մ է:

### **ՃԱԿԱՏԵՆ - ԾԱՎ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Գ»-«Դ»**

Ծավ, Գակատեն և Լեռնաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 128 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, այդտեղից ջրբաժանով սահմանագիծը թիվ 2-8 սահմանակետերով անցնում է 1272 մ, հասնում դաշտային ճանապարհի վրա տեղադրված թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը նույն ուղղությամբ անցնում է 536 մ, հասնում թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 263 մ, հասնում Ծավ, Գակատեն և Շիկահող գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2199 մ է:

### **ՃԱԿԱՏԵՆ – ԼԵՌՆԱՁՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Դ»-«Ե»**

Լեռնաձոր, Գակատեն և Գեղանուշ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը բարձունքներով թեքվում է դեպի հարավ, թիվ 1-12 սահմանակետերով անցնում 2094 մ, հատելով ժայռերը, հասնում Լեռնաձոր, Գակատեն և Ծավ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2094 մ է:

### **ԳԵՂԱՆՈՒՇ-ՃԱԿԱՏԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Ե»-«Ա»**

Գեղանուշ, ճակատեն գյուղական համայնքների և պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն), տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևմուտք, հատում դաշտային ճանապարհը, ջրբաժանով թիվ 1-5 սահմանակետերով անցնում է 1601մ, հասնում բլրի վրա տեղադրված թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը նորից ջրբաժանով թեքվում է դեպի արևմուտք, անցնում 383մ, հասնում դաշտային ճանապարհների հատման տեղում գտնվող թիվ 7 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 405մ, հասնում թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 189մ, հասնում է թիվ 9 սահմանակետին, որտեղից սահմանագիծը նորից թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 10-14 սահմանակետերով անցնում 974մ, հասնում է թիվ 15 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը անտառապատ լանջով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 16-23 սահմանակետերով անցնում է 1802մ, հասնում է թիվ 24 սահմանակետին: Թիվ 24 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնելով 70մ, հասնում է թիվ 25 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, անցնում 156մ, հասնում է թիվ 26 սահմանակետին: Թիվ 26 սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թիվ 27-42 սահմանակետերով անցնում է 2579մ, հասնում է թիվ 43 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 282մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող աղբյուրի մոտ տեղադրված թիվ 44 սահմանակետին: Թիվ 44 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, լեռնալանջով թիվ 45-54 սահմանակետերով անցնում 793մ, հասնում թիվ 55 սահմանակետին, որտեղից թեքվում է թեքվում է հյուսիս-արևմուտք, ապա հարավ-արևմուտք, թիվ 56-68 սահմանակետերով անցնում է 1566մ, հասնում է թիվ 69 սահմանակետին: Թիվ 69 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհով, թիվ 70-73 սահմանակետերով անցնում է 1221մ, հասնում ճակատեն, Գեղանուշ և Լեռնաձոր, գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 12021մ է:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՑՔ զՅՈՒՂԱԿԱՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Մուցք գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսային մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Շաղաթ գյուղական համայնքին, «Բ»-«Գ» հատվածով՝ Բալաք գյուղական համայնքին, արևելքից և հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Բռնակոթ գյուղական համայնքին, արևմուտքից «Դ»-«Ա» հատվածով՝ պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն):

**ՄՈՒՑՔ – ՇԱՂԱԹ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Մուցք, Շաղաթ գյուղական համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը գետով, հոսանքին հակառակ ուղղությամբ թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1 սահմանակետով անցնում 4168 մ, հասնում է թիվ 2 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 3-13 սահմանակետերով անցնում 7004 մ, հասնում թիվ 14 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 460 մ, հասնում թիվ 15 սահմանակետին, այնուհետև թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 63 մ, հասնում է թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 17-27 սահմանակետերով անցնում 1000 մ, հասնում է թիվ 28 սահմանակետին: Թիվ 28 սահմանակետից սահմանագիծը գետով թեքվում է հյուսիս-արևմուտք, հատելով ձորեր, թիվ 29-39 սահմանակետերով անցնում է 1289 մ, հասնում թիվ 40 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևելք, այնուհետև հյուսիս-արևմուտք, ձորով, թիվ 41-45 սահմանակետերով անցնում 749 մ, հասնում Շաղատ գետի եզրին գտնվող թիվ 46 սահմանակետին: Թիվ 46 սահմանակետից սահմանագիծը Շաղատ գետով, թիվ 47-74 սահմանակետերով անցնում է 5735 մ, հասնում է թիվ 75 սահմանակետին: Թիվ 75 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 274 մ, հասնում Մուցք, Շաղաթ, Բալաք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 20742 մ է:

**ՄՈՒՑՔ – ԲԱԼԱՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Մուցք, Շաղաթ և Բալաք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 1-2 սահմանակետերով անցնում 916 մ, հասնում Բռնակոթ-Շաղաթ միջհամայնքային ճանապարհի եզրին գտնվող թիվ 3 սահմանակետին, հետո թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 324 մ, հասնում է թիվ 4 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 186 մ, հասնում է թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանով, թիվ 6 սահմանակետով անցնում է 363 մ, հասնում է Մուցք, Բալաք, Բռնակոթ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1789 մ է:

### **ՄՈՒՑՔ – ԲՐՆԱԿՈԹ ՍԱՅՄԱՆԱԿԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Մուցք, Բռնակոթ և Բալաք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 330 մ, հասնում է թիվ 1 սահմանակետին, որը գտնվում է դաշտային ճանապարհի եզրին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք և թիվ 2 սահմանակետով անցնում 282 մ, հասնում է թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով ճանապարհը թիվ 4-12 սահմանակետերով անցնում 2463մ, հասնում թիվ 13 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 146 մ, հասնում թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում գետը, թիվ 15-17 սահմանակետերով անցնում 1358 մ, հասնում է թիվ 18 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 596մ, հասնում թիվ 19 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի արևմուտք, անցնում 707 մ, հասնում թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, հատում գետը, ջրբաժանը և թիվ 21-22 սահմանակետերով անցնելով 1556 մ, հասնում է ճանապարհների հատման տեղում գտնվող թիվ 23 սահմանակետին: Թիվ 23 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 24-25 սահմանակետերով անցնելով 1132 մ, հասնում թիվ 26 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, հատում ջրբաժաններ, գետեր, թիվ 27-35 սահմանակետերով անցնում է 1038 մ, հասնում թիվ 36 սահմանակետին: Թիվ 36 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, հատում ջրբաժանը, դաշտային ճանապարհը, թիվ 37-55 սահմանակետերով անցնում 2840 մ, հասնում

թիվ 56 սահմանակետին, որտեղից դաշտային ճանապարհով անցնում է 139 մ, հասնում Սուցք, Բռնակոթ, գյուղական համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 12587 մ է:

**ՄՈՒՑՔ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ)  
ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ա»**

«Դ»-«Ա» հատվածով սահմանագիծը հանընկնում է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանի հետ:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՔԻՆ ՀԱՆԴ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Ներքին Հանդ գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավարևելյան մասում:

Համայնքը հյուսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Սրաշեն գյուղական համայնքին, հյուսիսից և արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն), հարավ- արևմուտքից «Գ»-«Դ» հատվածով՝ Նոնաձոր գյուղական համայնքին, արևմուտքից «Դ»-«Ա» հատվածով՝ Ծավ գյուղական համայնքին:

### **ՆԵՐՔԻՆ ՀԱՆԴ - ՍՐԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Ներքին Հանդ, Սրաշեն և Ծավ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը «Թունին-արտ » կոչվող եռանկյունաչափական կետն է, սահմանագիծը թեքվում է արևելք, ջրբաժանով անցնում 223 մ, հասնում է թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևելք, հատում միջհամայնքային և դաշտային ճանապարհը, անցնում է 624 մ, հասնում թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, հատում ձորեր և գետեր, անցնում է 951 մ, հասնում թիվ 3 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 267 մ, հասնում Ներքին Հանդ, Սրաշեն գյուղական համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2065 մ է:

### **ՆԵՐՔԻՆ ՀԱՆԴ - ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ)**

#### **ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

«Բ»-«Գ» հատվածով սահմանագիծը հանդնկնում է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանի հետ:

## **ՆԵՐՔԻՆ ՀԱՆԴ - ՆՈՆԱԶՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Ներքին Հանդ, Ծավ և Նռնաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է 2367.3 մ միշ ունեցող բլրի գագաթին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանով անցնում 438 մ, հասնում 2149.0 մ, միշ ունեցող բլրի գագաթի թիվ 1 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք, անցնում 493 մ, հասնում թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևելք, անցնում 488 մ, հասնում թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնելով 600 մ, հասնում 2124 մ միշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 5-7 սահմանակետերով անցնելով 1941 մ, հասնում 2049 մ միշ ունեցող բլրի գագաթի թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, անցնելով 888 մ, հասնում 2178.0 մ միշ ունեցող բլրի գագաթի թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 828 մ, հասնում 2121 մ միշ ունեցող բլրի գագաթի թիվ 10 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, անցնում 478 մ, հասնում 2122 մ միշ ունեցող բլրի գագաթի թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 248 մ, հասնում թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, անցնելով 1157 մ, հասնում 2270.0 մ միշ ունեցող Բարթազ բարձունքի թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 14 սահմանակետով անցնում 423 մ, հասնում Ներքին Հանդ, Նռնաձոր գյուղական համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7982 մ է:

## **ՆԵՐՔԻՆ ՀԱՆԴ - ԾԱՎ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ա»**

Ներքին Հանդ, Ծավ և Սրաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ջրբաժանով անցնում 293 մ, հասնում է թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է հարավ, անցնում 312 մ, հասնում թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, հատում դաշտային ճանապարհը, թիվ 3-4 սահմանակետերով անցնելով 803 մ, հասնում թիվ 5

սահմանակետին, որը գտնվում է Ժայռի եզրին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, հատում Խաչինչայ գետը, անցնում 247 մ, հասնում է թիվ 6 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, թիվ 7 սահմանակետով անցնում 803 մ, հասնում թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, թիվ 9-10 սահմանակետերով անցնում 516 մ, հասնում թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 12 սահմանակետով անցնում 796 մ, հասնում թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, գետով անցնում 2620 մ, հասնում թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 386 մ, հասնում թիվ 15 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 16-17 սահմանակետերով անցնում 609 մ, հասնում թիվ 18 սահմանակետին, այնուհետև թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 183 մ, հասնում թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 20-21 սահմանակետերով անցնում 823 մ, հասնում թիվ 22 սահմանակետին, որից հետո սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 398 մ, հասնում թիվ 23 սահմանակետին: Թիվ 23 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 24-25 սահմանակետերով անցնում 1069 մ, հասնում թիվ 26 սահմանակետին: Թիվ 26 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անցնում 300 մ, հասնում թիվ 27 սահմանակետին: Թիվ 27 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 296 մ, հասնում թիվ 28 սահմանակետին: Թիվ 28 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, անցնում 505 մ, հասնում թիվ 29 սահմանակետին: Թիվ 29 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 315 մ, հասնում թիվ 30 սահմանակետին: Թիվ 30 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անցնում 457 մ, հասնում թիվ 31 սահմանակետին, հետո թեքվում է հարավ-արևելք, անցնում 644 մ, հասնում թիվ 32 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է արևելք անցնում 358 մ, հասնում թիվ 33 սահմանակետին: Թիվ 33 սահմանակետից սահմանագիծը ճանապարհին զուգահեռ թեքվում է դեպի հարավ, անցնում 125 մ, հասնում թիվ 34 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 35-38 սահմանակետերով անցնում 319 մ, հասնում թիվ 39 սահմանակետին: Թիվ 39 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 40-47 սահմանակետերով անցնում 628 մ, հասնում թիվ 48 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է արևելք, թիվ 49-50 սահմանակետերով անցնում 554 մ, հասնում թիվ 51 սահմանակետին: Թիվ 51 սահմանակետից սահմանագիծը թեքվում է

հարավ-արևելք, թիվ 52-59 սահմանակետերով անցնում 930 մ, հասնում թիվ 60 սահմանակետին: Թիվ 60 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, թիվ 61-64 սահմանակետերով անցնում 691 մ, հասնում Ներքին Հանդ, Ծավ և Նռնածոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 15980 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆԺԴԵՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ**

### **ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Նժդեհ գյուղական համայնքը գտնվում է մարզի արևմտյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Տորունիք գյուղական համայնքին, արևելքից՝ «Բ»-«Գ» հատվածով՝ Դաստակերտ քաղաքային համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն), արևմուտքից «Զ»-«Ա» հատվածով՝ Բնունիս գյուղական համայնքին:

#### **ՆԺԴԵՅ– ՏՈՐՈՒՆԻՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Նժդեհ, Տորունիք և Բնունիս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Կուրդ- լոզուզյունեյ սարի գագաթին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-2 սահմանակետերով անցնում է 1410 մ, հասնում է թիվ 3 սահմանակետին, որտեղից թեքվում է արևելք, ջրբաժանով անցնում 460 մ, հասնում է թիվ 4 սահմանակետին, հետո թեքվում է հարավ-արևելք, կրկին ջրբաժանով անցնում է 322 մ, հասնում է թիվ 5 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թեք լանջով անցնում է 571 մ, հասնում է թիվ 6 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևելք, հատելով Այրի գետը, անցնում է 720 մ, հասնում է թիվ 7 սահմանակետին, որը գտնվում է առվի եզրին, այստեղից սահմանագիծը առվով թեքվելով հարավ-արևելք, հատելով միջհամայնքային և դաշտային ճանապարհներ, թիվ 8-18 սահմանակետերով անցնում է 1046 մ, հասնում է թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, հատելով փլվածքներ, թիվ 20 սահմանակետով անցնում է 416 մ, հասնում ժայռի գագաթին գտնվող թիվ 21 սահմանակետին: Թիվ 21 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ջրբաժանով, թիվ 22 սահմանակետով անցնում է 652 մ, հասնում թիվ 23 սահմանակետին, այդտեղից կրկին ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 24 սահմանակետով անցնում 1054 մ, հասնում Նժդեհ, Տորունիք գյուղական համայնքների և Դաստակերտ քաղաքային համայնքի տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6651 մ է:

**ՆՃԴԵՅ – ԴԱՍՏԱԿԵՐՏ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

ՆՃԴԵԿ, Տորունիք գյուղական և Դաստակորտ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, հատում փլվածքներ, ձորով, թիվ 1-8 սահմանակետերով անցնում 1149մ, հասնում թիվ 9 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 10 սահմանակետով հատում միջհամայնքային ճանապարհը և Կիշկոլտի գետը, անցնում 311մ, հասնում թիվ 11 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է արևմուտք, թիվ 12-15 սահմանակետերով անցնում 724մ, հասնում է թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, թիվ 17-21 սահմանակետերով անցնում 827մ, հասնում է թիվ 22 սահմանակետին, այդտեղից կրկին թեքվում է հյուսիս-արևմուտք, թիվ 23-25 սահմանակետերով անցնում 413մ, հասնում է Այրի գետի ափին գտնվող թիվ 26 սահմանակետին: Թիվ 26 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հատում ջրբաժանը, թիվ 27-33 սահմանակետերով անցնում է 2045մ, հասնում թիվ 34 սահմանակետին, թիվ 34 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 541մ, հասնում թիվ 35 սահմանակետին, որից հետո սահմանագիծը, հատելով ձորակը, թիվ 36 սահմանակետով անցնում է 440մ, հասնում թիվ 37 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 539մ, հանում թիվ 38 սահմանակետին: Թիվ 38 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ձորով, թիվ 39 սահմանակետով անցնում 567մ, հասնում թիվ 40 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհով, թիվ 41-42 սահմանակետերով անցնում 1014մ, հասնում թիվ 43 սահմանակետին: Թիվ 43 սահմանակետից սահմանագիծը դարձյալ թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 443մ, հասնում թիվ 44 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, անցնում 526մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 45 սահմանակետին: Թիվ 45 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, դաշտային ճանապարհով, ապա ձորակով թիվ 46-51 սահմանակետերով անցնում 2092մ, հասնում թիվ 52 սահմանակետին: Թիվ 52 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, հատելով բարձրունքներ, բլուրներ, և ձորակներ, թիվ 53-95 սահմանակետերով անցնում է 2589մ, հասնում է բլրի գագաթին գտնվող թիվ 96 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 97-99 սահմանակետերով անցնում 147մ, հասնում թիվ 100 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևմուտք, ձորով, բարձրունքներով թիվ 101-125

սահմանակետերով անցնում է 2888մ, հասնում թիվ 126 սահմանակետին: Թիվ 126 սահմանակետից սահմանագիծը կրկին թեքվում է հարավ-արևմուտք և դաշտային ճանապարհով թիվ 127-136 սահմանակետերով անցնում 1265մ, հասնում Նժդեհ գյուղական, Դաստակերտ քաղաքային համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 18520մ է:

### **ՆժԴԵՅ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

«Գ»-«Դ» հատվածով սահմանագիծը հանընկնում է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանի հետ:

### **ՆժԴԵՅ – ԲՆՈՒՆԻՍ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ա»**

Նժդեհ, Բնունիս և Տորունիք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 1-2 սահմանակետերով անցնում 888 մ, հասնում թիվ 3 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 633 մ, հասնում թիվ 4 սահմանակետին, նույն ուղղությամբ թիվ 4-5 սահմանակետերով անցնում է 502 մ, հասնում է թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 877 մ, հատում դաշտային ճանապարհը, ձորակը հասնում թիվ 7 սահմանակետին, հետո թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 484 մ, հասնում է թիվ 8 սահմանակետին, որից հետո սահմանագիծը կրկին թեքվում է հարավ-արևմուտք, հատում ջրբաժանը և ձորով անցնում 1049 մ, հանում է թիվ 9 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 10-11 սահմանակետերով անցնում 1226 մ, հասնում թիվ 12 սահմանակետին, հետո թեքվում է արևմուտք, անցնում 224 մ, հասնում է թիվ 13 սահմանակետին, որը գտնվում է ձորի եզրին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ձորով անցնում է 819 մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 14 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է արևմուտք, ձորով անցնում 826 մ, հասնում է թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 767 մ, հասնում է թիվ 16 սահմանակետին, որը գտնվում է բլրի գագաթին, այնուհետև թեքվում է հարավ-արևմուտք հատում ձորակներ առուններ և

թիվ 17-23 սահմանակետերով անցնում 1873 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 24 սահմանակետին, ապա թեքվում է արևմուտք, անցնում 241 մ, հասնում թիվ 24 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք և դաշտային ճանապարհով, թիվ 25-49 սահմանակետերով անցնում է 3127 մ, հասնում Նժդեհ, Բնունիս գյուղական համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 13536 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՇԵՆԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Նորաշենիկ գյուղական համայնքը գտնվում է մարզի կենտրոնական մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Շրվենանց գյուղական համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Եղեգ գյուղական համայնքին, հարավ-արևելքից «Գ»-«Դ» հատվածով՝ Աճանան գյուղական համայնքին, հարավից «Դ»-«Ե» հատվածով՝ Կապան քաղաքին համայնքին, արևմուտքից «Ե»-«Զ» հատվածով՝ սահմանակից է Առաջաձոր գյուղական համայնքին, «Զ»-«Ա» հատվածով՝ Ներքին Խոտանան գյուղական համայնքին:

### **ՆՈՐԱՇԵՆԻԿ – ՇՐՎԵՆԱՆՑ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Նորաշենիկ, Ներքին Խոտանան և Շրվենանց գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հատում դաշտային ճանապարհը, թիվ 1-2 սահմանակետերով անցնելով 876 մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 3 սահմանակետին, ապա դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 4 սահմանակետով անցնում 500 մ, հասնում բլրի վրա գտնվող թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է հարավ-արևելք, անցնում 190 մ, հասնում թիվ 6 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 7 սահմանակետով անցնում 411 մ, հասնում է թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, անցնում է 350 մ, հասնում Նորաշենիկ, Եղեգ և Շրվենանց գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2327 մ է:

### **ՆՈՐԱՇԵՆԻԿ - ԵՂԵԳ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Նորաշենիկ, Եղեգ և Շրվենանց գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ապա հարավ և թիվ 1-5 սահմանակետերով անցնելով 2003 մ, հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 7-11 սահմանակետերով, լեռնաշղթայով և ջրբաժանով անցնում 1547 մ, հասնում Նորաշենիկ, Եղեգ և Խալաջ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3550 մ է:

#### **ՆՈՐԱՇԵՆԻԿ - ԱՃԱՆԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Նորաշենիկ, Աճանան և Եղեգ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Չանախչի գետի ձախակողմյան վտակի ափին, սահմանագիծը այդ վտակով, հոսանքին հակառակ ուղղությամբ, թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 6 սահմանակետում հատում է Երևան-Կապան խճուղին, թիվ 1-7 սահմանակետերով անցնում 845 մ, հասնում թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 107 մ հասնում թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք անցնում 71 մ, հասնում թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք թիվ 10 սահմանակետում հատում է Երևան-Կապան խճուղին անցնում 176 մ, հասնում Նորաշենիկ, Աճանան գյուղական և Կապան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1199 մ է:

#### **ՆՈՐԱՇԵՆԻԿ – ԿԱՊԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

Նորաշենիկ, Առաջածոր գյուղական և Կապան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից, սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 402 մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին, որտեղից սահմանագիծը ձորով նույն ուղղությամբ անցնում է 268 մ, հասնում թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ձորի ոլորոպտույտներով, թիվ 3-12 սահմանակետերով անցնում է 1381 մ, հասնում է թիվ 13 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, կրկին ձորի ոլորաններով, թիվ 14-16 սահմանակետերով անցնում է

874 մ, հասնում է թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս արևելք, հետո հյուսիս և թիվ 18 սահմանակետով անցնում 196 մ հասնում անտառի եզրին գտնվող թիվ 19 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է արևելք, ապա հյուսիս-արևելք, անտառի եզրով, թիվ 20-21 սահմանակետերով անցնում 418 մ հասնում Նորաշենիկ, Աճանան գյուղական և Կապան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգույցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3539 մ է:

#### **ՆՈՐԱՇԵՆԻԿ - ԱՌԱՋԱԶՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»**

Նորաշենիկ, Առաջաձոր և Ներքին Խոտանան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգույցային սահմանակետից, որը գտնվում է Չանախչի գետի ափին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, գետով՝ հոսանքի ուղղությամբ թիվ 1-23 սահմանակետերով անցնում 2701 մ, հասնում թիվ 24 սահմանակետին, թիվ 24 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 259մ, հասնում թիվ 25 սահմանակետին: Թիվ 25 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 223 մ հասնում թիվ 26 սահմանակետին: Թիվ 26 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 180 մ, հասնում թիվ 27 սահմանակետին: Թիվ 27 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, թիվ 28 սահմանակետով անցնում 398 մ, հասնում թիվ 29 սահմանակետին: Թիվ 29 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք անցնում 122 մ հասնում թիվ 30 սահմանակետին: Թիվ 30 սահմանակետից սահմանագիծը նույն ուղղությամբ ձորով անցնում է 425 մ, հասնում թիվ 31 սահմանակետին: Թիվ 31 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, դաշտային ճանապարհով, թիվ 32 սահմանակետով անցնում 473 մ, հասնում թիվ 33 սահմանակետին: Թիվ 33 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևելք անցնում 56մ հասնում անտառի եզրին գտնվող թիվ 34 սահմանակետին: Թիվ 34 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անտառի եզրով թիվ 35-41 սահմանակետերով անցնում 417մ, հասնում թիվ 42 սահմանակետին: Թիվ 42 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անտառով, թիվ 43-50 սահմանակետերով անցնում 297 մ, հասնում թիվ 51 սահմանակետին: : Թիվ 51 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 52-53 սահմանակետերով անցնում 124 մ, հասնում Նորաշենիկ,

Առաջաձոր գյուղական և Կապան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5675 մ է:

### **ՆՈՐԱՇԵՆԻԿ – ՆԵՐՔԻՆ ԽՈՏԱՆԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Զ»-«Ա»**

Նորաշենիկ. Ներքին Խոտանան և Շրվենանց գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը Չանախչի գետով թեքվում է դեպի հարավ, թիվ 1 սահմանակետով անցնում 257 մ, հասնում է թիվ 2 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 3 սահմանակետով անցնում 266 մ, հասնում թիվ 4 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, անցնում 134 մ, հասնում է թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, գետով անցնում 715 մ, հասնում Նորաշենիկ, Ներքին Խոտանան և Շրվենանց գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1372մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Նորավան գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսային մասում:

Համայնքը հյուսիս-արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն), արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Վաղատին գյուղական համայնքին, արևմուտքից «Գ»-«Ա» հատվածով՝ Աղիտու գյուղական համայնքին:

### **ՆՈՐԱՎԱՆ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԱՂԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը հանընկնում է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանի հետ:

### **ՆՈՐԱՎԱՆ – ՎԱՂԱՏԻՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Նորավան, Վաղատին գյուղական համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1-11 սահմանակետերով անցնելով 3957 մ, հասնում է դաշտային ճանապարհի և ձորի եզրին գտնվող թիվ 12 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 13-37 սահմանակետերով անցնելով 3390 մ, հասնում է Գորիս գնացող խճուղու եզրին գտնվող թիվ 38 սահմանակետին: Թիվ 38 սահմանակետից սահմանագիծը Նորավան գնացող ճանապարհով թեքվում է դեպի հարավ, թիվ 39-52 սահմանակետերով անցնում 3070 մ, հասնում թիվ 53 սահմանակետին, այնուհետև ձորով թեքվում է դեպի հարավ, հատում Աղիտու-Որոտան միջհամայնքային ճանապարհը և թիվ 54-67 սահմանակետերով անցնելով 1460 մ, հասնում է գետերի հատման տեղում գտնվող Նորավան, Վաղատին և Աղիտու գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 11877 մ է:

### **ՆՈՐԱՎԱՆ – ԱՂԻՏՈՒ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Ա»**

Նորավան, Աղիտու գյուղական համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ձորով անցնում 8468 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հարավ, թիվ 2-3 սահմանակետերով անցնում 252 մ, հասնում է թիվ 4 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, անցնում է 87 մ, հասնում թիվ 5 սահմանակետին, ապա նույն ուղղությամբ անցնում է 295մ, հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 7-12 սահմանակետերով անցնում 1023 մ, հասնում թիվ 13 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թիվ 14 սահմանակետով անցնում է 562 մ, հասնում թիվ 15 սահմանակետին, հետո թեքվում հարավ-արևելք, թիվ 16-19 սահմանակետերով անցնում է 760 մ, հասնում է թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 21-44 սահմանակետերով անցնում 3352 մ, հասնում Գորիս գնացող խճուղու եզրին գտնվող թիվ 45 սահմանակետին: Թիվ 45 սահմանակետից սահմանագիծը Նորավան գնացող ճանապարհով թեքվում է դեպի հարավ, թիվ 46-52 սահմանակետերով անցնում է 1121 մ, հասնում թիվ 53 սահմանակետին, որը գտնվում է ձորի եզրին, հետո ձորով թեքվում է հարավ, հատում Աղիտու, Նորավան ճանապարհը, թիվ 54-76 սահմանակետերով անցնում 2464 մ, հասնում թիվ 77 սահմանակետին: Թիվ 77 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, հատելով Աղիտու-Վաղատին միջհամայնքային ճանապարհը, ձորով անցնում է 2070 մ, հասնում Նորավան, Աղիտու և Վաղատին գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 20454 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՍՏՂԱԲԵՐԴ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Նոր Աստղաբերդ գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավարևմտյան մասում:

Համայնքը հյուսիսի-արևելքից և հարավ-արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Գեղի գյուղական համայնքին, հարավից «Բ»-«Գ» հատվածով՝ Քաջարան գյուղական համայնքին, արևմուտքից՝ «Գ»-«Դ» հատվածով՝ պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն), հյուսիս-արևելքից՝ «Դ»-«Ե» հատվածով՝ Դաստակերտ քաղաքային համայնքին, «Ե»-«Ա» հատվածով՝ Լոր գյուղական համայնքին:

### **ՆՈՐ ԱՍՏՂԱԲԵՐԴ - ԳԵՂԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Նոր Աստղաբերդ, Լոր և Գեղի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 155մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք, ձորով, թիվ 2-7 սահմանակետերով անցնում 805մ, հասնում ձորի եզրի թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք և անտառի եզրով թիվ 9-19 սահմանակետերով անցնում 676մ, հասնում թիվ 20 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, դաշտային ճանապարհով, թիվ 21-24 սահմանակետերով անցնում է 857մ, հասնում թիվ 25 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը ձորով թիվ 26-29 սահմանակետերով անցնում է 264մ, հասնում թիվ 30 սահմանակետին, որը գտնվում է անտառի եզրին: Թիվ 30 սահմանակետից սահմանագիծը անտառի եզրով, թիվ 31-46 սահմանակետերով անցնում է 2836մ, հասնում թիվ 47 սահմանակետին: Թիվ 47 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 48-49 սահմանակետերով անցնում 1059մ, հասնում թիվ 50 սահմանակետին, ապա թեքվում է արևելք, թիվ 51-52 սահմանակետերով անցնում 484մ, հասնում թիվ 53 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք, հատում ձորեր, առուներ, թիվ 54 սահմանակետով անցնում 935մ, հասնում թիվ 55 սահմանակետին: Թիվ 55սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 620մ,

հասնում թիվ 56 սահմանակետին, ապա կրկին թեքվում է հարավ-արևելք, անցնում 194մ, հասնում է թիվ 57 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը նույն ուղղությամբ, թիվ 58-63 սահմանակետերով անցնում է 2042մ, հասնում է թիվ 64 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 219մ, հասնում է թիվ 65 սահմանակետին: Թիվ 65 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, հատում դաշտային ճանապարհը, անդունդի եզրով, թիվ 66 սահմանակետով, անցնելով 904մ, հասնում թիվ 67 սահմանակետին, որտեղ միանում է Կարաբաղչայ գետի աջակողմյան վտակին, որից հետո սահմանագիծը վտակով նույն ուղղությամբ, ապա թեքվելով արևելք հատում է Կարաբաղչայ գետը, հետո թեքվում է հյուսիս-արևմուտք, շրջանցելով ժայռերը, ապա թեքվում է հարավ-արևելք, թիվ 68-77 սահմանակետերով անցնում 3172մ, հասնում ժայռեզրի թիվ 78 սահմանակետին: Թիվ 78 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թփուտների եզրով թիվ 79-83 սահմանակետերով անցնում է 1899մ, հասնում թիվ 84 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս-արևմուտք, թիվ 85 սահմանակետով անցնում 463մ, հասնում թիվ 86 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հարավ, թիվ 87-89 սահմանակետերով, Գեղի բնակավայրի եզրով անցնում 1487մ, հասնում անտառի եզրին գտնվող թիվ 90 սահմանակետին: Թիվ 90 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, ապա անտառի եզրով, լեռան լանջով, խիստ կտրտված ռելիեֆով, թիվ 91-107 սահմանակետերով անցնում 5135մ, հասնում թիվ 108 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս, անտառի բացատով անցնում 590մ, հասնում թիվ 109 սահմանակետին, ապա հատում է ձորը և կրկին անտառի եզրով թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 110-118 սահմանակետերով անցնում է 1077մ, հասնում է թիվ 119 սահմանակետին, որից հետո թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 355մ, հասնում է թիվ 120 սահմանակետին: Թիվ 120 սահմանակետից սահմանագիծը նույն ուղղությամբ, թիվ 121 սահմանակետով, դաշտային ճանապարհով անցնում է 397մ, հասնում թիվ 122 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևմուտք, ձորով անցնում 451մ, հասնում թիվ 123 սահմանակետին: Թիվ 123 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, ապա հյուսիս-արևելք, թիվ 124-127 սահմանակետերով, անտառի եզրով անցնում է 740մ, հասնում թիվ 128 սահմանակետին: Թիվ 128 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, ապա ձորով թեքվում դեպի հյուսիս-արևելք, թիվ 129-130 սահմանակետերով անցնում է 386 մ, հասնում թիվ 131 սահմանակետին: Թիվ 131 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, թիվ 132 սահմանակետով անցնում 787 մ, հասնում է թիվ 133 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հարավ, թիվ 134 սահմանակետով անցնում 310 մ,

հասնում թիվ 135 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք թիվ 136-141 սահմանակետերով անցնում 1517 մ, հասնում թիվ 142 սահմանակետին: Թիվ 142 սահմանակետից սահմանագիծը դարձյալ թեքվում է հարավ-արևելք, թիվ 143-145 սահմանակետերով անցնում 1330 մ, հասնում թիվ 146 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ, անցնում 311 մ, հասնում թիվ 147 սահմանակետին: Թիվ 147 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 148 սահմանակետով, անցնում 872 մ, հասնում է թիվ 149 սահմանակետին: Թիվ 149 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, թիվ 50-51 սահմանակետերով անցնում 752 մ, հասնում է Նոր Աստղաբերդ, Գեղի և Լեռնաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 34081 մ է:

### **ՆՈՐ ԱՍՏՂԱԲԵՐԴ - ՔԱՋԱՐԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Նոր Աստղաբերդ, Քաջարան գյուղական համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 5743 մ, հասնում Նոր Աստղաբերդ, Քաջարան և Գեղի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5743 մ է:

### **ՆՈՐ ԱՍՏՂԱԲԵՐԴ - ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԱՂԻԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

«Գ»-«Դ» հատվածով սահմանագիծը հանընկնում է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանի հետ:

### **ՆՈՐ ԱՍՏՂԱԲԵՐԴ - ԴԱՍՏԱԿԵՐՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

Նոր Աստղաբերդ, Լոր գյուղական և Դաստակերտ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհով հատելով ձորակներ, բարձրունքներ, առուներ թիվ 1-35 սահմանակետերով անցնելով 2446մ, հասնում է Նոր Աստղաբերդ գյուղական, Դաստակերտ քաղաքային համայնքների և պետական

սահման (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2446 մ է:

### **ՆՈՐ ԱՍՏՂԱԲԵՐՂ - ԼՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Ե»-«Ա»**

Նոր Աստղաբերդ, Լոր և Գեղի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, գետով, թիվ 1-25 սահմանակետերով անցնում 1914 մ, հասնում Նոր Աստղաբերդ, Լոր գյուղական և Դաստակերտ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1914 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Շաղատ գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսային մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Գորայք գյուղական համայնքին, «Բ»-«Գ» հատվածով` Ծղուկ գյուղական համայնքին, «Գ»-«Դ» հատվածով` Սառնակունք գյուղական համայնքին, «Դ»-«Ե» հատվածով` Սպանդարյան գյուղական համայնքին, արևելքից «Ե»-«Զ» հատվածով` Անգեղակոթ գյուղական համայնքին, «Զ»-«Է» հատվածով` Բալաք գյուղական համայնքին, հարավից «Է»-«Ը» հատվածով` Մուծք գյուղական համայնքին, «Ը»-«Թ» հատվածով` պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն), արևմուտքից «Թ»-«Ա» հատվածով` Վայոց Ձորի մարզին:

### **ՇԱՂԱՏ - ԳՈՐԱՅՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Ա»-«Բ»**

Շաղատ, Գորայք գյուղական համայնքների և Վայոց Ձորի մարզի տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 4366 մ, հասնում թիվ 4 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, անցնում 605 մ, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում է 1866 մ, հասնում է թիվ 6 սահմանակետին, այդտեղից թեքվում է արևելք, անցնում 306 մ, հասնում է թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 490 մ, հասնում Շաղատ, Գորայք և Ծղուկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7633 մ է:

### **ՇԱՂԱՏ - ԾՂՈՒԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Բ»-«Գ»**

Շաղատ, Գորայք և Ծղուկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով ճանապարհը և գետը անցնում է 1406 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, այնուհետև նույն ուղղությամբ անցնում է 1261 մ, հասնում

ջրբաժանի թիվ 2 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 1083 մ, հասնում է թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, անցնում 647 մ, հասնում է թիվ 4 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք, հատելով ձորը, գետը, թիվ 5 սահմանակետով անցնում է 1565 մ, հասնում է թիվ 6 սահմանակետին, ապա թեքվում հյուսիս-արևելք, թիվ 7-8 սահմանակետերով անցնում 1879 մ, հասնում թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնելով 545 մ, հասնում է Գորայք, Սառնակունք և Շաղատ համայնքերի տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 8386 մ է:

### **ՇԱՂԱՏ - ՍԱՌՆԱԿՈՒՆՔ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Շաղատ, Սպանդարյան և Սառնակունք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 723 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս-արևելք, ապա հարավ-արևելք, թիվ 2 սահմանակետով, ջրբաժանով, ձորով անցնում 1123 մ, հասնում թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, անցնում 540 մ, հասնում Շաղատ, Սառնակունք և Ծղուկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2386 մ է:

### **ՇԱՂԱՏ - ՄՊԱՆԴԱՐՅԱՆ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

Շաղատ, Սպանդարյան և Անգողակոթ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 723 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է արևելք, անցնում 950 մ, հասնում թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք և հատելով ջրբաժանը, ձորով թիվ 3 սահմանակետով անցնում է 1040 մ, հասնում Որոտան գետի ափին գտնվող Շաղատ, Սպանդարյան և Սառնակունք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2713 մ է:

### **ՇԱՂԱՏ - ԱՆԳԵՂԱԿՈԹ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»**

Շաղատ, Անգեղակոթ և Սպանդարյան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը Որոտան գետով թեքվում է դեպի հարավ, հատում Անգեղակոթ տանող ճանապարհը, հասնում է Որոտան գետի Արիգլիջուր վտակին, ապա Որոտան գետով, հոսանքի ուղղությամբ թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1 սահմանակետով անցնում 4899 մ, հասնում Շաղատ, Անգեղակոթ և Բալաք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4899 մ է:

### **ՇԱՂԱՏ - ԲԱԼԱՔ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Զ»-«Ե»**

Շաղատ, Անգեղակոթ և Բալաք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, թիվ 1 սահմանակետով անցնելով 232 մ, հասնում է Բալաք միջհամայնքային ճանապարհի եզրին գտնվող թիվ 2 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ, հետո հարավ-արևելք, հատում է ջրբաժանը և թիվ 3-5 սահմանակետերով անցնում է 1484 մ, հասնում է թիվ 6 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 625 մ, հասնում է թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնելով 327 մ, հասնում է Շաղատ, Բալաք և Մուցք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Է» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2668 մ է:

### **ՇԱՂԱՏ - ՄՈՒՑՔ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Է»-«Ը»**

Շաղատ, Մուցք գյուղական համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետից սահմանագիծը գետով, հոսանքին հակառակ ուղղությամբ թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1 սահմանակետով անցնում 4168 մ, հասնում է թիվ 2 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 3-13 սահմանակետերով անցնում 7004 մ, հասնում թիվ 14 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 460 մ, հասնում թիվ 15 սահմանակետին, այնուհետև թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 63 մ, հասնում է թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 17-27 սահմանակետերով անցնում 1000 մ, հասնում է

թիվ 28 սահմանակետին: Թիվ 28 սահմանակետից սահմանագիծը գետով թեքվում է հյուսիս-արևմուտք, հատելով ձորեր, թիվ 29-39 սահմանակետերով անցնում է 1289 մ, հասնում թիվ 40 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևելք, այնուհետև հյուսիս-արևմուտք, ձորով, թիվ 41-45 սահմանակետերով անցնում 749 մ, հասնում Շաղատ գետի եզրին գտնվող թիվ 46 սահմանակետին: Թիվ 46 սահմանակետից սահմանագիծը Շաղատ գետով, թիվ 47-74 սահմանակետերով անցնում է 5735 մ, հասնում է թիվ 75 սահմանակետին: Թիվ 75 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 274 մ, հասնում Շաղատ, Մուցք և Բալաք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետին:

«Է»-«Ը» սահմանագծի ընդհանուր երկարությունը 20742 մ է:

**ՇԱՂԱՏ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԱՂՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ)  
ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ը»-«Թ»**

«Ը»-«Թ» հատվածով սահմանագիծը համընկնում է Հայաստանի Հանրապետության և Աղբրեջանի Հանրապետության պետական սահմանի հետ:

**ՇԱՂԱՏ – ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՍԱՐՁ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Թ»-«Ա»**

«Թ»-«Ա» հատվածով սահմանագիծը համընկնում է Սյունիքի և Վայոց Ձորի մարզերի սահմանի հետ:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇԱՔԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Շաքի գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսային մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն), արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Իշխանասար գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Սիսիան քաղաքային համայնքին, «Դ»-«Ե» հատվածով՝ Բռնակոթ գյուղական համայնքին, արևմուտքից «Ե»-«Ա» հատվածով Անգեղակոթ գյուղական համայնքին:

### **ՇԱՔԻ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԱՊՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը համընկնում է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանի հետ:

### **ՇԱՔԻ – ԻՇԽԱՆԱՍԱՐ՝ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Շաքի, Իշխանասար գյուղական համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, լանջով, թիվ 1-3 սահմանակետերով անցնելով 791 մ, հասնում վարելահողի եզրին գտնվող թիվ 4 սահմանակետին, ապա սահմանագիծը նույն ճանապարհով, թիվ 5-23 սահմանակետերով անցնում է 1058 մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 24 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 131 մ, հասնում թիվ 25 սահմանակետին, հետո թեքվում է հարավ, անցնում 229 մ, հասնում է թիվ 26 սահմանակետին, որը գտնվում է գետի ափին: Թիվ 26 սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով հատելով ձորակներ, առուներ, դաշտային ճանապարհին զուգահեռ, թիվ 27-80 սահմանակետերով անցնում է 4140 մ, հասնում թիվ 81 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 81 սահմանակետով անցնում 1011 մ, հասնում թիվ 83 սահմանակետին, այդտեղից թեքվում է հարավ, անցնում 893 մ, հասնում 84 սահմանակետին, հետո թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 278 մ, հասնում է գետի ափին գտնվող թիվ 85 սահմանակետին, հետո

գետով թեքվում է դեպի հարավ, թիվ 86-90 սահմանակետերով անցնում է 1409 մ, հասնում թիվ 91 սահմանակետին: Թիվ 91 սահմանակետից սահմանագիծը հատվում է Սիսիանի ջրանցքի հետ, ապա թեքվում է հարավ-արևելք, թիվ 92-109 սահմանակետերով հատում Անգեղակոթ-Շաքի միջհամայնքային ճանապարհը և անցնում է 3795 մ, հասնում Որոտան գետի եզրին գտնվող թիվ 110 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 934 մ, հասնում թիվ 122 սահմանակետին, կրկին թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնելով 167 մ, հասնում Գորիս տանող ճանապարհի եզրին գտնվող Շաքի, Իշխանասար գյուղական և Սիսիան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 14836 մ է:

### **ՇԱՔԻ – ՍԻՍԻԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Շաքի, Իշխանասար գյուղական և Սիսիան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 1 սահմանակետով անցնում է 403 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, որտեղից սահմանագիծը կրկին թեքվում է հարավ-արևմուտք, հատելով Սիսիան-Շաքի խճուղին, թիվ 3-8 սահմանակետերով անցնում է 2258 մ, հասնում է թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, թիվ 10 սահմանակետով անցնում 704 մ, հատելով Շաքի գնացող ճանապարհը հասնում թիվ 11 սահմանակետին, որը գտնվում է Որոտան գետի ափին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը Որոտան գետով, հոսանքին հակառակ ուղղությամբ թեքվելով դեպի հյուսիս, ապա արևմուտք, թիվ 11-29 սահմանակետերով անցնում է 2632 մ, հասնում Շաքի, Բռնակոթ գյուղական համայնքների և Սիսիան քաղաքային համայնքի տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5997 մ է:

### **ՇԱՔԻ – ԲՐՆԱԿՈԹ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

Շաքի, Բռնակոթ և Անգեղակոթ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Որոտան գետի ափին, սահմանագիծը գետով թեքվում է հարավ-արևելք, թիվ 1-10 սահմանակետերով անցնում 1784 մ, հասնում Շաքի, Բռնակոթ գյուղական և Սիսիան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1784 մ է:

### **ՇԱՔԻ – ԱՆՁԵՂԱԿՈԹ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Ա»**

Շաքի, Անգեղակոթ գյուղական համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 738 մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 731 մ, հասնում հաջորդ բլրի գագաթին գտնվող թիվ 2 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, բլրագագաթներով, հատելով ձորակներ, առուներ և դաշտային ճանապարհներ, թիվ 3-7 սահմանակետերով անցնում է 4430 մ, հասնում թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհին զուգահեռ թիվ 9-47 սահմանակետերով հատում է ձորակներ, ջրբաժաններ, անցնում 4579 մ, հասնում թիվ 48 սահմանակետին: Թիվ 48 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անցնում 131 մ, հասնում թիվ 49 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, անցնում 429 մ, հասնում է թիվ 50 սահմանակետին: Թիվ 50 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անցնում 663մ, հասնում թիվ 51 սահմանակետին, որտեղից թիվ 52 սահմանակետով անցնելով 229 մ, հասնում թիվ 53 սահմանակետին: Թիվ 53 սահմանակետից թեքվում է հարավ, անցնում է 261 մ, հասնում թիվ 54 սահմանակետին, ապա գետով թեքվում է հարավ, թիվ 55-57 սահմանակետերով անցնում 413 մ, հասնում է թիվ 58 սահմանակետին, որտեղից սահմանագիծը հատվում է Սիսիանի ջրանցքի հետ, թիվ 59-91 սահմանակետերով անցնում է 4831 մ, հասնում թիվ 92 սահմանակետին: Թիվ 92 սահմանակետից սահմանագիծը հատում է Անգեղակոթ-Շաքի գնացող միջհամայնքային ճանապարհը և թեքվելով հարավ-արևելք, թիվ 93-104 սահմանակետերով անցնում է 1983 մ, հասնում թիվ 105 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ, անցնում 313 մ, հասնում Որոտան գետի ափին գտնվող Շաքի, Անգեղակոթ և Բալաք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 19731 մ է:

ՀԱԿԵԼՎԱԾ 17.52  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԻ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇԵՆԱԹԱՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ**

## **ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Շենաթաղ գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսային մասում:

Համայնքը արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Տաթև գյուղական համայնքին, «Բ»-«Գ» հատվածով՝ Սվարանց գյուղական համայնքին, «Գ»-«Դ» հատվածով՝ Տաթև գյուղական համայնքին, հարավից «Դ»-«Ե» հատվածով՝ Գեղի գյուղական համայնքին, արևմուտքից և հյուսիսից «Ե»-«Ա» հատվածով՝ Լոր գյուղական համայնքին:

### **ՇԵՆԱԹԱՂ – ՏԱԹԵՎ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Շենաթաղ, Տաթև և Լոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը լեռան լանջով թեքվում է դեպի հարավ, ջրբաժանով, թիվ 1-2 սահմանակետերով անցնում 919 մ, հասնում թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, հետո հարավ-արևելք, ջրբաժանով, թիվ 4 սահմանակետով անցնում 789 մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը կրկին թեքվում է դեպի հարավ, ջրբաժանով, թիվ 6-7 սահմանակետերով անցնում է 1043 մ, հասնում է թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 9 սահմանակետով անցնում 274 մ, հասնում Շենաթաղ, Տաթև և Սվարանց գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3025 մ է:

### **ՇԵՆԱԹԱՂ – ՍՎԱՐԱՆՑ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Շենաթաղ, Սվարանց և Տաթև գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանով, թիվ 1-7 սահմանակետերով անցնում 1604 մ, հասնում թիվ 8 եռանկյունաչափական «Գյամբել» կոչվող սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում է 615 մ, հասնում լեռնանցքի մոտ գտնվող թիվ 9 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, ճանապարհով, թիվ 10-11 սահմանակետերով անցնում 601 մ, հասնում թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 13 սահմանակետով անցնում է 466 մ, հասնում թիվ 14 սահմանակետին,

որտեղից թեքվում է կրկին դեպի հարավ-արևելք, հատում ջրբաժանը, առուները, ձորակները, լեռան լանջով, թիվ 15-18 սահմանակետերով հատում գետը և անցնելով 2224 մ, հասնում թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 681 մ, հասնում Շենաթաղ, Գեղի և Տաթև գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6193 մ է:

### **ՇԵՆԱԹԱՂ – ՏԱԹԵՎ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Շենաթաղ, Գեղի և Տաթև գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում է 662 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, հետո թեքվում է հարավ-արևելք, անցնում 509 մ, հասնում Շենաթաղ, Տաթև և Գեղի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1171 մ է:

### **ՇԵՆԱԹԱՂ – ԳԵՂԻ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

Շենաթաղ, Գեղի և Լոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք և թիվ 1-5 սահմանակետերով անցնում 416 մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 6 սահմանակետին, ապա սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, թեք լանջերով, թիվ 7-28 սահմանակետերով անցնում է 2557մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 29 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը նույն ուղղությամբ թիվ 30-48 սահմանակետերով անցնելով 1785 մ, հասնում է թիվ 49 սահմանակետին: Թիվ 49 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևելք, կորագծով, թիվ 50-55 սահմանակետերով անցնում է 697 մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 56 սահմանակետին: Այդտեղից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, բարձրունքներով, թիվ 57-67 սահմանակետերով անցնում 1938 մ, հասնում թիվ 68 սահմանակետին: Թիվ 68 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 69-80 սահմանակետերով անցնում է 1127 մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 81 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ջրբաժանով, թիվ 82-87 սահմանակետերով անցնում է 835 մ, հասնում բարձրունքի վրա գտնվող թիվ 88 սահմանակետին: Թիվ 88 սահմանակետից սահմանագիծը

թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 89-104 սահմանակետերով անցնում է 1963 մ, հասնում է թիվ 105 սահմանակետին, այդտեղից կրկին թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 106-108 սահմանակետերով անցնում 1259 մ, հասնում է թիվ 109 սահմանակետին: Թիվ 109 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ձորով անցնում է 96 մ, հասնում է թիվ 110 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս արևելք, թիվ 111-112 սահմանակետերով հատում է դաշտային ճանապարհը և ձորակներով անցնում է 477 մ, հասնում է բլրի վրա գտնվող թիվ 113 սահմանակետին, այնուհետև թեքվում է արևելք, կորագծով, թիվ 114-117 սահմանակետերով անցնում է 767մ, հասնում է թիվ 118 սահմանակետին: Թիվ 118 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, հատելով ձորակներ, բլրագագաթներով, թիվ 119-126 սահմանակետերով անցնում 662 մ, հասնում է բլրի գագաթին գտնվող թիվ 127 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս-արևելք, կրկին հատելով ձորակներ, դաշտային ճանապարհներ, թիվ 128-131 սահմանակետերով անցնում է 312մ, հասնում թիվ 132 սահմանակետին: Թիվ 132 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 268 մ, հասնում Շենաթաղ, Գեղի և Տաթև գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 15159 մ է:

### **ՇԵՆԱԹԱՂ – ԼՈՐ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Ե»-«Ա»**

Տաթև, Լոր և Շենաթաղ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 1-3 սահմանակետերով անցնում է 814 մ, հասնում է թիվ 4 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում դաշտային ճանապարհը, ջրբաժանը և առվով անցնում է 242 մ, հասնում է թիվ 5 սահմանակետին, որը գտնվում է ճանապարհի և ջրբաժանի հատման տեղում: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է հյուսիս-արևմուտք, թիվ 6-12 սահմանակետերով անցնելով 2215 մ, հասնում է թիվ 13 սահմանակետին, այդտեղից սահմանագիծը ջրբաժան առվով, թիվ 14-18 սահմանակետերով անցնում է 1916 մ, հասնում թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը կտրուկ թեքվում է դեպի հյուսիս, անցնում 108 մ, հասնում է թիվ 20 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 332 մ, հասնում թիվ 21 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է արևմուտք, անցնում 475 մ, հասնում թիվ 22 սահմանակետին: Թիվ 22 սահմանակետից

սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 331 մ, հասնում է թիվ 23 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, անցնում 305 մ, հասնում թիվ 24 սահմանակետին: Թիվ 24 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, թիվ 25-29 սահմանակետերով անցնում է 1153 մ, հասնում Շենաթաղ-Լոր միջհամայնքային ճանապարհի և գետի հատման տեղում գտնվող թիվ 30 սահմանակետին: Թիվ 30 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք և թիվ 31-32 սահմանակետերով անցնում է 388 մ, հասնում է թիվ 33 սահմանակետին: Թիվ 33 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, անցնում 115 մ, հասնում թիվ 34 սահմանակետին: Թիվ 34 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում է 211 մ, հասնում է թիվ 35 սահմանակետին, այդտեղից թեքվում է դեպի հարավ, թիվ 36 սահմանակետով անցնում է 514 մ, հասնում է թիվ 37 սահմանակետին: Թիվ 37 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 512 մ, հասնում է թիվ 38 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 39-41 սահմանակետերով անցնում է 1806 մ, հասնում է թիվ 42 սահմանակետին, այդտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 476 մ, հասնում է թիվ 43 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 44 սահմանակետով անցնում 1155 մ, հասնում է թիվ 45 սահմանակետին: Թիվ 45 սահմանակետից սահմանագիծը թեքվում է կրկին հարավ-արևմուտք, հատելով ձորեր, ճանապարհներ, թիվ 46 սահմանակետով անցնում է 1278 մ, հասնում թիվ 47 սահմանակետին, ապա թեքվում է հարավ, անցնում է 587 մ, հասնում է թիվ 48 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք, կրկին հատում է ջրբաժանը, անցնելով 596 մ, հասնում թիվ 49 սահմանակետին: Թիվ 49 սահմանակետից սահմանագիծը դարձյալ թեքվում է հարավ-արևմուտք, անցնում է 1313 մ, հատելով ձորեր, ջրբաժաններ և ճանապարհներ, հասնում է ճանապարհի եզրին գտնվող թիվ 50 սահմանակետին: Թիվ 50 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 475 մ, հասնում թիվ 51 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հարավ, անցնում 605 մ, հասնում է Շենաթաղ գետի ափին գտնվող թիվ 52 սահմանակետին, ապա գետով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 1900 մ, հասնում թիվ 53 սահմանակետին, այդտեղից սահմանագիծը կրկին թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 54-67 սահմանակետերով անցնում է 538 մ, հասնում թիվ 68 սահմանակետին: Թիվ 68 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 166 մ, հասնում է թիվ 69 սահմանակետին, այդտեղից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով ձորեր, դաշտային ճանապարհներ և առուներ անցնում է 444 մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 70 սահմանակետին,

որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ, բարձրունքներով, հատելով ձորակներ, առուններ, թիվ 71-73 սահմանակետերով անցնում է 685 մ, հասնում Շենաթաղ, Գեղի և Լոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հաբզուցային սահմանակետին:

«Ե»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 21655 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇԻԿԱՅՈՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԵԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Շիկահող գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավարևելյան մասում:

Համայնքը արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն), հարավից «Բ»-«Գ» հատվածով՝ Սրաշեն և «Գ»-«Դ» հատվածով՝ Ծավ գյուղական համայնքներին, արևմուտքից և հյուսիսից «Դ»-«Ա» հատվածով՝ ճակատեն գյուղական համայնքին:

### **ՇԻԿԱՅՈՂ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԱՂԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Ա»-«Բ»**

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը համընկնում է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանի հետ:

### **ՇԻԿԱՅՈՂ – ՍՐԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Բ»-«Գ»**

Շիկահող, Սրաշեն և Ծավ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևելք, անտառի եզրով անցնելով 181 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, այնուհետև թեքվում է հյուսիս-արևելք, անցնելով 526 մ, հասնում է թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը նորից թեքվում է հարավ-արևելք, անտառի եզրագծով, թիվ 3-5 սահմանակետերով, անցնելով 1602 մ, հասնում է թիվ 6 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում լեռնալանջեր, ձորեր ու ձորակներ, թեքվում հյուսիս-արևելք և դաշտային ճանապարհով անցնում 6033 մ, հասնում է թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 8-11 սահմանակետերով անցնում 1134 մ, հասնում է թիվ 12 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 145 մ, հասնում թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը կտրուկ թեքվում է հյուսիս, անտառի եզրով անցնելով 488 մ, հասնում է թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թիվ 15 սահմանակետով, ջրբաժանով անցնելով 854 մ, հասնում է թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը

թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 210 մ, հասնում է թիվ 17 սահմանակետին, ապա թեքվում է արևելք, թիվ 18-20 սահմանակետերով անցնում 712 մ, հասնում թիվ 21 սահմանակետին, որը գտնվում է Շիկահող գետի եզրին: Թիվ 21 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք և թիվ 22-25 սահմանակետերով անցնելով 710 մ, հասնում է թիվ 26 սահմանակետին: Թիվ 26 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 27 սահմանակետով անցնելով 275 մ, հասնում է թիվ 28 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք և թիվ 29-31 սահմանակետերով անցնելով 434 մ, հասնում է թիվ 32 սահմանակետին: Թիվ 32 սահմանակետից սահմանագիծը թեքվում նույն ուղղությամբ, թիվ 33-39 սահմանակետերով անցնելով 1079 մ, հասնում է թիվ 40 սահմանակետին: Թիվ 40 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անցնում 153 մ, հասնում է թիվ 41 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք, թիվ 42-44 սահմանակետերով անցնում 609 մ, հասնում է Շիկահող, Սրաշեն գյուղական համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 14992 մ է:

#### **ՇԻԿԱՀՈՂ – ԾԱՎ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Գ»-«Դ»**

Շիկահող, Ծավ և ճակատեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 170 մ, հասնում թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 2 սահմանակետով անցնում 286 մ, հասնում թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 4-6 սահմանակետերով անցնում 1342 մ, հասնում թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 8-17 սահմանակետերով անցնում 2901 մ, հասնում Շիկահող, Ծավ և Սրաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4699 մ է:

#### **ՇԻԿԱՀՈՂ – ՃԱԿԱՏԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Դ»-«Ա»**

Շիկահող, ճակատեն գյուղական և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 31 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է արևմուտք, անցնում 302մ, հասնում թիվ 2 սահմանակետին: թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 3 սահմանակետով անցնում 661 մ, հասնում թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 109 մ, հասնում թիվ 5 սահմանակետին, ապա նույն ուղղությամբ, անտառի եզրագծով թիվ 6 սահմանակետով անցնում է 410 մ, հասնում թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, թիվ 8 սահմանակետով անցնում 400 մ, հասնում թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անտառի եզրագծով թիվ 10-11 սահմանակետերով անցնում 776 մ, հասնում թիվ 12 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 192մ, հասնում թիվ 13 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս արևմուտք անցնում 251մ, հասնում թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք թիվ 15 սահմանակետով անցնում 440մ, հասնում թիվ 16 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևմուտք, հատում դաշտային ճանապարհը, ձորը և թիվ 17-22 սահմանակետերով անցնում 1889մ, հասնում թիվ 23 սահմանակետին: Թիվ 23 սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է հյուսիս-արևելք, միանում գետակին, ապա թեքվում է արևելք և հարավ-արևելք, թիվ 25-33 սահմանակետերով անցնում 2314 մ, հասնում թիվ 24 սահմանակետին: Թիվ 24 սահմանակետից սահմանագիծը անտառի եզրագծով թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 16750 մ, հասնում Շիկահող, ճակատեն և Ծավ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 24525 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇԻՆՈՒՀԱՅՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Շինուհայր գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսային մասում:

Համայնքը հյուսիսից և արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Ակներ գյուղական համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Գորիս քաղաքային համայնքին, «Գ»-«Դ» հատվածով՝ Խոտ գյուղական համայնքին, հարավ-արևելքից «Դ»-«Ե» հատվածով՝ Որոտան գյուղական համայնքին, «Ե»-«Զ» հատվածով՝ Բարձրավան գյուղական համայնքին, հարավ- արևմուտքից «Զ»-«Է» հատվածով՝ Հալիձոր գյուղական համայնքին, արևմուտքից «Է»-«Ա» հատվածով՝ Հարժիս գյուղական համայնքին:

### **ՇԻՆՈՒՀԱՅՐ-ՎԿՆԵՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Շինուհայր, Հարժիս և Ակներ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը լանջերով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, հատելով ճանապարհներ և փոքրիկ ձորքակներ, թիվ 1-8 սահմանակետերով անցնում է 736մ, հասնում թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը լանջերով թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով դաշտային ճանապարհներ, առուներ, թիվ 10-34 սահմանակետերով անցնում է 1911, հասնում թիվ 35 սահմանակետին, որը գտնվում է թմբի վրա: Թիվ 35 սահմանակետից սահմանագիծը թեքվում նույն ուղղությամբ, անցնում է 422մ, հասնում հաջորդ թմբի գագաթին գտնվող թիվ 36 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, լանջերով, ձորակներով թիվ 37-39 սահմանակետերով անցնում 1576մ, հասնում թիվ 40 սահմանակետին: Թիվ 40 սահմանակետից սահմանագիծը լանջով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 549մ, հասնում թիվ 41 սահմանակետին, որտեղից լանջերով, բարձրունքներով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 42-43 սահմանակետերով անցնում 2691մ, հատելով ձորակներ, դաշտային ճանապարհներ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 44 սահմանակետին: Թիվ 44 սահմանակետից սահմանագիծը թեք լանջերով թեքվում է արևելք, անցնում 1071մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 45 սահմանակետին, այնուհետև դաշտային ճանապարհով թեքվում է հարավ-արևելք, թիվ 46-50 սահմանակետերով անցնում 1696մ, հասնում գետի ափին գտնվող

Շինուհայր, Ակներ գյուղական և Գորիս քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 10652մ է:

### **ՇԻՆՈՒՀԱՅՐ-ԳՈՐԻՍ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Բ»-«Գ»**

Շինուհայր, Ակներ գյուղական և Գորիս քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 75մ, հասնում գետի ափին գտնվող թիվ 1 սահմանակետին, այնուհետև թեքվում հարավ, անցնում 148մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 2 սահմանակետին, որտեղից ձորով թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 3-10 սահմանակետերով անցնում 1156մ, հասնում թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում գետը, դաշտային ճանապարհով անցնում 184մ, հասնում է թիվ 12 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ, անցնում 77մ, հասնում թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 14-16 սահմանակետերով անցնում 247մ, հասնում թիվ 17 սահմանակետին, թեքվում է հարավ, անցնում 49մ, հասնում թիվ 18 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 120մ, հասնում թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 562մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 20 սահմանակետին, այնուհետև կրկին թեքվում է հյուսիս-արևմուտք, հատում ձորը, անցնում 670մ, հասնում է թիվ 21 սահմանակետին: Թիվ 21 դսահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, հատում ձորակներ, թիվ 22 սահմանակետով անցնում 665մ, հասնում թիվ 23 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, անցնում 204մ, հասնում թիվ 24 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ, թիվ 25 սահմանակետով անցնում 1110մ, հասնում Անգեղակոթ-Գորիս միջհամայնքային ճանապարհի եզրին գտնվող թիվ 26 սահմանակետին: Թիվ 26 սահմանակետից սահմանագիծը, հատելով գետակը, թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 27 սահմանակետով անցնում 277մ, հասնում թիվ 28 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 224մ, հասնում թիվ 29 սահմանակետին: Թիվ 29 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 425մ, հասնում թիվ 30 սահմանակետին: Թիվ 30 սահմանակետից սահմանագիծը լանջով թեքվում է արևելք, թիվ 31 սահմանակետով անցնում 199մ, հասնում է թիվ 32 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, հատում դաշտային ճանապարհը, անցնում 688մ,

հասնում թիվ 33 սահմանակետին, այդտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 93մ, հասնում թիվ 34 սահմանակետին: Թիվ 34 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, լանջով, թիվ 35-36 սահմանակետերով անցնում 1021մ, հատելով դաշտային ճանապարհը, հասնում ճանապարհի եզրի թիվ 37 սահմանակետին: Թիվ 37 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 38-39 սահմանակետերով անցնում 574մ, հասնում թիվ 40 սահմանակետին: Թիվ 40 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս, անցնում 85մ, հասնում թիվ 41 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 12 սահմանակետով անցնում 317մ, հասնում Շինուհայր, Խոտ գյուղական և Գորիս քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 9170 մ է:

### **ՇԻՆՈՒՀԱՅՐ-ԽՈՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Գ»-«Դ»**

Շինուհայր, Խոտ գյուղական և Գորիս քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 100մ, հասնում թիվ 1 սահմանակետին, ապա լանջով թեքվում է հարավ-արևելք, անցնում 282մ, հասնում թիվ 2 սահմանակետին, թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 166մ, հասնում է թիվ 3 սահմանակետին, թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 4-6 սահմանակետերով անցնում 1182մ, հասնում ճանապարհի եզրին գտնվող թիվ 7 սահմանակետին, որտեղից ճանապարհով թեքվում է նույն ուղղությամբ, քարակույտերի և լճի կողքով, թիվ 8-29 սահմանակետերով անցնում 4329մ, հատելով Շինուհայրից դուրս եկող ճանապարհը, հասնում թիվ 30 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ, անցնում 73մ, հասնում թիվ 31 սահմանակետին: Թիվ 31 սահմանակետից սահմանագիծը անցնում է 353մ, հատելով ժայռեր, հասնում ժայռի և ձորի հատման տեղում գտնվող թիվ 32 սահմանակետին: Թիվ 32 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, կրկին հատելով ժայռերը, անցնում 575մ, հասնում անտառի եզրին գտնվող թիվ 33 սահմանակետին, որտեղից թեքվում է նույն ուղղությամբ, անտառի եզրով, ձորով, ճանապարհով թիվ 34-36 սահմանակետերով անցնում 788մ, հասնում թիվ 37 սահմանակետին: Թիվ 37 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 564մ, հասնում ժայռի գագաթին գտնվող թիվ 38 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, հատում ժայռեր, ձորակներ, անցնում 783մ, հասնում է անտառի եզրին գտնվող թիվ 39 սահմանակետին, թեքվում է դեպի

հարավ-արևելք, անցնում 274մ, հասնում Շինուհայր, Որոտան և Խոտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 9469 մ է:

### **ՇԻՆՈՒՀԱՅՐ-ՈՐՈՏԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Դ»-«Ե»**

Շինուհայր, Որոտան և Խոտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 111մ, հասնում Շինուհայր, Որոտան և Բարձրավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 111 մ է:

### **ՇԻՆՈՒՀԱՅՐ-ԲԱՐՁՐԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Ե»-«Զ»**

Շինուհայր, Որոտան և Բարձրավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անտառի միջով, թիվ 1 սահմանակետով անցնում 528մ, հատելով ձորեր, ձորակներ, հասնում է թիվ 2 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի արևմուտք, անցնում 278մ, հասնում թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, թիվ 4-6 սահմանակետերով անցնում 917մ, հասնում Որոտան գետի ափին գտնվող թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը Որոտան գետով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 8-17 սահմանակետերով անցնում 1587մ, հասնում Շինուհայր, Հալիձոր և Բարձրավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3310 մ է:

### **ՇԻՆՈՒՀԱՅՐ-ՀԱԼԻՁՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Զ»-«Է»**

Շինուհայր, Հալիձոր և Հարժիս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հյուսիս-արևելք թիվ 1 սահմանակետով անցնում 478մ, հասնում թիվ 2 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 359մ, հասնում է թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք անցնում 386մ, հասնում է թիվ 4

սահմանակետին, ապա թեքվում թ դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 159մ, հասնում է թիվ 5 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 6-7 սահմանակետերով անցնում 497մ, հասնում ճանապարհների հատման տեղում գտնվող թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 9-22 սահմանակետերով անցնում 2024մ, հասնում թիվ 23 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 259մ, հասնում թիվ 24 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք, անցնում 201մ, հասնում թիվ 25 սահմանակետին: Թիվ 25 սահմանակետից սահմանագիծը թեքվում դեպի հյուսիս-արևելք, ճանապարհի ոլորաններով, թիվ 26-33 սահմանակետերով անցնում 1501մ, հասնում թիվ 34 սահմանակետին: Թիվ 34 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 529մ, հասնում թիվ 35 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 36-39 սահմանակետերով անցնում 858մ, հասնում թիվ 40 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ և հարավ-արևելք, թիվ 41-42 սահմանակետերով անցնում 1466մ, հասնում է Շինուհայր, Չալիձոր, և Բարձրավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Է» սահմանագծի ընդհանուր երկարությունը 8717 մ է:

### **ՇԻՆՈՒՀԱՅՐ-ՉԱՐԺԻՍ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ «Է»-«Ա»**

Շինուհայր, Չարժիս և Ակներ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը լանջով թեքվում է դեպի հարավ, թիվ 1 սահմանակետով անցնում 671մ, հասնում սարի գագաթին գտնվող թիվ 2 սահմանակետին, որտեղից բարձրունքներով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 3-5 սահմանակետերով անցնում 2277մ, հատելով ձորը, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը լանջերով թեքվում է կրկին դեպի հարավ-արևելք, թիվ 7 սահմանակետով, անցնում 1680մ, հատելով ձորեր և դաշտային ճանապարհներ, հասնում լեռան գագաթին գտնվող թիվ 8 սահմանակետին, այնուհետև ջրբաժանով, լանջով թեքվում է հարավ, ապա հարավ-արևմուտք, թիվ 9 սահմանակետով անցնում 3291մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 11-23 սահմանակետերով անցնում 1107մ, հասնում Գորիս-Անգեղակոթ միջհամայնքային ճանապարհի եզրին գտնվող թիվ 24 սահմանակետին:

Թիվ 24 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, թիվ 25 սահմանակետով անցնում 533մ, հասնում թիվ 26 սահմանակետին, որտեղից լանջով թեքվում է հարավ-արևելք, անցնում 696մ, հասնում թիվ 27 սահմանակետին: Թիվ 27 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 373մ, հատելով միջհամայնքային ճանապարհը, հասնում թիվ 28 սահմանակետին, որտեղից քարակույտերի մոտով, թիվ 29 սահմանակետով, անցնում 546մ, հասնում թիվ 30 սահմանակետին: Թիվ 30 սահմանակետից սահմանագիծը լանջով թեքվում է դեպի հարավ, անցնում 369մ, հասնում թիվ 31 սահմանակետին, ապա լանջով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 342մ, հասնում ձորի և ճանապարհի հատման տեղում գտնվող թիվ 32 սահմանակետին: Թիվ 32 սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 119մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 33 սահմանակետին: Թիվ 33 սահմանակետից սահմանագիծը առվով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 34-39 սահմանակետերով անցնում 1068մ, հասնում թիվ 40 սահմանակետին: Թիվ 40 սահմանակետից սահմանագիծը նույն ուղղությամբ լեռնալանջով, թիվ 41-44 սահմանակետերով անցնում է 1895մ, հասնում լեռան ստորոտի դաշտային ճանապարհի եզրին գտնվող Շինուհայր, Չարժիս և Չալիձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «է» հանգուցային սահմանակետին:

«է»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 14967 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇՎԱՆԻՉՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Շվանիձոր գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավարևելյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Ծավ գյուղական համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Նռնաձոր գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ պետական սահման (Իրանի Իսլամական Հանրապետություն) արևմուտքից «Դ»-«Ա» հատվածով՝ Ալվանք գյուղական համայնքին:

### **ՇՎԱՆԻՉՈՐ-ԾԱՎ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Շվանիձոր, Ալվանք և Ծավ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս, անցնում 500մ, հասնում է բլրի գագաթին գտնվող թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը բլրի գագաթից, թամբով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ջրբաժանով անցնում 641մ, հասնում 2825.8 միչ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 2 սահմանակետին, այնուհետև ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 870մ, հասնում ջրբաժանի վրա գտնվող թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 188մ, հասնում 2621մ միչ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 4 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 410մ, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 412 մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 6 սահմանակետին, այնուհետև նույն ջրբաժանով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 384 մ, հասնում 2447.0 մ միչ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 7 սահմանակետին, այնուհետև նույն ջրբաժանով անցնում է 359 մ, հասնում թամբի վրա գտնվող թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով անցնում է 475 մ, հասնում 2431.0 մ միչ ունեցող բարձունքի վրա գտնվող թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 922 մ, ջրբաժանով հասնում 2329.0 մ միչ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանով անցնում 295մ, հասնում

թիվ 11 սահմանակետին, որտեղից նույն ջրբաժանով թեքվում է նույն ուղղությամբ, հատում 2232մ, նիշ ունեցող լեռնանցքը, անցնում 601մ, հասնում թիվ 12 սահմանակետին, ապա նույն ջրբաժանով անցնում է 164մ, հասնում 2313.0 նիշ ունեցող բլրի գագաթի գտնվող թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից, նույն ջրբաժանով անցնելով 186մ, հասնում թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 382մ, հասնում 2356մ նիշ ունեցող բարձրունքի վրա գտնվող թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, անցնում 558մ, հատելով թամբը, հասնում 2366.9մ նիշ ունեցող «Գյունարանդաղ» բարձրունքի վրա գտնվող թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 159մ, հասնում նույն բլրի հյուսիսային մասում գտնվող թիվ 17 սահմանակետին, ապա նույն ջրբաժանով, թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 431մ, հասնում թիվ 18 սահմանակետին: , որտեղից նույն ջրբաժանով, նույն ուղղությամբ, անցնում է 240մ, հասնում թիվ 19 սահմանակետին, այնուհետև թեքվում դեպի արևելք, անցնում 300մ, հասնում թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 323մ, հասնում 2059 մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 21 սահմանակետին: Թիվ 21 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 570մ, հասնում ջրհավաքի եզրին գտնվող թիվ 22 սահմանակետին: Թիվ 22 սահմանակետից սահմանագիծը ջրհավաքով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 23, 24 սահմանակետերով անցնելով 646մ, հասնում թիվ 25 սահմանակետին: Թիվ 25 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 26 սահմանակետով անցնում 1098մ, հասնում 2373մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող Շվանիձոր, Ծավ և Նռնաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 11114 մ է:

### **ՇՎԱՆԻՁՈՐ-ՆՈՆԱՁՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Բ»-«Գ»**

Շվանիձոր, Նռնաձոր և Ծավ գյուղական համայնքների տարածքների բաժանման 2373մ նիշ ունեցող «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1-2 սահմանակետերով անցնում 2263մ, հասնում թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը բարձրունքներով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 4-6 սահմանակետերով անցնում 3032մ, հատելով ձորակներ, հասնում բլրի վրա գտնվող թիվ 7

սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը ջրհավաքով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 397մ, հասնում 1321.0մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ , անցնում 747մ, հասնում 1249.0մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 852մ, հասնում 1260.0մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 878մ, հասնում 1028.0մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 12 սահմանակետով անցնում 1340մ, հասնում թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 364մ, հասնում թիվ 14 սահմանակետին, ապա թեքվում դեպի հարավ-արևմուտք, թիվ 15 սահմանակետով անցնում 967մ, հասնում թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 1037մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնելով 671մ, հասնում թիվ 18 սահմանակետին, ապա սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 248մ, հասնում Նռնաձոր, Շվանիձոր գյուղական համայնքների և պետական սահման (Իրանի Իսլամական Հանրապետություն) տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 12795 մ է:

### **ՇՎԱՆԻՁՈՐ –ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Գ»-«Դ»**

«Գ»-«Դ» հատվածով սահմանագիծը հանընկնում է Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության պետական սահմանի հետ:

### **ՇՎԱՆԻՁՈՐ-ԱԼՎԱՆՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Դ»-«Ա»**

Շվանիձոր, Ալվանք և Ծավ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-2 սահմանակետերով անցնում 1980 մ, հասնում 2103.0 մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից

սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 4-5 սահմանակետերով, 1921.0 մ նիշ ունեցող բարձունքով անցնում 1365 մ, հասնում թիվ 6 սահմանակետին, որտեղից թեքվում է նույն ուղղությամբ, անցնում 918 մ, հասնում բարձունքի վրա գտնվող թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, անցնում 56 մ, հասնում թիվ 8 սահմանակետին, որտեղից բարձունքներով թեքվում է հարավ-արևելք, թիվ 9-10 սահմանակետերով անցնում 928 մ, հասնում թիվ 11 սահմանակետին, որտեղից բարձունքներով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, թիվ 12-16 սահմանակետերով անցնում 1150 մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է արևելք, անցնում 613 մ, հասնում թիվ 18 սահմանակետին, որտեղից ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 19-20 սահմանակետերով անցնում 988 մ, հասնում 1333.0 մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 21 սահմանակետին: Թիվ 21 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանով անցնում 541 մ, հասնում թիվ 22 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, անցնում 364 մ, հասնում 1252.3 մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 23 սահմանակետին, այնուհետև ջրբաժանով թեքվում է դեպի հարավ, թիվ 24 սահմանակետով անցնում 1169 մ, հասնում թիվ 25 սահմանակետին: Թիվ 25 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 312 մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 26 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 206 մ, հասնում հաջորդ բլրի վրա գտնվող թիվ 27 սահմանակետին, ապա նույն ուղղությամբ, թիվ 28-30 սահմանակետերով անցնում է 2122 մ, հասնում թիվ 31 սահմանակետին: Թիվ 31 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 32-33 սահմանակետերով անցնում 1724 մ, հասնում Շվանիձոր, Ալվանք գյուղական համայնքների և պետական սահման (Իրանի Իսլամական Հանրապետություն) տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 14440 մ է:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇՈՒՆՈՒԽ ԳՅՈՒՂԱԿԱՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԵԿՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ**

Շուռնուխ գյուղական համայնքը գտնվում է մարզի արևելյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն), արևելքից և հարավից «Բ»-«Գ» հատվածով՝ Դավիթ Բեկ գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Սևաքար գյուղական համայնքին, «Դ»-«Ե» հատվածով՝ Եղեգ գյուղական համայնքին, «Ե»-«Զ» հատվածով՝ Վերին Խոտանան գյուղական համայնքին, արևմուտքից «Զ»-«Է» հատվածով՝ Տանձավեր գյուղական համայնքին, «Է»-«Ա» հատվածով՝ Բարձրավան գյուղական համայնքին:

**ՇՈՒՆՈՒԽ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ)  
ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը հանդնկնում է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանի հետ:

**ՇՈՒՆՈՒԽ – ԴԱՎԻԹ ԲԵԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Շուռնուխ, Դավիթ Բեկ և Սևաքար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անտառով, առվով անցնում 1855 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս, անցնում 212 մ, հասնում Շուռնուխ, Դավիթ-Բեկ գյուղական համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2067 մ է:

**ՇՈՒՆՈՒԽ – ՍԵՎԱՔԱՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Շուռնուխ, Սևաքար և Եղեգ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անտառով, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 1619 մ, հասնում Շուռնուխ, Սևաքար, և Դավիթ Բեկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1619 մ է:

### **ՇՈՒՐՆՈՒՄ – ՍԵՎԱՔԱՐ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

Շուռնուխ, Եղեգ և Սևաքար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 60մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 2-4 սահմանակետերով, անտառի եզրով անցնում է 746 մ, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 182 մ, հասնում Շուռնուխ, Եղեգ և Վերին Խոտանան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 988 մ է:

### **ՇՈՒՐՆՈՒՄ – ՎԵՐԻՆ ԽՈՏԱՆԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Ե»-«Զ»**

Շուռնուխ, Վերին Խոտանան և Տանձավեր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անտառով, թիվ 1 սահմանակետով անցնում 608 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, լանջով անցնում 282 մ, հասնում թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, հատում դաշտային ճանապարհը, թիվ 4 սահմանակետով անցնում 374 մ, հասնում թիվ 5 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, լանջով անցնում 377 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը ձորով անցնում է 4004 մ, հասնում թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, ջրբաժանով, թիվ 8-12 սահմանակետերով անցնում 1314 մ, հասնում թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք,

թիվ 14 սահմանակետով անցնում 192 մ, հասնում թիվ 15 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հարավ, անցնում 106 մ, հասնում թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը լանջով, թիվ 17 սահմանակետով անցնում է 252 մ, հասնում թիվ 18 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 103 մ, հասնում թիվ 19 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը եքվում է արևելք, անցնում 194 մ, հասնում թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս անցնում 191 մ, հասնում թիվ 21 սահմանակետին: Թիվ 21 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևելք, լանջերով, բլուրների գագաթներով, թիվ 22-31 սահմանակետերով անցնում 1675 մ, հասնում թիվ 32 սահմանակետին: Թիվ 32 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով, թիվ 33-35 սահմանակետերով անցնում 939 մ, հասնում է թիվ 36 սահմանակետին: Թիվ 36 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 530 մ, հասնում Շուռնուխ, Վերին Խոտանան և Եղեգ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ձ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 11139 մ է:

#### **ՇՈՒՌՆՈՒՒՄ – ՏԱՆՁԱՎԵՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ձ»-«Ե»**

Շուռնուխ, Տանձավեր և Բարձրավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 572մ հասնում թիվ 1 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հարավ, թիվ 2 սահմանակետով անցնում է 501մ, հասնում է թիվ 3 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 165մ, հասնում թիվ 4 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, թիվ 5-8 սահմանակետերով անցնում 560մ հասնում թիվ 9 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 10 սահմանակետով անցնում 168մ, հասնում թիվ 11 սահմանակետին, այդտեղից թեքվում է դեպի հարավ, թիվ 10-17 սահմանակետերով անցնում 356մ հասնում Շուռնուխ, Տանձավեր և Վերին Խոտանան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ձ» հանգուցային սահմանակետին:

«Ձ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2322մ է:

#### **ՇՈՒՌՆՈՒՒՄ – ԲԱՐՉՐԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Ա»**

Շուռնուխ, Բարձրավան գյուղական համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ջրատարով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, թիվ 1-50 սահմանակետերով անցնում 3685 մ, հասնում թիվ 51 սահմանակետին: Թիվ 51 սահմանակետից սահմանագիծը լանջով թեքվում է դեպի արևմուտք, թիվ 52-55 սահմանակետերով անցնում 1041 մ, հատելով ձորակներ, հասնում թիվ 56 սահմանակետին, որտեղից լանջով թեքվում է հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, թիվ 57 սահմանակետով անցնում 814 մ, հասնում թիվ 58 սահմանակետին: Թիվ 58 սահմանակետից սահմանագիծը բարձունքներով թեքվում է դեպի արևելք, ապա հարավ-արևելք, թիվ 59-60 սահմանակետերով անցնում 1112 մ, հատելով ձորակներ, հասնում Շուռնուխ, Բարձրավան և Տանձավեր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետին:

«Է»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6652 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՈՐՈՏԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Որոտան գյուղական համայնքը գտնվում է մարզի արևմտյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Խոտ գյուղական համայնքին, արևմուտքից «Բ»-«Գ» հատվածով՝ պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն), հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Բարձրավան գյուղական համայնքին, արևմուտքից «Դ»-«Ա» հատվածով՝ Շինուհայր գյուղական համայնքին:

### **ՈՐՈՏԱՆ – ԽՈՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Որոտան, Շինուհայր և Խոտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Որոտան գետի ափին, սահմանագիծը գետով, հոսանքի ուղղությամբ թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 1-24 սահմանակետերով անցնում 2913 մ, հասնում է թիվ 25 սահմանակետին, ապա հատում է Գորս-Կապան հանրապետական նշանակության ճանապարհը, թիվ 26-27 սահմանակետերով անցնում 283 մ, հասնում թիվ 28 սահմանակետին: Թիվ 28 սահմանակետից սահմանագիծը հյուսիս-արևելյան ուղղությամբ, թիվ 29-34 սահմանակետերով անցնում 1237 մ, հասնում Որոտան, Խոտ գյուղական համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4433 մ է:

### **ՈՐՈՏԱՆ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

«Բ»-«Գ» հատվածով սահմանագիծը հանդնկնում է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանի հետ:

### **ՈՐՈՏԱՆ – ԲԱՐՉՐԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Որոտան, Բարձրավան և Շինուհայր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է անտառի եզրին, սահմանագիծը անտառի եզրով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 1-5 սահմանակետերով անցնում 1843մ, հասնում թիվ 6 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, անտառի եզրի թիվ 7-9 սահմանակետերով անցնում 1008մ, հասնում թիվ 10 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անտառի եզրով անցնում 418մ, հասնում Գորիս-Կապան հանրապետական նշանակության ավտոճանապարհի վրա գտնվող թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը նշված ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 12-73 սահմանակետերով անցնում 6293մ, հասնում Որոտան, Բարձրավան գյուղական համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Ջանրապետություն) տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 9562 մ է:

#### **ՈՐՈՏԱՆ – ՇԻՆՈՒՀԱՅՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ա»**

Որոտան, Շինուհայր և Խոտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 131 մ, հասնում անտառի եզրին գտնվող Որոտան, Շինուհայր և Բարձրավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 131 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԱԼՎԱՐԴ ԳՅՈՒՂԱԿԱՆ**

### **ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Սալվարդ գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսային մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Բռնակոթ գյուղական համայնքին, հյուսիս-արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Հացավան գյուղական համայնքին, արևելքից «Գ»-«Դ» հատվածով՝ Թասիկ գյուղական համայնքին, հարավից «Դ»-«Ե» հատվածով՝ Թանահատ գյուղական համայնքին, «Ե»-«Զ» հատվածով՝ Արևիս գյուղական համայնքին, արևմուտքից «Զ»-«Ա» հատվածով՝ պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն):

### **ՍԱԼՎԱՐԴ - ԲՈՆԱԿՈԹ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Սալվարդ, Բռնակոթ գյուղական համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից ժայռի արևելյան եզրով սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 1-5 սահմանակետերով անցնում 648 մ, հասնում թիվ 6 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք և թիվ 7-9 սահմանակետերով անցնում է 213մ, հասնում թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 11-38 սահմանակետերով անցնում 1783 մ, հասնում է թիվ 39 սահմանակետին, որտեղից կրկին թեքվում հյուսիս-արևելք, դաշտային ճանապարհով, թիվ 40-41 սահմանակետերով անցնում 940 մ, հասնում թիվ 42 սահմանակետին: Թիվ 42 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 1309մ, հասնում թիվ 43 սահմանակետին: Թիվ 43 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 670մ, հասնում թիվ 44 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ապա հարավ-արևելք, թիվ 45-60 սահմանակետերով անցնում է 3590 մ, հասնում թիվ 61 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, հատում ձորեր և դաշտային ճանապարհ, թիվ 62-68 սահմանակետերով անցնում է 1508 մ, հասնում է թիվ 69 սահմանակետին, որտեղից թեքվում դեպի արևելք, ապա հարավ-արևելք, թիվ 70 սահմանակետով անցնում 769 մ, հասնում է թիվ 71 սահմանակետին: Թիվ 71 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, անցնում 543 մ, հասնում

Սալվարդ, Բռնակոթ և Հացավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 11973 մ է:

#### **ՍԱԼՎԱՐԴ - ՀԱՑԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Սալվարդ, Բռնակոթ և Հացավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 898 մ, ջրբաժանով հասնում թիվ 1 սահմանակետին, որը գտնվում է գետի ափին, ապա գետով, հոսանքի ուղղությամբ թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 2-3 սահմանակետերով անցնելով 495 մ, հասնում թիվ 4 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 326 մ, հասնում Սալվարդ, Թասիկ և Հացավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1719 մ է:

#### **ՍԱԼՎԱՐԴ - ԹԱՍԻԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Սալվարդ, Թասիկ և Հացավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 245 մ, հասնում է թիվ 1 սահմանակետին, ապա դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 2 սահմանակետով անցնում 873 մ, հասնում թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը շարունակվում է նույն ուղղությամբ, հատում Կապլիգյոլ լճակը, թիվ 4-5 սահմանակետերով անցնում 1525 մ, հասնում է թիվ 6 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 7-8 սահմանակետերով անցնում 402 մ, հասնում Սիսիան գետի ափին գտնվող Սալվարդ, Թանահատ և Թասիկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3047 մ է:

#### **ՍԱԼՎԱՐԴ - ԹԱՆԱՀԱՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

Սալվարդ, Թասիկ և Թանահատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի

հյուսիս-արևմուտք, ջրբաժանով, թիվ 1-5 սահմանակետերով անցնում է 991 մ, հասնում է թիվ 6 սահմանակետին, որտեղից սահմանագիծը փոխում էուղղությունը դեպի հարավ, թիվ 7 սահմանակետով անցնում 1020 մ, հասնում թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 531 մ, հասնում թիվ 9 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում է 414 մ, հասնում է թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք, հատելով ձորակներ, առուներ, թիվ 11-18 սահմանակետերով անցնում է 972 մ, հասնում թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա հարավ-արևմուտք և դաշտային ճանապարհով, թիվ 20-32 սահմանակետերով անցնում 2374մ, հասնում է թիվ 33 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 34 սահմանակետով անցնում է 340 մ, հասնում է թիվ 35 սահմանակետին: Թիվ 35 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 36-38 սահմանակետերով անցնում 2281 մ, հասնում է թիվ 39 սահմանակետին: Թիվ 39 սահմանակետից սահմանագիծը կտրուկ թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 631 մ, հասնում է թիվ 40 սահմանակետին: Թիվ 40 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհով, հատելով առուներ, ձորակներ, թիվ 41-75 սահմանակետերով անցնում է 2464 մ, հասնում թիվ 76 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 764 մ, հասնում Սալվարդ, Արևիս և Թանահատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 12782 մ է:

#### **ՍԱԼՎԱՐԴ - ԱՐԵՎԻՍ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»**

Սալվարդ, Արևիս գյուղական համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, հատում ջրբաժանը և ձորը անցնում 84 մ, հասնում Հացավան գետի ափին գտնվող թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, գետով, թիվ 2-5 սահմանակետերով անցնում է 516 մ, հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը կրկին թեքվում է հարավ-արևելք, թիվ 7-9 սահմանակետերով անցնում 771 մ, հասնում թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով, թիվ 11-25 սահմանակետերով անցնում է 1992 մ, հասնում գետի ափին գտնվող Սալվարդ,

Արևիս և Թանահատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3363 մ է:

**ՍԱԼՎԱՐԴ - ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ)**

**ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Զ»-«Ա»**

«Զ»-«Ա» հատվածով սահմանագիծը հանընկնում է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանի հետ:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԱՌՆԱԿՈՒՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Սառնակունք գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսային մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն), արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Սպանդարյան գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Շաղաթ գյուղական համայնքին, արևմուտքից «Դ»-«Ա» հատվածով՝ Ծղուկ գյուղական համայնքին:

### **ՍԱՌՆԱԿՈՒՆՔ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը հանդնկնում է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանի հետ:

### **ՍԱՌՆԱԿՈՒՆՔ – ՄՊԱՆԴԱՐՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Սառնակունք, Սպանդարյան գյուղական համայնքերի և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 1 սահմանակետով անցնում 602 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, որը գտնվում է բլրի գագաթին, այնուհետև նորից թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 715 մ, հասնում դիմացի բլրի գագաթին գտնվող թիվ 3 սահմանակետին, ապա լանջով թեքվում դեպի հարավ-արևմուտք, անցնում 871 մ, հասնում թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, ապա հարավ-արևմուտք, թիվ 5-7 սահմանակետերով անցնում 2031 մ, հասնում թիվ 8 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 454, հասնում թիվ 9 սահմանակետին, որտեղից հատելով դաշտային ճանապարհ, ձորակներ, առուներ, թիվ 10-14 սահմանակետերով անցնում է 3465 մ, հասնում թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից թեքվում է հարավ-արևմուտք, գետի հունով անցնում 3752մ, հասնում թիվ 16 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 17-19 սահմանակետերով անցնում 799 մ, հասնում է թիվ 20

սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 21 սահմանակետով անցնում 2038 մ, հասնում թիվ 22 սահմանակետին, որտեղից սահմանագիծը անցնում է նույն ուղղությամբ, հատում Սիսիան ջրանցքը, թիվ 23 սահմանակետով անցնում 1017 մ, հասնում թիվ 24 սահմանակետին: Թիվ 24 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ապա հարավ-արևմուտք, թիվ 25-26 սահմանակետերով անցնում 978 մ, հասնում թիվ 27 սահմանակետին: Թիվ 27 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևելք, անցնում 41 մ, հասնում թիվ 28 սահմանակետին: Թիվ 28 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 361 մ, հասնում գետի ափին գտնվող թիվ 29 սահմանակետին: Թիվ 29 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում Սպանդարյան-Սառնակունք ավտոճանապարհը, թիվ 30-36 սահմանակետերով անցնում 1993 մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 37 սահմանակետին, որտեղից թեքվում է արևմուտք, անցնում 391 մ, հասնում թիվ 38 սահմանակետին: Թիվ 38 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 197 մ, հասնում թիվ 39 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հարավ և հատելով Անգեղակոթ-Սպանդարյան միջհամայնքային ճանապարհը, թիվ 40-41 սահմանակետերով անցնելով 2360 մ, հասնում է Սառնակունք, Սպանդարյան և Շաղատ համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 22065 մ է:

#### **ՍԱՌՆԱԿՈՒՆՔ – ՇԱՂԱԹ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Սառնակունք, Սպանդարյան և Շաղաթ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 723 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս-արևելք, ապա հարավ-արևելք, թիվ 2 սահմանակետով, ջրբաժանով, ձորով անցնում 1123 մ, հասնում թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, անցնում 540 մ, հասնում Սառնակունք, Շաղաթ և Ծղուկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2386 մ է:

#### **ՍԱՌՆԱԿՈՒՆՔ – ԾՂՈՒԿ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ա»**

Սառնակույնք, Ծղուկ գյուղական համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Տուլյար գետի ափին, սահմանագիծը գետով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում Սիսիան ջրանցքը, ապա նույն գետով, թիվ 1 սահմանակետով անցնում է 5214 մ, հասնում է թիվ 2 սահմանակետին, այդտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, ընթացքում հատելով ջրբաժաններ և ձորակներ անցնելով 456 մ, հասնում է թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անցնում է 37 մ, հասնում թիվ 4 սահմանակետին, որը գտնվում է Մուխուրթարյան գետի ափին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, հասնում ճանապարհին և նույն ճանապարհի վրա գտնվող թիվ 5-9 սահմանակետերով անցնելով 289 մ, հասնում է թիվ 10 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թիվ 11-29 սահմանակետերով անցնելով 1772 մ, հասնում է թիվ 30 սահմանակետին, ապա կտրուկ թեքվում է հարավ-արևելք, թիվ 31-39 սահմանակետերով անցնում է 996 մ, հասնում թիվ 40 սահմանակետին: Թիվ 40 սահմանակետից սահմանագիծը կրկին թեքվում է հարավ-արևմուտք, ձորով, հատելով առուներ, թիվ 41-68 սահմանակետերով անցնում է 1347 մ, հասնում թիվ 69 սահմանակետին: Թիվ 69 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, ձորով, թիվ 70-97 սահմանակետերով անցնում 7345 մ, հասնում թիվ 98 սահմանակետին, այդտեղից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, հասնում ճանապարհին և ճանապարհով ու բնակավայրի կողքով, թիվ 98-105 սահմանակետերով անցնելով 2053 մ, հասնում է թիվ 106 սահմանակետին: Թիվ 106 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 107-113 սահմանակետերով անցնում է 1899 մ, հասնում թիվ 114 սահմանակետին, որտեղից կտրուկ թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 1357 մ, հասնում է Որոտան գետի ափին գտնվող թիվ 115 սահմանակետին: Թիվ 115 սահմանակետից սահմանագիծը Որոտան գետի ոլորաններով թիվ 115-135 սահմանակետերով անցնում է 3517 մ, հասնում վտակի հետ հատման տեղում գտնվող թիվ 136 սահմանակետին: Թիվ 136 սահմանակետից սահմանագիծը վտակով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, վտակով, հոսանքի հակառակ ուղղությամբ, թիվ 137-146 սահմանակետերով անցնում 3236 մ, հասնում Սառնակույնք, Ծղուկ և Շաղատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 29518 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍՅՈՒՆԻՔ ԳՅՈՒՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱՎԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Սյունիք գյուղական համայնքը գտնվում է մարզի կենտրոնական մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Վարդավանք գյուղական համայնքին, արևմուտքից «Բ»-«Գ» հատվածով՝ Խդրանց գյուղական համայնքին, արևմուտքից, հարավից և արևելքից «Գ»-«Դ» հատվածով՝ պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն), արևմուտքից «Դ»-«Ե» հատվածով՝ Կապան քաղաքին համայնքին, «Ե»-«Զ» հատվածով՝ Աճառան գյուղական համայնքին, «Զ»-«Ա» հատվածով՝ Արծվանիկ գյուղական համայնքին:

### **ՍՅՈՒՆԻՔ – ՎԱՐՉԱՎԱՆՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Սյունիք, Վարդավանք և Արծվանիկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը վտակով հոսանքի ուղղությամբ թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1-3 սահմանակետերով անցնում է 1255մ, հասնում թիվ 4 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 5 սահմանակետով, անցնում 774մ, հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ապա հարավ և թիվ 7-8 սահմանակետերով անցնում 403մ, հասնում է թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 935մ, հասնում է բլրի գագաթի թիվ 10 սահմանակետին, որտեղից սահմանագիծը անտառի եզրով, պարբերաբար թեքվելով հարավ-արևելք և հարավ հատում է ձորակներ և լանջով թիվ 11-16 սահմանակետերով անցնում 939մ, հասնում թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հյուսիս-արևմուտքից և հյուսիս-արևելք թիվ 18-19 սահմանակետերով անցնում է 949մ, հասնում անտառի եզրին գտնվող թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք անտառի եզրով, թիվ 21-22 սահմանակետերով անցնում է 1110մ, հասնում թիվ 23 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևելք անցնում 293մ հասնում Սյունիք, Վարդավանք և Խդրանց համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6657մ է:

### **ՍՅՈՒՆԻՔ - ԽՊՐԱՆՑ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Սյունիք, Խղրանց, Վարդավանք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում է 473մ հասնում թիվ 1 սահմանակետին, ապա հատում է դաշտային ճանապարհը, ժայռերի եզրով անցնում 393մ հասնում թիվ 2 սահմանակետին, որտեղից կրկին թեքվում է դեպի հարավ-արևելք անցնում 607մ, հասնում Սյունիք, Խղրանց գյուղական համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1474մ է:

### **ՍՅՈՒՆԻՔ - ՊԵՏԱԿԱՆ ՍԱՅՄԱՆ (ԱՊՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

«Գ»-«Դ» հատվածով սահմանագիծը համընկնում է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանի հետ:

### **ՍՅՈՒՆԻՔ - ԿԱՊԱՆ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

Սյունիք գյուղական, Կապան քաղաքային համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հատում դաշտային ճանապարհներ և լանջերով թիվ 1-8 սահմանակետերով անցնելով 2388մ հասնում է միջհամայնքային ճանապարհի եզրին տեղադրված թիվ 9 սահմանակետին, որտեղից թեքվում է արևմուտք, թիվ 10-14 սահմանակետերով անցնում 1342մ, հասնում թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, բնակավայրի հարավ-արևելյան եզրագծով թիվ 16-18 սահմանակետերով անցնում 332մ հասնում Օխչի գետի ափին գտնվող Սյունիք, Աճանան գյուղական և Կապան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4063մ է:

### **ՍՅՈՒՆԻՔ – ԱՃԱՆԱՆ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»**

Սյունիք, Աճանան և Արծվանիկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, անցնում 371մ, հատում Կապան-Երևան խճուղին և անցնելով 371մ՝ հասնում է թիվ 1 սահմանակետին, որը գտնվում է գետի ափին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը գետով թեքվում է դեպի հարավ, թիվ 2-3 սահմանակետերով անցնում 335մ, հասնում թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 594մ, հասնում Սյունիք, Աճանան գյուղական և Կապան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1300մ է:

### **ՍՅՈՒՆԻՔ – ԱՐԾՎԱՆԻԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Զ»-«Ա»**

Սյունիք, Վարդավանք և Արծվանիկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը լանջով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 173մ, հասնում է թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում ջրբաժաններ, լանջով, թիվ 2-5 սահմանակետերով անցնելով 2197 մ, հասնում է թիվ 6 սահմանակետին, որտեղից կրկին թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում Կապան-Գորիս մայրուղին, թիվ 7-8 սահմանակետերով անցնում 774 մ, հասնում թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, բլուրներով և թիվ 10 սահմանակետով անցնում 400 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 11 սահմանակետին, որտեղից ձորով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 12-19 սահմանակետերով անցնում 1045 մ, հասնում Ողջի գետի վտակի ափին գտնվող թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում դաշտային ճանապարհը, լանջով անցնում 133 մ, հասնում է թիվ 21 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևմուտք, դաշտային ճանապարհին զուգահեռ, բլրի ստորոտով, թիվ 22 սահմանակետով անցնում 509 մ, հասնում Սյունիք Խալաջ և Արծվանիկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5232 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄՊԱՆԴԱՐՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Սպանդարյան գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսային մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն), արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Անգեղակոթ գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Շաղաթ գյուղական համայնքին, արևմուտքից «Դ»-«Ա» հատվածով՝ Սառնակունք գյուղական համայնքին:

### **ՄՊԱՆԴԱՐՅԱՆ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը համընկնում է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանի հետ:

### **ՄՊԱՆԴԱՐՅԱՆ – ԱՆԳԵՂԱԿՈԹ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Սպանդարյան, Անգեղակոթ գյուղական համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 365 մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 1 սահմանակետին, հետո թեքվում հարավ-արևելք, անցնում 732 մ, հասնում թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 3-4 սահմանակետերով հատելով ձորակներ, առուներ, անցնում է 2739 մ, հասնում Ժայռի գագաթին գտնվող թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, լեռան լանջով, ապա սարահարթով անցնում 1026 մ, հասնում գետի ափին գտնվող թիվ 6 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հարավ, թիվ 7-9 սահմանակետերով անցնում 2388 մ, հասնում թիվ 10 սահմանակետին, այնուհետև թեքվում հարավ-արևմուտք, անցնում 405 մ, հասնում թիվ 11 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, դաշտային ճանապարհով, թիվ 12-39 սահմանակետերով անցնում 1824 մ, հասնում թիվ 40 սահմանակետին: Թիվ 40 սահմանակետից սահմանագիծը կտրուկ թեքվում է հարավ-արևմուտք, թիվ

41-46 սահմանակետերով անցնում 654 մ, հասնում է թիվ 47 սահմանակետին, ապա դարձյալ թեքվում է հարավ-արևմուտք, հատում առուներ և դաշտային ճանապարհով, թիվ 48-81 սահմանակետերով անցնում 3601մ, հասնում թիվ 82 սահմանակետին: Թիվ 82 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 83-85 սահմանակետերով անցնում 309 մ, հասնում է թիվ 86 սահմանակետին, այդտեղից սահմանագիծը թեքվում է հարավ, թիվ 86-88 սահմանակետերով անցնում է 706 մ, հասնում թիվ 89 սահմանակետին, ապա թեքվում հարավ-արևելք, անցնում 266 մ, հասնում թիվ 90 սահմանակետին: Թիվ 90 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 91-92 սահմանակետերով անցնում 1034 մ, հասնում թիվ 93 սահմանակետին: Թիվ 93 սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 3936 մ, հասնում է թիվ 94 սահմանակետին: Թիվ 94 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 338 մ, հասնում է թիվ 95 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք, անցնելով 118 մ, հասնում է թիվ 96 սահմանակետին: Թիվ 96 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, հատում դաշտային ճանապարհը, առուները, անցնում է 421 մ, հասնում թիվ 97 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում է 158 մ, հասնում թիվ 98 սահմանակետին, որից հետո սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում է 208 մ, հասնում է թիվ 99 սահմանակետին, որը գտնվում է առվի ափին, ապա առվով թեքվում է հարավ-արևմուտք, հատում Անգեղակոթ-Սպանդարյան միջհամայնքային ճանապարհը, անցնում 1527 մ, հասնում Սպանդարյան, Սառնակունք և Շաղաթ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 22755 մ է:

### **ՍՊԱՆԴԱՐՅԱՆ – ՇԱՂԱԹ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Սպանդարյան, Շաղաթ և Անգեղակոթ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 723 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է արևելք, անցնում 950 մ, հասնում թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք և հատելով ջրբաժանը, ձորով թիվ 3 սահմանակետով անցնում է 1040 մ, հասնում Որոտան գետի ափին գտնվող Սպանդարյան, Շաղաթ և Սառնակունք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2713 մ է:

## ՄՊԱՆԴԱՐՅԱՆ – ՍԱՌՆԱԿՈՒՆՔ ՍԱՐՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ա»

Սպանդարյան, Սառնակունք գյուղական համայնքերի և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 1 սահմանակետով անցնում 602 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, որը գտնվում է բլրի գագաթին, այնուհետև նորից թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 715 մ, հասնում դիմացի բլրի գագաթին գտնվող թիվ 3 սահմանակետին, ապա թեք լանջով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 871 մ, հասնում թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, ապա հարավ-արևմուտք և թիվ 5-7 սահմանակետերով անցնում 2031 մ, հասնում թիվ 8 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, հատելով դաշտային ճանապարհը, ձորակներ, առուներ, թիվ 9-14 սահմանակետերով անցնում է 3919 մ, հասնում թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից թեքվում է հարավ-արևմուտք, գետի հունով անցնում է 3752 մ, հասնում թիվ 16 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնելով թիվ 17-19 սահմանակետերով, անցնում է 799 մ, հասնում է թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 21 սահմանակետով անցնում 2038մ, հասնում թիվ 22 սահմանակետին, որտեղից սահմանագիծը ձգվում է նույն ուղղությամբ, հատում է Սիսիան ջրանցքը, անցնում 612 մ, հասնում թիվ 23 սահմանակետին: Թիվ 23 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ապա հարավ-արևմուտք և թիվ 24-26 սահմանակետերով անցնում 1382 մ, հասնում թիվ 27 սահմանակետին: Թիվ 27 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևելք, անցնում 41 մ, հասնում թիվ 28 սահմանակետին: Թիվ 28 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 361 մ, հասնում է թիվ 29 սահմանակետին, որը գտնվում է գետի ափին: Թիվ 29 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում Սպանդարյան-Սառնակունք ավտոճանապարհը և թիվ 30-36 սահմանակետերով անցնում 1994 մ, հասնում է թիվ 37 սահմանակետին, որը գտնվում է առվի եզրին, որտեղից թեքվում է արևմուտք, անցնում 391 մ, հասնում թիվ 38 սահմանակետին: Թիվ 38 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 197 մ, հասնում թիվ 39 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հարավ և հատելով Անգեղակոթ-Սպանդարյան միջհամայնքային ճանապարհը, թիվ 40-41 սահմանակետերով անցնելով 2360 մ, հասնում է Սպանդարյան, Սառնակունք և

Շաղատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 22065 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍՐԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Սրաշեն գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավարևելյան մասում:

Համայնքը «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Շիկահող գյուղական համայնքին, «Բ»-«Գ» հատվածով՝ պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն), «Գ»-«Դ» հատվածով՝ Հանդ գյուղական համայնքին, «Դ»-«Ա» հատվածով՝ Ծավ գյուղական համայնքին:

### **ՍՐԱՇԵՆ – ՇԻԿԱՀՈՂ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Սրաշեն, Շիկահող և Ծավ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևելք, անտառի եզրով անցնելով 181 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, այնուհետև թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնելով 526 մ, հասնում է թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը նորից թեքվում է հարավ-արևելք, անտառի եզրագծով, թիվ 3-5 սահմանակետերով, անցնելով 602 մ, հասնում է թիվ 6 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում լեռնալանջեր, ձորեր ու ձորակներ, հատում լեռնագագաթներից հոսող ջրերը, հետո լեռնալանջերով թեքվում հյուսիս-արևելք և դաշտային ճանապարհով անցնում 6033 մ, հասնում է թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս, հետո հյուսիս-արևելք, թիվ 8-11 սահմանակետերով անցնում 1134 մ, հասնում է թիվ 12 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 1450 մ, հասնում թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը կտրուկ թեքվում է հյուսիս, անցնելով անտառի եզրով 488 մ, հասնում թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թիվ 15 սահմանակետով, ջրբաժանով անցնելով 854 մ, հասնում է թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 210 մ, հասնում է թիվ 17 սահմանակետին, ապա թեքվում է արևելք, թիվ 18-20 սահմանակետերով անցնում 712 մ, հասնում է թիվ 21 սահմանակետին, որը գտնվում է Շիկահող գետի եզրին: Թիվ 21 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք և թիվ 22-25 սահմանակետերով անցնելով 710 մ, հասնում է թիվ 26 սահմանակետին: Թիվ 26 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք,

թիվ 27 սահմանակետով անցնելով 275 մ, հասնում է թիվ 28 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք և թիվ 29-31 սահմանակետերով անցնելով 434 մ, հասնում է թիվ 32 սահմանակետին: Թիվ 32 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 33-39 սահմանակետերով անցնելով 1079 մ, հասնում է թիվ 40 սահմանակետին: Թիվ 40 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անցնում 153 մ, հասնում է թիվ 41 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք, անցնում 609 մ, հասնում է Սրաշեն, Շիկահող գյուղական համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 14992 մ է:

### **ՍՐԱՇԵՆ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ)**

#### **ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

«Բ»-«Գ» հատվածով սահմանագիծն համընկնում է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանի հետ:

### **ՍՐԱՇԵՆ – ՆԵՐՔԻՆ ՀԱՆԴ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Սրաշեն, Ներքին Հանդ գյուղական համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Դ» հանգուցային «Թունիս-արտ» կոչվող եռանկյունաչափական սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևելք, ջրբաժանով անցնում 223 մ, հասնում է թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևելք, հատում միջհամայնքային և դաշտային ճանապարհը, անցնում է 624 մ, հասնում թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, ապա հատում է ձորեր և գետեր, անցնում 950 մ, հասնում է թիվ 3 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 267 մ, հասնում է Սրաշեն, Ներքին Հանդ և Ծավ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետը:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2065 մ է:

### **ՍՐԱՇԵՆ – ԾԱՎ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ա»**

Մրաշեն, Շիկահող և Ծավ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անցնում 224 մ, հասնում թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 435 մ, հասնում թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, ջրբաժանով, թիվ 3-6 սահմանակետերով անցնում է 288 մ, հասնում թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 8-9 սահմանակետերով անցնելով 191 մ, հասնում թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 368 մ, հասնում թիվ 11 սահմանակետին, ապա թեքվում է հարավ անցնում 325 մ, հասնում թիվ 12 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք, թիվ 13 սահմանակետով անցնում է 771 մ, հասնում է թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անցնում 399 մ, հասնում է թիվ 15 սահմանակետին, հետո թեքվում է արևելք, թիվ 16-17 սահմանակետերով անցնում 592 մ, հասնում թիվ 18 սահմանակետին, այնուհետև անտառեզրով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 19-22 սահմանակետերով անցնելով 667 մ, հասնում է թիվ 23 սահմանակետին: Թիվ 23 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 180 մ, հասնում է թիվ 24 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 297 մ, հասնում է թիվ 25 սահմանակետին: Թիվ 25 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անցնում 145 մ, հասնում է թիվ 26 սահմանակետին, ապա անտառեզրով թեքվում է դեպի արևելք, անցնում 313 մ, հասնում թիվ 27 սահմանակետին: Թիվ 27 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ապա դեպի հարավ, թիվ 28-29 սահմանակետերով անցնում 449 մ, հասնում թիվ 30 սահմանակետին: Թիվ 30 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հատում դաշտային ճանապարհը, թիվ 31 սահմանակետով անցնում 728 մ, հասնում թիվ 32 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ, անցնում 583 մ, հասնում թիվ 33 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 420 մ և անտառապատ լանջով հասնում թիվ 34 սահմանակետին: Թիվ 34 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 279 մ, հասնում է թիվ 35 սահմանակետին, որից հետո թեքվում է արևելք, անցնում 411 մ, հասնում թիվ 36 սահմանակետին: Թիվ 36 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, ապա հյուսիս, անտառեզրով, թիվ 37 սահմանակետով անցնում 576 մ, հասնում թիվ 38 սահմանակետին, հետո թեքվում է դեպի արևելք, անցնում 269 մ, հասնում թիվ 39 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 224 մ, հասնում թիվ 40 սահմանակետին: Թիվ 40 սահմանակետից

սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 41-43 սահմանակետերով անցնում 806 մ, հասնում թիվ 44 սահմանակետին, այստեղից անտառեզրով պարբերաբար թեքվելով հարավ-արևելք, ապա հյուսիս-արևելք, թիվ 45-47 սահմանակետերով անցնում 1098 մ, հասնում թիվ 48 սահմանակետին: Թիվ 48 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 353 մ, հասնում թիվ 49 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 306 մ, հասնում է թիվ 50 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք, անցնում 120 մ, հասնում թիվ 51 սահմանակետին: Թիվ 51 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անտառի բացատի եզրագծով անցնում 518 մ, հասնում է թիվ 52 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք, անցնում 334 մ, հասնում է թիվ 53 սահմանակետին: Թիվ 53 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 528 մ, հասնում թիվ 54 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, անտառի եզրագծով հատելով դաշտային ճանապարհը, թիվ 55-56 սահմանակետերով անցնում 1266 մ, հասնում բացատի եզրին գտնվող թիվ 57 սահմանակետին: Թիվ 57 սահմանակետից սահմանագիծը անտառի եզրով թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 58-59 սահմանակետերով անցնում 974 մ, հասնում թիվ 60 սահմանակետին: Թիվ 60 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 61-63 սահմանակետերով անցնելով 1529 մ, հասնում Սրաշեն, Ծավ և Ներքին Հանդ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 16962 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՔԱՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Սևաքար գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսային մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Շուռնուխ գյուղական համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Դավիթ Բեկ գյուղական համայնքին, «Գ»-«Դ» հատվածով՝ Չափնի գյուղական համայնքին, «Դ»-«Ե» հատվածով՝ Արծվանիկ գյուղական համայնքին, հարավից «Ե»-«Զ» հատվածով՝ Աճանան գյուղական համայնքին, արևմուտքից «Զ»-«Ա» հատվածով՝ Եղեգ գյուղական համայնքին:

### **ՍԵՎԱՔԱՐ – ՇՈՒՐՆՈՒՒՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Սևաքար, Շուռնուխ և Եղեգ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անտառով, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 1619 մ, հասնում Սևաքար, Շուռնուխ և Դավիթ Բեկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1619 մ է:

### **ՍԵՎԱՔԱՐ – ԴԱՎԻԹ ԲԵԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Սևաքար, Շուռնուխ և Դավիթ Բեկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 1821 մ, հասնում թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը լանջով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 2-3 սահմանակետերով անցնում 380 մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 4 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, ձորով, թիվ 5 սահմանակետով անցնում 155 մ, հասնում է թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 88 մ, հասնում է թիվ 7 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, ձորով անցնում 74 մ, հասնում է թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-

արևելք, անցնում 144 մ, հասնում թիվ 9 սահմանակետին, որտեղից ձորով թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 40 մ, հասնում թիվ 10 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, թիվ 11 սահմանակետով անցնում 121 մ, հասնում է Շաբադին գետի ափին գտնվող, Սևաքար, Չափնի և Դավիթ Բեկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2823 մ է:

#### **ՍԵՎԱՔԱՐ – ՉԱՓՆԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Սևաքար, Չափնի և Դավիթ-Բեկ համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Շաբադին գետի ափին, սահմանագիծը գետով՝ հոսանքի ուղղությամբ, թեքվում է դեպի հարավ, թիվ 1-52 սահմանակետերով անցնում 6784 մ, հասնում է Սևաքար, Չափնի և Արծվանիկ համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետը:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6784 մ է:

#### **ՍԵՎԱՔԱՐ - ԱՐԾՎԱՆԻԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

Սևաքար, Արծվանիկ և Չափնի համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Շաբադին գետի և նրա ձախակողմյան վտակի հատման կետում, սահմանագիծը գետով՝ հոսանքի ուղղությամբ, թեքվում է հարավ, թիվ 1-10 սահմանակետերով անցնում 1529 մ, հասնում է թիվ 11 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, լանջով անցնում 343 մ, հասնում Սևաքար, Աճանան և Արծվանիկ համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1872 մ է:

#### **ՍԵՎԱՔԱՐ – ԱՃԱՆԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»**

Սևաքար, Աճանան և Եղեգ համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 64 մ, հասնում է թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, գոգավոր և ուռուցիկ ռելիեֆով, թիվ 2 սահմանակետով անցնում է 662 մ, հասնում թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, հատում ձորը և անցնելով 185 մ՝ հասնում է թիվ 4 սահմանակետին, ապա թեքվում է

արևելք, անցնում 273 մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, կտրտված լանջով, թիվ 6 սահմանակետով անցնում է 417 մ, հասնում թիվ 7 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք և գետով՝ հոսանքի ուղղությամբ, թիվ 8-11 սահմանակետերով անցնում է 790 մ, հասնում Սևաքար-Խալաջ միջհամայնքային ճանապարհի եզրին գտնվող թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 189 մ, հասնում է թիվ 13 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևելք, հատում դաշտային ճանապարհը, անցնում է 244 մ, հասնում թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 274 մ, հասնում թիվ 15 սահմանակետին, որտեղից թեքվում է արևելք, հատում դաշտային ճանապարհը, անցնում է 190 մ, հասնում թիվ 16 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, անցնում 165մ, հասնում թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 18 սահմանակետով անցնում է 310 մ, հասնում թիվ 19 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, անցնում 333 մ, հասնում թիվ 20 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս-արևելք, լանջով անցնում 190 մ, հասնում Սևաքար, Աճանան, Արծվանիկ համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4287 մ է:

#### **ՍԵՎԱՔԱՐ - ԵՂԵԳ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Զ»-«Ա»**

Սևաքար, Եղեգ և Շուռնուխ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը գետակով թեքվում է հարավ, անցնում 2611 մ, հասնում է թիվ 1 սահմանակետին, որտեղից սահմանագիծը կրկին թեքվում է հարավ, անցնում 120 մ, հասնում թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է հարավ-արևելք, անցնում 341 մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 3 սահմանակետին, ապա թեքվում է հարավ, բացատով անցնում 344 մ, հասնում ջրբաժանի վրա գտնվող թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, հատում ձորը և թիվ 5 սահմանակետով անցնելով 669 մ՝ հասնում է բացատի եզրին գտնվող թիվ 6 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 7-11 սահմանակետերով անցնում 1521 մ, հասնում է թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 13-14 սահմանակետերով անցնելով 454 մ՝ հասնում է բացատի եզրին գտնվող թիվ 15

սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 297 մ, հասնում է թիվ 16 սահմանակետին, որը գտնվում է ջրբաժանի վրա: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, հատում Եղեգ-Սևաքար միջհամայնքային ճանապարհը, լանջով անցնելով 343 մ` հասնում է թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ջրբաժանով, թիվ 18-21 սահմանակետերով անցնում է 1194 մ, հասնում լեռան գագաթին գտնվող թիվ 22 սահմանակետին: Թիվ 22 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում ջրբաժանով, հատվում ձորերի և ձորակների հետ, թիվ 21-24 սահմանակետերով անցնելով 1190 մ` հասնում թիվ 27 սահմանակետին: Թիվ 27 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, լանջով անցնելով 163 մ, հասնում թիվ 28 սահմանակետին, ապա թեքվում է հարավ, հատում ձորը և թիվ 29-32 սահմանակետերով անցնելով 1282 մ, հասնում է Սևաքար, Եղեգ և Աճանան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 10532մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՐԱՎԱՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Վահրավար գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավային մասում:

Համայնքը հյուսիսից, արևելքից և հարավից «Ա»-«Բ» հատվածով՝ սահմանակից է Լեիվազ գյուղական համայնքին, հարավից «Բ»-«Գ» հատվածով՝ Գուղեննիս գյուղական համայնքին, արևմուտքից «Գ»-«Ա» հատվածով՝ պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն):

### **ՎԱՅՐԱՎԱՐ – ԼԵՅՎԱԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Վահրավար, Լեիվազ գյուղական համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը շրբաժանով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ապա հարավ-արևելք, թիվ 1-12 սահմանակետերով անցնում 1312 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի արևելք, թիվ 14-39 սահմանակետերով անցնում 1299 մ, հասնում թիվ 40 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս, անցնում 123 մ, հասնում թիվ 41 սահմանակետին: Թիվ 41 սահմանակետից սահմանագիծը գետով թեքվում է դեպի արևելք, թիվ 42-59 սահմանակետերով անցնում 4299 մ, հասնում թիվ 60 սահմանակետին: Թիվ 60 սահմանակետից սահմանագիծը գետով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 61 սահմանակետով անցնում 777 մ, հասնում թիվ 62 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 292 մ, հասնում ժայռի կատարին գտնվող թիվ 63 սահմանակետին: Թիվ 63 սահմանակետից սահմանագիծը լանջերով թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով ձորեր և ձորակներ, թիվ 64-66 սահմանակետերով անցնում 1932 մ, հասնում թիվ 67 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս, անցնում 94 մ, հասնում թիվ 68 սահմանակետին: Թիվ 68 սահմանակետից, որը գտնվում է ջրհավաքի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 69-70 սահմանակետերով անցնում 1818 մ, հասնում ջրհավաքի եզրին գտնվող թիվ 71 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, անցնում 1162 մ, հասնում հաջորդ ջրհավաքի եզրին գտնվող թիվ 72 սահմանակետին: Թիվ 72 սահմանակետից սահմանագիծը նույն ջրհավաքով թեքվում է դեպի արևմուտք, թիվ 73-78 սահմանակետերով անցնում

1009 մ, հասնում թիվ 79 սահմանակետին: Թիվ 79 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 117 մ, հասնում ջրհավաքի թիվ 80 սահմանակետին, այնուհետև ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 81-83 սահմանակետերով անցնում 1522 մ, հասնում է թիվ 84 սահմանակետին: Թիվ 84 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, անցնում 160 մ, հասնում թիվ 85 սահմանակետին, այնուհետև թեքվում դեպի հարավ-արևմուտք, անցնում 69 մ, հասնում թիվ 86 սահմանակետին, որտեղից թեքվում դեպի հարավ-արևելք, անցնում 97 մ, հասնում թիվ 87 սահմանակետին: Թիվ 87 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, ապա հարավ, թիվ 88 սահմանակետով անցնում 546 մ, հասնում թիվ 89 սահմանակետին: Թիվ 89 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 90 սահմանակետերով անցնում 683 մ, հասնում թիվ 91 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 458մ, հասնում բլրի գագաթին գտնվող Վահրավար, Լեհվազ և Գուղեմնիս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 17768 մ է:

#### **ՎԱՐՎԱՐ – ԳՈՒԴԵՄՆԻՍ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Վահրավար, Գուղեմնիս գյուղական համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը Վահրավար գետով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ապա հարավ-արևելք, թիվ 1-10 սահմանակետերով անցնում 6157 մ, հասնում թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ, թիվ 12 սահմանակետով անցնում 278 մ, հասնում Կարճևան ջրանցքի եզրին գտնվող թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը Կարճևանի ջրանցքից թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 591 մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 15-16 սահմանակետերով անցնում 763 մ, հասնում դամբարանադաշտի եզրին գտնվող թիվ 17 սահմանակետին, այնուհետև թեքվում դեպի հարավ-արևելք, թիվ 18-19 սահմանակետերով անցնելով 654 մ, հասնում թիվ 20 սահմանակետին, որից հետո թեքվում դեպի արևելք, թիվ 21 սահմանակետով անցնում 267 մ, հասնում Վահրավար, Գուղեմնիս և Լեհվազ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 8710 մ է:

**ՎԱՅՐԱՎԱՐ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՅՄԱՆ (ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ)  
ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Ա»**

«Գ»-«Ա» հատվածով սահմանագիծը հանընկնում է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանի հետ:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՏՈՒՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Շինուհայր գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսային մասում:

Համայնքը հյուսիս «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Խնածախ գյուղական համայնքին, արևելքից և հարավ-արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Վերիշեն գյուղական համայնքին և հարավ-արևմուտքից՝ «Գ»-«Ա» հատվածով՝ Խոզնավար գյուղական համայնքին:

### **ՎԱՂԱՏՈՒՐ-ԽՆԱԾԱԽ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Վաղատուր, Խնածախ և Խոզնավար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արելք, թիվ 1-2 սահմանակետերով, անցնում 715մ, հասնում թիվ 3 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, հատում առունները և թիվ 4 սահմանակետով անցնելով 601մ, հասնում է պտղատու այգու եզրի և առվի հատման թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը պտղատու այգու եզրով և առվով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 433մ, հասնում թիվ 6 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևելք, պտղատու այգու արևելյան եզրով, առվով, թիվ 7-10 սահմանակետերով անցնելով 365մ, հասնում է թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 254մ, հատելով ձորը և առուն, հասնում ճանապարհի եզրին գտնվող թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ժայռերի արևմտյան եզրով, բլրագագաթով և թիվ 13-31 սահմանակետերով, անցնելով 3427մ, հասնում է ճանապարհների խաչմերուկի թիվ 32 սահմանակետին: Թիվ 32 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 296մ, հասնում թիվ 33 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 249մ, լանջով հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 34 սահմանակետին: Թիվ 34 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 231մ, հասնում թիվ 35 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 432մ, հասնում թիվ 36 սահմանակետին: Թիվ 36 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 37 սահմանակետով անցնում 1753մ, հասնում թիվ 38

սահմանակետին: Թիվ 38 սահմանակետից սահմանագիծը կտրուկ թեքվում է հյուսիս-արևելք, հատում Վաղատուր գնացող միջհամայնքային ճանապարհը և անցնելով 573մ, հասնում թիվ 39 սահմանակետին: Թիվ 39 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 40-42 սահմանակետերով անցնում է 1258մ, հասնում Վաղատուր, Խնածախ և Վերիշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 10584մ է:

#### **ՎԱՂԱՏՈՒՐ-ՎԵՐԻՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Բ»-«Գ»**

Վաղատուր, Խնածախ և Վերիշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 2170մ, հասնում թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը լեռնալանջով ու ջրբաժանով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, հատում դաշտային ճանապարհը, ապա թեքվում է դեպի արևելք, թիվ 2-6 սահմանակետերով անցնում 3745մ, հասնում Վաղատուր, Վերիշեն և Խոզնավար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5915 մ է:

#### **ՎԱՂԱՏՈՒՐ-ԽՈԶՆԱՎԱՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Գ»-«Ա»**

Վաղատուր, Խոզնավար և Խնածախ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 169մ, հասնում թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը թեքվում է թիվ 2,3 սահմանակետերով, անցնում 1033մ, հասնում է «Դադմեղիք» կոչվող թիվ 4 եռանկյունաչափական սահմանակետը: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, հատում ձորեր ու ժայռեր, անցնում 447մ, հասնում թիվ 5 սահմանակետին, որտեղից կրկին թեքվում է դեպի հյուսիս-արևելք, հատելով ձորեր և ժայռեր թիվ 6 սահմանակետով անցնում 1434մ, հասնում թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 8,9 սահմանակետերով անցնում 912մ, հասնում թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, հատելով ձորը թիվ 11-13 սահմանակետերով անցնում 912մ, և հատելով դաշտային ճանապարհը, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 14

սահմանակետը: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է արևմուտք, թիվ 15, 16 սահմանակետերով անցնում 960մ, հասնում բլրի վրա գտնվող թիվ 17 սահմանակետը, ապա թեքվում է նույն ուղղությամբ, անցնում 827մ, հասնում թիվ 198 սահմանակետին: Թիվ 18 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում ձորով, լեռնալանջով, հասնում թիվ 19-21 սահմանակետերով, անցնում 2135մ, հասնում թիվ 22 սահմանակետին: Թիվ 22 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, հատում ձորը, անցնում լեռնալանջով 678մ, հասնում թիվ 23 սահմանակետին: Թիվ 23 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, լեռնալանջով, բլրագագաթով հասնում թիվ 24 սահմանակետը: Այնուհետև թեքվում է նորից հարավ-արևմուտք, հատելով առուններ, դաշտային ճանապարհներ, անցնելով 1425մ, հասնում Վաղատուր, Խոզնավար և Վերիշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 10932 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԵՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Վանեք գյուղական համայնքը գտնվում է մարզի կենտրոնական մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Անտառաշատ գյուղական համայնքին, «Բ»-«Գ» հատվածով՝ Օխտար գյուղական համայնքին, արևմուտքից և հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Ձորաստան գյուղական համայնքին, արևմուտքից «Դ»-«Ա» հատվածով՝ Լեռնաձոր գյուղական համայնքին:

### **ՎԱՆԵՔ - ԱՆՏԱՌԱՇԱՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Վանեք, Անտառաշատ և Լեռնաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնելով 275 մ, հասնում է թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է արևելք, թիվ 2 սահմանակետով անցնելով 180 մ, հասնում թիվ 3 սահմանակետերին, որտեղից թեքվելով հյուսիս, անցնում 250 մ, հասնում թիվ 4 սահմանակետին, այնուհետև թեքվելով արևելք, թիվ 5-8 սահմանակետերով անցնելով 1124 մ, հասնում է թիվ 9 սահմանակետին, որից հետո թեքվելով հարավ-արևելք, թիվ 10-14 սահմանակետերով անցնելով 1129 մ, հասնում է թիվ 15 սահմանակետին, ապա թեքվելով հյուսիս-արևելք, թիվ 16-17 սահմանակետերով անցնելով 363 մ, հասնում է Վանեք, Անտառաշատ և Օխտար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3224 մ է:

### **ՎԱՆԵՔ – ՕԽՏԱՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Վանեք, Օխտար և Անտառաշատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 1-2 սահմանակետերով անցնում է 678 մ, հասնում թիվ 3 սահմանակետին, այնուհետև թեքվելով հյուսիս-արևելք, անցնելով 595 մ, հասնում է թիվ 4 սահմանակետին, որտեղից թեքվելով հարավ-արևելք, թիվ 5-13 սահմանակետերով անցնելով 1469 մ, հասնում թիվ 14 սահմանակետին, որից հետո կտրուկ թեքվում է հյուսիս, թիվ 15-16 սահմանակետերով անցնելով 148 մ, հասնում է

թիվ 17 սահմանակետին, ապա թեքվելով հարավ-արևելք, թիվ 18 սահմանակետով անցնում է 171 մ, հասնում թիվ 19 սահմանակետին, որտեղից թեքվելով հյուսիս-արևելք, անցնում է 315 մ, հասնում թիվ 20 սահմանակետին, այնուհետև թեքվելով հարավ, թիվ 21-24 սահմանակետերով անցնում է 507 մ, հասնում թիվ 25 սահմանակետին, որից հետո թեքվելով արևելք, թիվ 26-27 սահմանակետերով անցնում է 517 մ, հասնում թիվ 28 սահմանակետին, ապա թեքվելով հարավ-արևելք, թիվ 29-36 սահմանակետերով անցնում է 2036 մ, հասնում թիվ 37 սահմանակետին, որտեղից թեքվելով հարավ-արևմուտք, թիվ 36-40 սահմանակետերով անցնում է 683 մ, հասնում Վանեք, Օխտար և Չորաստան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7123 մ է:

#### **ՎԱՆԵՔ – ՉՈՐԱՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Վանեք, Լեռնաձոր և Չորաստան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 1-2 սահմանակետերով անցնում 807 մ, հասնում է թիվ 3 սահմանակետին, որտեղից թեքվելով հարավ-արևելք, թիվ 4-7 սահմանակետերով անցնում է 1716 մ, հասնում թիվ 8 սահմանակետին, այնուհետև թեքվելով արևելք, թիվ 9-18 սահմանակետերով անցնելով 1758 մ, հասնում է թիվ 19 սահմանակետին, ապա թեքվելով հյուսիս-արևելք, թիվ 20-22 սահմանակետերով անցնում 1464 մ, հասնում է թիվ 23 սահմանակետին, որտեղից թեքվելով արևելք, թիվ 24-27 սահմանակետերով անցնում է 1716 մ, հասնում թիվ 28 սահմանակետին, այնուհետև թեքվելով հարավ, թիվ 29 սահմանակետով անցնում է 613 մ, հասնում է թիվ 30 սահմանակետին, ապա կտրուկ թեքվում է արևելք, անցնում է 109 մ, հասնում է թիվ 31 սահմանակետին, որտեղից թեքվելով հարավ-արևմուտք, թիվ 32-36 սահմանակետերով անցնում է 624 մ, հասնում է թիվ 37 սահմանակետին, այնուհետև թեքվելով հյուսիս-արևելք, թիվ 38-42 սահմանակետերով անցնում է 1511 մ, հասնում Վանեք, Օխտար և Չորաստան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 10318 մ է:

#### **ՎԱՆԵՔ – ԼԵՌՆԱՉՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ա»**

Վանեք, Լեռնաձոր և Անտառաչատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, ձորով անցնում է 598 մ, հասնում է թիվ 1 սահմանակետին, որտեղ սահմանագիծը միանալով դաշտային ճանապարհին, թեքվում է հարավ-արևելք, թիվ 2 սահմանակետով անցնում է 163 մ, հասնում է թիվ 3 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք և թիվ 4-5 սահմանակետերով անցնում 235 մ, հասնում է թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևելք, ապա հարավ, դաշտային ճանապարհով, թիվ 7-8 սահմանակետերով անցնում է 443 մ, հասնում է անտառի եզրին գտնվող թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը անտառի եզրով, թիվ 10-13 սահմանակետերով անցնում է 472 մ, հասնում է թիվ 14 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 15-17 սահմանակետերով անցնում է 453 մ, հասնում Վանեք, Լեռնաձոր և Չորաստան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2365 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՆԻՉՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Վարդանիժոր գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավային մասում:

Համայնքը հյուսիսից և արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Ծավ գյուղական համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Ալվանք գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Մեղրի քաղաքային համայնքին, արևմուտքից «Դ»-«Ե» հատվածով՝ Լեիվազ գյուղական համայնքին, «Ե»-«Ա» հատվածով՝ Լիճք գյուղական համայնքին:

### **ՎԱՐԴԱՆԻՉՈՐ – ԾԱՎ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Վարդանիժոր, Ծավ և Լիճք գյուղական համայնքների տարածքների բաժանման 2874.3 մ բարձրություն ունեցող լեռան գագաթին գտնվող «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 834 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 762 մ, հատելով դաշտային ճանապարհը, հասնում 2818.0 մ բարձրություն ունեցող եռանկյունաչափական կետին, որը հանդիսանում է թիվ 2 սահմանակետը: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը բարձունքներով թեքվում է կրկին հարավ-արևելք, թիվ 3-5 սահմանակետերով անցնում 2850 մ, հասնում 3249.0 մ բարձրություն ունեցող թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը բարձունքներով թեքվում է դեպի հարավ, թիվ 7-8 սահմանակետերով անցնում 1422 մ, հասնում «Բայբուզան» լեռան գագաթին գտնվող թիվ 9 սահմանակետին, որտեղից բարձունքներով, ջրբաժանով թեքվում է հարավ-արևելք, թիվ 10-13 սահմանակետերով անցնում 1715 մ, հասնում 2931.3 մ բարձրություն ունեցող թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը կրկին բարձունքներով և ջրբաժանով թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 732 մ, հասնում 2931.3 մ բարձրություն ունեցող թիվ 15 սահմանակետին, այնուհետև բարձրավանդակով, գագաթներով, ջրբաժանով թեքվում է դեպի հարավ, թիվ 16-20 սահմանակետերով անցնում 2129 մ, հասնում «ճգնավոր» լեռան գագաթին գտնվող Վարդանիժոր, Ծավ և Ալվանք գյուղական համայնքների տարածքների բաժանման, 3023.9 մ բարձրություն ունեցող գագաթին գտնվող, «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 10444 մ է:

### **ՎԱՐՊԱՆԻՉՈՐ – ԱԼՎԱՆՔ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Վարդանիճոր, Ծավ և Ալվանք գյուղական համայնքների տարածքների բաժանման, 3023.9 մ բարձրություն ունեցող գագաթին գտնվող «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա արևմուտք, անցնում 2570 մ, հատելով դաշտային ճանապարհը, հասնում 2521.0 մ բարձրություն ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 495 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, որտեղից ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ, թիվ 2-5 սահմանակետերով անցնում 1228 մ, հասնում ջրհավաքի եզրին գտնվող թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը ջրհավաքով թեքվում է դեպի հարավ, թիվ 7 սահմանակետով անցնում 409 մ, հասնում թիվ 8 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք, անցնում 276 մ, հասնում թիվ 9 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 10 սահմանակետով անցնում 945 մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 11 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, անցնում 304 մ, հասնում թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը ջրհավաքով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 13-25 սահմանակետերով անցնում 4381 մ, հասնում 1665.4 մ նիշ ունեցող երկու ջրհավաքների հատման տեղում գտնվող թիվ 26 սահմանակետին: Թիվ 26 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 544 մ, հասնում թիվ 27 սահմանակետին, այնուհետև ջրբաժանով թեքվում է հարավ-արևելք, անցնում 509 մ, հասնում թիվ 28 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 354 մ, հասնում թիվ 29 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք, ջրբաժանով անցնում 418 մ, հասնում 2194.0 մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 30 սահմանակետին: Թիվ 30 սահմանակետից սահմանագիծը նույն ջրբաժանով թեքվում է կրկին հարավ-արևելք, անցնում 594 մ, հասնում թիվ 31 սահմանակետին: Թիվ 31 սահմանակետից սահմանագիծը ժայռերով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 32-45 սահմանակետերով անցնում 1810 մ, հասնում թիվ 46 սահմանակետին, որտեղից լանջերով թեքվում է նույն ուղղությամբ, հատում ջրբաժանը, թիվ 47-48 սահմանակետերով անցնում 855 մ, հասնում թիվ 49 սահմանակետին: Թիվ 49 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 50-53 սահմանակետերով անցնում 1090 մ, հասնում լեռան գագաթին գտնվող թիվ 54 սահմանակետին, որտեղից բարձունքներով թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ-արևմուտք, թիվ 55-57 սահմանակետերով

անցնում 1033 մ, հասնում լեռան գագաթին գտնվող թիվ 58 սահմանակետին: Թիվ 58 սահմանակետից սահմանագիծը թեք լանջով և ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 59-60 սահմանակետերով անցնում 1068 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 61 սահմանակետին: Թիվ 61 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 139 մ, որտեղից թեքվում է հարավ, անցնում 159 մ, հասնում Վարդանիձոր, Ալվանք գյուղական և Մեղրի քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 19181 մ է:

### **ՎԱՐԴԱՆԻՁՈՐ – ՄԵՂՐԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Վարդանիձոր, Լեհվազ գյուղական և Մեղրի քաղաքային համայնքների տարածքների բաժանման, ջրհավաքի եզրին գտնվող «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 716 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, ապա ջրբաժանով թեքվում է նույն ուղղությամբ, անցնում 486 մ, հասնում 1357.8 մ նիշ ունեցող բարձունքի վրա գտնվող թիվ 2 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի արևելք, անցնում 781 մ, հասնում 1124.3 մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 549 մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 4 սահմանակետին, այնուհետև ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 114 մ, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 6 սահմանակետով անցնում 1019 մ, հատելով դաշտային ճանապարհը, հասնում ժայռի եզրին գտնվող թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 865 մ, հասնում ջրբաժանի վրա գտնվող թիվ 8 սահմանակետին, որտեղից թեքվում է կրկին դեպի հարավ-արևելք, թիվ 9 սահմանակետով անցնում 581 մ, հասնում թիվ 10 սահմանակետին, այնուհետև թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 142 մ, հասնում ջրբաժանի վրա գտնվող թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է հարավ-արևելք, անցնում 224 մ, հասնում Վարդանիձոր, Ալվանք գյուղական և Մեղրի քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5477 մ է:

### **ՎԱՐԴԱՆԻՁՈՐ – ԼԵՀՎԱԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

Վարդանիծոր, Լեհվազ և Լիճք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը Մեղրի գետով թեքվում է դեպի հարավ, ապա արևմուտք, թիվ 1-7 սահմանակետերով անցնում 2252 մ, հասնում թիվ 8 սահմանակետին, որտեղից գետի վտակով, թիվ 9-11 սահմանակետերով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 1218 մ, հասնում 1653.0 մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 427 մ, հասնում ջրբաժանի վրա գտնվող թիվ 13 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ, անցնում 385 մ, հասնում թիվ 14 սահմանակետին, որտեղից ամառանոցների եզրագծով անցնում է 447 մ, հասնում Մեղրի գետի վտակի ափին գտնվող թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 16-17 սահմանակետերով անցնում 306 մ, հասնում թիվ 18 սահմանակետին: Թիվ 18 սահմանակետից Բուգակյար գետակով սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 19-21 սահմանակետերով անցնում 1727 մ, հասնում Մեղրի գետի ափին գտնվող թիվ 22 սահմանակետին: Այնուհետև Մեղրի գետով, թիվ 23-38 սահմանակետերով անցնում է 3218 մ, հասնում թիվ 39 սահմանակետին: Թիվ 39 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, անցնում 900 մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 40 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 348 մ, հասնում ջրբաժանի թիվ 41 սահմանակետին, հետո թեքվում է դեպի հյուսիս, անցնում 273 մ, հասնում թիվ 42 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի արևելք, անցնում 306 մ, հասնում ջրբաժանի վրա գտնվող թիվ 43 սահմանակետին: Թիվ 43 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 288 մ, հասնում ջրհավաքի եզրին գտնվող թիվ 44 սահմանակետին, այնուհետև ջրհավաքով, թիվ 45-65 սահմանակետերով անցնում 4165 մ, հասնում Վարդանիծոր, Լեհվազ գյուղական և Մեղրի քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 16260 մ է:

#### **ՎԱՐԴԱՆԻՉՈՐ –ԼԻՃՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Ա»**

Վարդանիծոր, Լիճք և Ծավ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը 2874.6 մ նիշ ունեցող բլրի գագաթից թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 1575 մ, հասնում 2746.0 մ

Գիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 1 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 574 մ, հասնում թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի արևմուտք, թիվ 3-5 սահմանակետերով անցնում 1229 մ, հասնում 2517.2 մ Գիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 351 մ, հասնում ջրհավաքի եզրին գտնվող թիվ 7 սահմանակետին, այնուհետև նույն ջրհավաքով թիվ 8 սահմանակետով անցնում 834 մ, հասնում 2122.0 մ Գիշ ունեցող թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 590 մ, հասնում թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 726 մ, հասնում ջրբաժանի վրա գտնվող թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը նույն ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 12-18 սահմանակետերով անցնում 2718 մ, հասնում ջրհավաքների հատման տեղում գտնվող թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը գետակով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 20 սահմանակետով անցնում 632 մ, հասնում Մեղրի գետի վտակների հատման տեղում գտնվող 1656.4 մ Գիշ ունեցող թիվ 21 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, հատում բարձունքը, թիվ 22 սահմանակետով անցնում 451 մ, հասնում Մեղրի գետի վտակի ափին գտնվող թիվ 23 սահմանակետին: Թիվ 23 սահմանակետից սահմանագիծը գետակով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 332 մ, հասնում ձորակի հետ հատման տեղում գտնվող թիվ 24 սահմանակետին, որտեղից ձորակով թեքվում է դեպի հարավ, թիվ 25-27 սահմանակետերով անցնում 1068 մ, հասնում ձորակի սկզբնական մասում գտնվող 2163.2 մ Գիշ ունեցող եռանկյունաչափական կետին, որը հանդիսանում է թիվ 28 սահմանակետը: Թիվ 28 սահմանակետից սահմանագիծը լանջով թեքվում է դեպի հարավ, թիվ 29 սահմանակետով անցնում 984 մ, հասնում գետակի ափին գտնվող թիվ 30 սահմանակետին, այնուհետև գետակով, ապա ձորակով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ապա հարավ-արևելք, թիվ 31-33 սահմանակետերով անցնում 1053 մ, հասնում թիվ 34 սահմանակետին: Թիվ 34 սահմանակետից սահմանագիծը թեքվում է կրկին դեպի հյուսիս-արևելք, ապա արևելք, թիվ 35-36 սահմանակետերով անցնում 998 մ, հասնում թիվ 37 սահմանակետին: Թիվ 37 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևմուտք, թիվ 38-41 սահմանակետերով անցնում 2306 մ, հասնում Մեղրի գետի վտակի ափին գտնվող թիվ 42 սահմանակետին: Թիվ 42 սահմանակետից սահմանագիծը Մեղրի գետի վտակով, հոսանքի ուղղությամբ թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 43-44 սահմանակետերով անցնում 1207 մ,

հասնում թիվ 45 սահմանակետին, որտեղից նույն գետակով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 46 սահմանակետով անցնում 863 մ, հասնում թիվ 47 սահմանակետին: Թիվ 47 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 486 մ, հասնում 1853.6 մ նիշ ունեցող ջրբաժանի վրա գտնվող թիվ 48 սահմանակետին: Թիվ 48 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 1070 մ, հասնում Վարդանիձոր, Լիճք և Լեիվազ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին

«Ե»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 20047 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՎԱՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԵՎԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Վարդավանք գյուղական համայնքը գտնվում է մարզի կենտրոնական մասում:

Համայնքը հյուսիս-արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Ուժանիս գյուղական համայնքին, հարավից «Բ»-«Գ» հատվածով՝ Խդրանց գյուղական համայնքին, հարավից և արևմուտքից «Գ»-«Դ» հատվածով՝ Սյունիք գյուղական համայնքին, հյուսիս-արևմուտքից «Դ»-«Ա» հատվածով՝ Արծվանիկ գյուղական համայնքին:

### **ՎԱՐԴԱՎԱՆՔ- ՈՒԺԱՆԻՍ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Վարդավանք, Ուժանիս և Արծվանիկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է դաշտային ճանապարհի եզրին, սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 1 սահմանակետով անցնում 327 մ, ձորով հասնում թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը նույն ուղղությամբ, թիվ 3-8 սահմանակետերով անցնում է 1762 մ, ընթացքում հատվում է ձորակի և դաշտային ճանապարհի հետ, հասնում թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, ապա արևելք, թիվ 10 սահմանակետով անցնում 397 մ, հասնում Վարդավանք, Ուժանիս և Խդրանց գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2486 մ է:

### **ՎԱՐԴԱՎԱՆՔ - ԽԴՐԱՆՑ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Վարդավանք, Ուժանիս և Խդրանց գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհով անցնում 500մ հասնում է թիվ 1 սահմանակետին, որտեղից սահմանագիծը նույն ուղղությամբ, թիվ 2 սահմանակետով անցնում է 584մ, հասնում թիվ 3 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ձորով թիվ 4-5 սահմանակետով, անցնում 421մ, հասնում ձորի եզրի թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից

սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, դաշտային ճանապարհով թիվ 7 սահմանակետով անցնում 820մ, հասնում թիվ 8 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 167մ հասնում Վարդավանք, Խդրանց և Սյունիք համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը՝ 2492մ է:

#### **ՎԱՐԴԱՎԱՆՔ – ՍՅՈՒՆԻՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Վարդավանք, Սյունիք և Խդրանց գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը վտակով հոսանքի ուղղությամբ թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1-3 սահմանակետերով անցնում է 1255մ, հասնում թիվ 4 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 5 սահմանակետով, անցնում 774մ, հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ապա հարավ և թիվ 7-8 սահմանակետերով անցնում 403մ, հասնում է թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 935մ, հասնում է բլրի գագաթի թիվ 10 սահմանակետին, որտեղից սահմանագիծը անտառի եզրով, պարբերաբար թեքվելով հարավ-արևելք և հարավ հատում է ձորակներ և լանջով թիվ 11-16 սահմանակետերով անցնում 939մ, հասնում թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հյուսիս-արևմուտքից և հյուսիս-արևելք թիվ 18-19 սահմանակետերով անցնում է 949մ, հասնում անտառի եզրին գտնվող թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք անտառի եզրով, թիվ 21-22 սահմակետերով անցնում է 1110մ, հասնում թիվ 23 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևելք անցնում 293մ հասնում Վարդավանք, Սյունիք և Խդրանց համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը՝ 6657մ է:

#### **ՎԱՐԴԱՎԱՆՔ – ԱՐԾՎԱՆԻԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ա»**

Վարդավանք, Արծվանիկ և Ուժանիս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանով, լեռնալանջերով, հատելով դաշտային ճանապարհներ, ձորեր, թիվ 1-6 սահմանակետերով անցնելով 2125 մ, հասնում է

Գյուղակլու գետի վերին հոսանքներում գտնվող թիվ 7 սահմանակետին, այստեղից գետի հոսանքով թեքվելով նույն ուղղությամբ, անցնում է 652 մ, հասնում Վարդավանք, Արծվանիկ և Սյունիք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2777 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ԽՈՏԱՆԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Վերին Խոտանան գյուղական համայնքը գտնվում է մարզի կենտրոնական մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Շուռնուխ գյուղական համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Եղեգ գյուղական համայնքին, «Գ»-«Դ» հատվածով՝ Շրվենանց գյուղական համայնքին, հարավից «Դ»-«Ե» հատվածով՝ Ներքին Խոտանան գյուղական համայնքին, հարավ-արևմուտքից «Ե»-«Զ» հատվածով՝ Տավրուս գյուղական համայնքին, արևմուտքից «Զ»-«Ա» հատվածով՝ Տանձավեր գյուղական համայնքին:

### **ՎԵՐԻՆ ԽՈՏԱՆԱՆ – ՇՈՒՆՈՒՒՄ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Վերին Խոտանան, Տանձավեր և Շուռնուխ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անտառով, թիվ 1 սահմանակետով անցնում 608 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, լանջով անցնում 282 մ, հասնում թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, հատում դաշտային ճանապարհը, թիվ 4 սահմանակետով անցնում 374 մ, հասնում թիվ 5 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, լանջով անցնում 377 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը ձորով անցնում է 4004 մ, հասնում թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, ջրբաժանով, թիվ 8-12 սահմանակետերով անցնում 1314 մ, հասնում թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 14 սահմանակետով անցնում 192 մ, հասնում թիվ 15 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հարավ, անցնում 106 մ, հասնում թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը լանջով, թիվ 17 սահմանակետով անցնում է 252 մ, հասնում թիվ 18 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 103 մ, հասնում թիվ 19

սահմանակետին, այնուհետև սահմանագիծը եքվում է արևելք, անցնում 194 մ, հասնում թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս անցնում 191 մ, հասնում թիվ 21 սահմանակետին: Թիվ 21 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևելք, լանջերով, բլուրների գագաթներով, թիվ 22-31 սահմանակետերով անցնում 1675 մ, հասնում թիվ 32 սահմանակետին: Թիվ 32 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով, թիվ 33-35 սահմանակետերով անցնում 939 մ, հասնում է թիվ 36 սահմանակետին: Թիվ 36 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 530 մ, հասնում Վերին Խոտանան, Շուռնուխ և Եղեգ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 11139 մ է:

### **ՎԵՐԻՆ ԽՈՏԱՆԱՆ – ԵՂԵԳ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Վերին Խոտանան, Եղեգ և Շուռնուխ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, թիվ 1 սահմանակետով անցնելով 435 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 2 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, ձորով, թիվ 3 սահմանակետով անցնում 966 մ, հասնում թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 65 մ, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ձորով անցնում 1460 մ, հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 7 սահմանակետով անցնում 243 մ, հասնում թիվ 8 սահմանակետին, որը գտնվում է բարձունքի վրա: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ձորով, թիվ 9-16 սահմանակետերով անցնում 740 մ, հասնում թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնելով 155 մ, հասնում թիվ 18 սահմանակետին, ապա թեքվում հարավ, անցնում 185 մ, հասնում թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 20 սահմանակետով անցնում 657 մ, հասնում թիվ 21 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, անցնում 419 մ, հասնում թիվ 22 սահմանակետին, հետո թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 23-24 սահմանակետերով անցնում 520 մ, հասնում թիվ 25 սահմանակետին: Թիվ 25 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 207 մ, հասնում թիվ 26 սահմանակետին: Թիվ 26 սահմանակետից սահմանագիծը կրկին թեքվում է

դեպի հարավ-արևելք, թիվ 27 սահմանակետով անցնելով 493 մ, հասնում Վերին Խոտանան, Եղեգ և Շրվենանց գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը՝ 6545 մ է:

#### **ՎԵՐԻՆ ԽՈՏԱՆԱՆ – ՇՐՎԵՆԱՆՑ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Վերին Խոտանան, Շրվենանց և Եղեգ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 673 մ, հասնում անտառի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է հարավ, անցնում 282 մ, հասնում թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, ապա հարավ-արևմուտք և թիվ 3-6 սահմանակետերով անցնելով 559 մ՝ ձորին զուգահեռ գծով հասնում է թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 119 մ, հասնում թիվ 8 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, անցնելով 323 մ, հասնում դաշտային ճանապարհի հետ հատման կետում գտնվող թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, հատում է ջրբաժանը և ձորը, թիվ 10 սահմանակետով անցնում 1080 մ, հասնում Վերին Խոտանան, Ներքին Խոտանան և Շրվենանց գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3036 մ է:

#### **ՎԵՐԻՆ ԽՈՏԱՆԱՆ – ՆԵՐՔԻՆ ԽՈՏԱՆԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

Վերին Խոտանան, Ներքին Խոտանան և Տավրուս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ջրբաժանի վրա, սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 1-2 սահմանակետերով անցնում 589 մ, հասնում թիվ 3 սահմանակետին, որը գտնվում է Չանախչի գետի ափին, ապա թեքվում է հարավ-արևելք, գետի ուղղությամբ անցնելով 1467 մ՝ հասնում է կամուրջի վրա գտնվող Վերին Խոտանան, Ներքին Խոտանան և Շրվենանց գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2056 մ է:

## **ՎԵՐԻՆ ԽՈՏԱՆԱՆ – ՏԱՎՐՈՒՄ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»**

Վերին Խոտանան, Տավրուս և Տանձավեր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը գազաթներով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1 սահմանակետով անցնում 409 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ, թիվ 3 սահմանակետով անցնում 459 մ, հասնում թիվ 4 սահմանակետին, որից հետո կտրուկ թեքվում է դեպի արևելք, անցնում 315 մ, հասնում թիվ 5 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 6-12 սահմանակետերով անցնում 2717 մ, հասնում Վերին Խոտանան, Տավրուս և Ներքին Խոտանան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3900 մ է:

## **ՎԵՐԻՆ ԽՈՏԱՆԱՆ – ՏԱՆՁԱՎԵՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Զ»-«Ա»**

Վերին Խոտանան, Տանձավեր և Շուռնուխ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, անցնում 591մ հասնում թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 220մ հասնում ձորի մեջ գտնվող թիվ 2 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հարավ, ձորով թիվ 3-8 սահմանակետերով անցնում է 598մ, հասնում թիվ 9 սահմանակետին, այնուհետև կտրուկ թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, միջհամայնքային ավտոճանապարհով անցնում 701մ, հասնում թիվ 10 սահմանակետին, այդտեղից թեքվում է դեպի հարավ ձորակով թիվ 11-14 սահմանակետերով անցնում 975մ հասնում թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք անցնում 370մ, հասնում թիվ 16 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, անցնում 262մ, հասնում թիվ 17 սահմանակետին, որից հետո թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 260մ, հասնում թիվ 18 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ թիվ 19-21 սահմակետերով անցնում 760մ հասնում Վերին Խոտանան, Տանձավեր և Տավրուս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4737մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Վերիշեն գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսային մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Խոզնավար գյուղական համայնքին, «Բ»-«Գ» հատվածով՝ Վաղատուր գյուղական համայնքին, արևելքից «Գ»-«Դ» հատվածով՝ Խնածախ գյուղական համայնքին, «Դ»-«Ե» հատվածով՝ Խնձորեսկ գյուղական համայնքին, «Ե»-«Զ» հատվածով՝ Գորիս քաղաքային համայնքին, հարավից «Զ»-«Է» հատվածով՝ Ակներ գյուղական համայնքին, արևմուտքից և հյուսիսից «Է»-«Ա» հատվածով՝ պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն):

### **ՎԵՐԻՇԵՆ – ԽՈՋՆԱՎԱՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Վերիշեն, Խոզնավար գյուղական համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը սարալանջով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 1728 մ, հասնում Վերիշեն, Խոզնավար և Վաղատուր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1728 մ է:

### **ՎԵՐԻՇԵՆ – ՎԱՂԱՏՈՒՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Վերիշեն, Վաղատուր և Խնածախ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 2170մ, հասնում թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը լեռնալանջով ու ջրբաժանով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, հատում դաշտային ճանապարհը, ապա թեքվում է դեպի արևելք, թիվ 2-6 սահմանակետերով անցնում 3745մ, հասնում Վերիշեն, Վաղատուր և Խոզնավար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5915 մ է:

### **ՎԵՐԻՇԵՆ – ԽՆԱԾԱԽ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Վերիշեն, Խնածախ և Վաղատուր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հատում Վերիշեն-Վաղատուր միջհամայնքային ճանապարհը, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 1562 մ, հասնում Կացիքար լեռան գագաթին գտնվող թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, անցնում 814 մ, հատելով դաշտային ճանապարհը, հասնում Վերիշեն, Խնածախ և Խնձորեսկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2376 մ է:

### **ՎԵՐԻՇԵՆ – ԽՆՁՈՐԵՍԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

Վերիշեն, Խնձորեսկ և Խնածախ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թմբերով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-2 սահմանակետերով անցնում 1429 մ, հասնում թիվ 3 սահմանակետին, որտեղից լեռնալանջով թեքվում է նույն ուղղությամբ, անցնում 335 մ, հասնում թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անցնում 130 մ, հասնում Խնձորեսկ, Հարթաշեն գյուղական և Գորիս քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1894մ է:

### **ՎԵՐԻՇԵՆ – ԳՈՐԻՍ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»**

Վերիշեն, Խնձորեսկ գյուղական և Գորիս քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 488 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, միանում Սինդերե գետին և հոսանքի ուղղությամբ, թիվ 2-20 սահմանակետերով անցնելով 3312 մ, հասնում թիվ 21 սահմանակետին: Թիվ 21 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 184 մ, հասնում Ժայռի գլխին տեղադրված թիվ 22 սահմանակետին, ապա կրկին թեքվում է հարավ-արևմուտք, հատում Վերիշեն-

Վաղատուր միջհամայնքային ճանապարհը, անցնում 103 մ, հասնում թիվ 23 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 24-31 սահմանակետերով անցնում 999 մ, հասնում թիվ 32 սահմանակետին: Թիվ 32 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, հատում Գորիս գետը, անցնում 90 մ, հասնում թիվ 33 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք, անցնում 49 մ, հասնում է թիվ 34 սահմանակետին: Թիվ 34 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 58 մ, հասնում թիվ 35 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևմուտք, թիվ 36 սահմանակետով անցնում 145 մ, հասնում Վերիշենի, Ակներ գյուղական և Գորիսի քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ձ» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Ձ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5428 մ է:

### **ՎԵՐԻՇԵՆ – ԱԿՆԵՐ ՍԱՐՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ձ»-«Ե»**

Վերիշեն, Ակներ գյուղական համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման, լեռան գագաթին գտնվող «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 341 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից լանջերով թեքվում է դեպի արևելք, թիվ 2-8 սահմանակետերով անցնում 2784 մ, հասնում լեռան գագաթին գտնվող թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը բարձունքներով թեքվում է նույն ուղղությամբ, թիվ 10-17 սահմանակետերով անցնում 3413 մ, հասնում թիվ 18 սահմանակետին: Թիվ 18 սահմանակետից սահմանագիծը կրկին բարձունքներով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ապա հարավ-արևելք, թիվ 19-20 սահմանակետերով անցնում 1349 մ, հասնում թիվ 21 սահմանակետին: Թիվ 21 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ջրբաժանով, բարձունքներով, թիվ 22-27 սահմանակետերով անցնում է 3765 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 28 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, հատում գետակը, անցնում 351 մ, հասնում թիվ 29 սահմանակետին, այնուհետև թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 205 մ, հասնում թիվ 30 սահմանակետին: Թիվ 30 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևելք, ապա հարավ-արևելք, հատում առուն, դաշտային ճանապարհը, Գելիքերց սարի լանջով, թիվ 31-34 սահմանակետերով անցնում է 1263 մ, հասնում թիվ 35 սահմանակետին, կրկին թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 423 մ, հասնում թիվ 36 սահմանակետին: Թիվ 36 սահմանակետից սահմանագիծը բնակավայրի եզրագծով թեքվում է դեպի

հյուսիս, անցնում 92 մ, հասնում թիվ 37 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք, թիվ 38-39 սահմանակետերով անցնում 410 մ, հասնում թիվ 40 սահմանակետին: Թիվ 40 սահմանակետից սահմանագիծը բնակավայրի եզրագծով թեքվում է հարավ-արևելք, թիվ 41-47 սահմանակետերով անցնում 831 մ, հասնում թիվ 48 սահմանակետին: Թիվ 48 սահմանակետից սահմանագիծը բնակավայրի եզրագծով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 49-50 սահմանակետերով անցնում 753 մ, հասնում Վերիշեն, Ակներ գյուղական և Գորիս քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Է» սահմանագծի ընդհանուր երկարությունը 15980 մ է:

**ՎԵՐԻՇԵՆ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՅՄԱՆ (ԱՂՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ)  
ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Է»-«Ա»**

«Է»-«Ա» հատվածով սահմանագիծը համընկնում է Հայաստանի Հանրապետության և Աղրբեջանի Հանրապետության պետական սահմանի հետ:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Տաթև գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսարևմտյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Հարժիս գյուղական համայնքին, հյուսիս-արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Հալիձոր գյուղական համայնքին, արևելքից «Գ»-«Դ» հատվածով՝ Տանձատափ գյուղական համայնքին, «Դ»-«Ե» հատվածով՝ Քաշունի գյուղական համայնքին, «Ե»-«Զ» հատվածով՝ Անտառաշատ գյուղական համայնքին հարավից «Զ»-«Է» հատվածով՝ Լեռնաձոր գյուղական համայնքին, «Է»-«Ը» հատվածով՝ Գեղի գյուղական համայնքին, արևմուտքից «Ը»-«Թ» հատվածով՝ Շենաթազ գյուղական համայնքին, «Թ»-«Ժ» հատվածով՝ Սվարանց գյուղական համայնքին, «Ժ»-«Ի» հատվածով՝ Շենաթաղ գյուղական համայնքին, «Ի»-«Լ» հատվածով՝ Լոր գյուղական համայնքին, հյուսիսից «Լ»-«Ա» հատվածով՝ Լժեն գյուղական համայնքին

### **ՏԱԹԵՎ – ՀԱՐԺԻՍ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Տաթև, Հարժիս և Լժեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Որոտան գետի ափին, սահմանագիծը Որոտան գետի հոսանքով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-43 սահմանակետերով անցնում 7560 մ, հասնում Տաթև, Հարժիս և Հալիձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7560 մ է:

### **ՏԱԹԵՎ - ՀԱԼԻԶՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Տաթև, Հարժիս, Հալիձոր համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Որոտան գետի ափին, Հալիձոր, Տաթև և Հարժիս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Որոտան գետի ափին, սահմանագիծը Որոտան գետով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 420մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 556մ, հասնում թիվ 2 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք, անցնում

503մ, անտառով հասնում թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 4-13 սահմանակետերով անցնում 2909մ, հասնում Տաթև, Հալիձոր և Տանձատափ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4388մ է:

#### **ՏԱԹԵՎ - ՏԱՆՉԱՏԱՓ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Տաթև, Տանձատափ, Հալիձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը Որոտան գետով՝ հոսանքին հակառակ ուղղությամբ թեքվում է դեպի արևմուտք, թիվ 1-7 սահմանակետերով անցնում 1504 մ, հասնում Որոտան գետի և նրա Շվարիկադ վտակի հատման տեղում գտնվող թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը վտակով և ձորով թիվ 9-18 սահմանակետերով անցնում է 2311 մ, հասնում Ժայռի վրա գտնվող թիվ 19 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, անտառի եզրով, թիվ 20-22 սահմանակետերով անցնում 571մ, հասնում թիվ 23 սահմանակետին: Թիվ 23 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 350 մ, հասնում թիվ 24 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի արևելք, անցնում 296 մ, հասնում թիվ 25 սահմանակետին, ապա անտառի եզրով, թիվ 26-31 սահմանակետերով անցնում է 603 մ, հասնում թիվ 32 սահմանակետին: Թիվ 32 սահմանակետից սահմանագիծը անտառի եզրով թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով դաշտային ճանապարհը, ջրբաժանով, թիվ 33-36 սահմանակետերով անցնում է 1409 մ, հասնում Տաթև, Տանձատափ և Քաշունի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7044 մ է:

#### **ՏԱԹԵՎ - ՔԱՇՈՒՆԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

Տաթև, Քաշունի և Տանձատափ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, Չուրչուր լեռով, հատում դաշտային ճանապարհը, թիվ 1-5 սահմանակետերով անցնում 1976 մ, հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով անցնում է 579 մ, հասնում է թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-

արևմուտք, հատում դաշտային ճանապարհներ, ձորեր, անցնում 823 մ, հասնում Տաթև, Քաշունի և Անտառաշատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3378 մ է:

### **ՏԱԹԵՎ - ԱՆՏԱՌԱՇԱՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»**

Տաթև, Անտառաշատ և Քաշունի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից, սահմանագիծը ջրբաժանով, լեռնալանջով թեքվում է դեպի հարավ, թիվ 1-4 սահմանակետերով անցնում 1758 մ, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը նույն ուղղությամբ, թիվ 6 սահմանակետով անցնում է 611 մ, հասնում է թիվ 7 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, թիվ 8 սահմանակետով անցնում 569 մ ջրբաժանով հատելով դաշտային ճանապարհներ հասնում թիվ 9 սահմանակետը: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 286 մ, հատելով դաշտային ճանապարհներ հասնում Տաթև, Անտառաշատ և Լեռնաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3224մ է:

### **ՏԱԹԵՎ – ԼԵՌՆԱՁՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Զ»-«Է»**

Տաթև, Գեղի և Լեռնաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետից, սահմանագիծը ջրբաժանով, թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 667 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից սահմանագիծը լանջով նույն ուղղությամբ, թիվ 2 սահմանակետով անցնում է 1217 մ, հասնում թիվ 3 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս, անցնում 192 մ, հասնում Տաթև, Քաշունի և Լեռնաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Է» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2076 մ է:

### **ՏԱԹԵՎ – ԳԵՂԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Է»-«Ը»**

Տաթև, Գեղի և Շենաթաղ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 1-2 սահմանակետերով անցնում 1668 մ, հասնում է թիվ 3 սահմանակետին, որտեղից սահմանագիծը դարձյալ թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 4 սահմանակետով անցնում 1572 մ, հասնում Տաթև, Գեղի և Լեռնաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետին:

«Է»-«Ը» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3240 մ է:

### **ՏԱԹԵՎ – ՇԵՆԱԹԱՂ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ը»-«Թ»**

Տաթև, Շենաթաղ և Սվարանց գյուղական համայնքների տարածքների բաժանման «Թ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում է 662 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, հետո թեքվում է հարավ-արևելք, անցնում 509 մ, հասնում Շենաթաղ, Տաթև և Գեղի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետին:

«Ը»-«Թ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1171.33 մ է:

### **ՏԱԹԵՎ – ՍՎԱՐԱՆՑ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Թ»-«Ժ»**

Տաթև, Սվարանց և Շենաթաղ համայնքների տարածքների բաժանման «Ժ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 667մ, հասնում թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է արևելք, անցնում 602մ, հասնում թիվ 2 սահմանակետին, հետո կրկին թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 3-11 սահմանակետերով, ջրբաժանով անցնելով 3441 մ, հասնում է ճանապարհների հատման տեղում գտնվող թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 13-14 սահմանակետով անցնելով 926մ, հասնում է թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից, որը գտնվում է Քարահուց գետի ափին, սահմանագիծը գետի հոսանքին հակառակ ուղղությամբ թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 16-18 սահմանակետերով անցնում 296 մ, հասնում թիվ 19 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 20 սահմանակետով անցնում 421մ, հասնում թիվ 21 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում դաշտային ճանապարհն ու անտառը, թիվ 22-23 սահմանակետերով անցնում 850 մ, հասնում անտառի եզրին գտնվող թիվ 24 սահմանակետին: Թիվ 24 սահմանակետից սահմանագիծը կրկին թեքվում է դեպի հարավ-արևմուտք, բլրագագաթներով, թիվ 25-

26 սահմանակետերով անցնում 970մ, հասնում ճանապարհի եզրին գտնվող թիվ 27 սահմանակետին, այնուհետև ջրբաժանով նույն ուղղությամբ անցնելով 430մ հասնում է թիվ 28 սահմանակետին: Թիվ 28 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ջրբաժան առվով, թիվ 29-31 սահմանակետերով անցնում 1852մ, հասնում լեռնագագաթին գտնվող թիվ 32 սահմանակետին: Թիվ 32 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, լանջով, թիվ 33 սահմանակետով անցնում 1716 մ, հատելով դաշտային ճանապարհները հասնում Տաթև, Սվարանց և Շենաթաղ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Թ» հանգուցային սահմանակետին:

«Թ»-«Ժ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 12171 մ է:

### **ՏԱԹԵՎ – ՇԵՆԱԹԱՂ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ժ»-«Ի»**

Տաթև, Լոր և Շենաթաղ համայնքների տարածքների բաժանման «Ի» հանգուցային սահմանակետից սահմանագիծը լեռան լանջով թեքվում է դեպի հարավ, ջրբաժանով, թիվ 1-2 սահմանակետերով անցնում 919 մ, հասնում թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, հետո հարավ-արևելք, ջրբաժանով, թիվ 4 սահմանակետով անցնում 789 մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը կրկին թեքվում է դեպի հարավ, ջրբաժանով, թիվ 6-7 սահմանակետերով անցնում է 1043 մ, հասնում է թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 9 սահմանակետով անցնում 274 մ, հասնում Տաթև, Շենաթաղ և Սվարանց գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ժ» հանգուցային սահմանակետին:

«Ժ»-«Ի» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3025 մ է:

### **ՏԱԹԵՎ – ԼՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ի»-«Լ»**

Տաթև, Լոր և Լծեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Լ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, առվով, թիվ 1-8 սահմանակետերով անցնում է 1672 մ, հասնում թիվ 9 սահմանակետին, որտեղից նույն ուղղությամբ, թիվ 10-13 սահմանակետերով անցնում է 1182 մ, հասնում թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, լեռնագագաթներով թիվ 15-16 սահմանակետերով անցնում է 645 մ, հասնում թիվ 17 սահմանակետին: Թիվ 17

սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, հատելով դաշտային ճանապարհներ, թիվ 18-21 սահմանակետերով անցնում է 512 մ, հասնում է թիվ 22 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ, անցնում 113 մ, հասնում է թիվ 23 սահմանակետին, որից հետո թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 24-25 սահմանակետերով անցնում է 222 մ, հասնում Տաթև, Լոր և Շենաթաղ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ի» հանգուցային սահմանակետին:

«Ի»-«Լ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4346 մ է:

### **ՏԱԹԵՎ – ԼՕԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾՆ՝ «Լ»-«Ա»**

Տաթև, ԼՕԵՆ և Հարժիս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, գետով, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 1050մ հասնում թիվ 4 սահմանակետին, ապա նորից թեքվում հարավ-արևմուտք, գետով թիվ 5-8 սահմանակետերով անցնում 1305մ, հասնում թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, լանջով թիվ 10 սահմանակետով անցնում 862մ, հասնում թիվ 11 սահմանակետին, ապա նորից թեքվում է հարավ-արևմուտք, լանջով, թիվ 12 սահմանակետով անցնում 644մ, հասնում Տաթև, ԼՕԵՆ և Լոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Լ» հանգուցային սահմանակետը:

«Լ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3861 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՉԱՎԵՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Տանձավեր գյուղական համայնքը գտնվում է մարզի կենտրոնական մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Բարձրավան գյուղական համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Շուռնուխ գյուղական համայնքին, «Գ»-«Դ» հատվածով՝ Վերին Խոտանան գյուղական համայնքին, հարավից «Դ»-«Ե» հատվածով՝ Տավրուս գյուղական համայնքին, «Ե»-«Զ» հատվածով՝ Անտառաշատ գյուղական համայնքին, արևմուտքից «Զ»-«Ա» հատվածով՝ Աղվանի գյուղական համայնքին:

### **ՏԱՆՉԱՎԵՐ - ԲԱՐՉՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Տանձավեր, Բարձրավան և Աղվանի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 2-4 սահմանակետերով անցնում է 734մ, հասնում է թիվ 5 սահմանակետին, հետո թեքվում է դեպի հյուսիս թիվ 6 սահմանակետով անցնում 308մ հասնում թիվ 7 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևմուտք, անցնում 123մ, հասնում թիվ 8 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս արևմուտք, անցնում 300մ հասնում թիվ 9 սահմանակետին, այդտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 214մ հասնում թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևելք, անցնում 137մ, հասնում թիվ 11 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հյուսիս, անցնում 36մ հասնում թիվ 12սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք թիվ 13 սահմանակետով անցնում 243մ, հասնում է թիվ 14 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս, անցնում 83մ, հասնում թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 16-22 սահմանակետերով անցնում 1818մ, հասնում թիվ 23 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հյուսիս-արևելք անցնում 187.0մ հասնում թիվ 24 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս, անցնում 212.0մ, հասնում թիվ 25 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևելք թիվ 26 սահմանակետով անցնում 516մ հասնում թիվ 27 սահմանակետին, այդտեղից էլ թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 147մ հասնում է թիվ 28 սահմանակետին: Թիվ 28 սահմանակետից

սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 255մ հասնում թիվ 29 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 143մ, հասնում թիվ 30 սահմանակետին, որից հետո կտրուկ թեքվում է դեպի հյուսիս թիվ 31 սահմանակետով անցնում է 295մ, հասնում է թիվ 32 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 366մ հասնում թիվ 33 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս, անցնում 310մ, հասնում թիվ 34 սահմանակետին: Թիվ 34 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 215մ, հասնում թիվ 35 սահմակետին, որից հետո կտրուկ թեքվում է դեպի հարավ, անտառի եզրագծով թիվ 36-42 սահմանակետերով անցնում 947մ հասնում է թիվ 43 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի արևմուտք, անցնում 172մ, հասնում թիվ 44 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք թիվ 45-46 սահմանակետերով անցնում 564մ, հասնում թիվ 47 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անտառի եզրով թիվ 48-66 սահմանակետերով անցնում 1873մ, հասնում Տանձավեր, Բարձրավան և Շուռնուխ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 10198.0մ է:

#### **ՏԱՆՁԱՎԵՐ – ՇՈՒՐՆՈՒՒՄ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Բ»-«Գ»**

Տանձավեր, Բարձրավան և Շուռնուխ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 572մ հասնում թիվ 1 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հարավ, թիվ 2 սահմանակետով անցնում է 501մ, հասնում է թիվ 3 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 165մ, հասնում թիվ 4 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, թիվ 5-8 սահմանակետերով անցնում 560մ հասնում թիվ 9 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 10 սահմանակետով անցնում 168մ, հասնում թիվ 11 սահմանակետին, այդտեղից թեքվում է դեպի հարավ, թիվ 10-17 սահմանակետերով անցնում 356մ հասնում Տանձավեր, Շուռնուխ և Վերին Խոտանան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2322մ է:

#### **ՏԱՆՁԱՎԵՐ – ՎԵՐԻՆ ԽՈՏԱՆԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Գ»-«Դ»**

Տանձավեր, Շուռնուխ և Վերին Խոտանան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, անցնում 591մ հասնում թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 220մ հասնում ձորի մեջ գտնվող թիվ 2 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հարավ, ձորով թիվ 3-8 սահմանակետերով անցնում է 598մ, հասնում թիվ 9 սահմանակետին, այնուհետև կտրուկ թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, միջհամայնքային ավտոճանապարհով անցնում 701մ, հասնում թիվ 10 սահմանակետին, այդտեղից թեքվում է դեպի հարավ ձորակով թիվ 11-14 սահմանակետերով անցնում 975մ հասնում թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք անցնում 370մ, հասնում թիվ 16 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, անցնում 262մ, հասնում թիվ 17 սահմանակետին, որից հետո թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 260մ, հասնում թիվ 18 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ թիվ 19-21 սահմանակետերով անցնում 760մ հասնում Տանձավեր, Վերին Խոտանան և Տավրուս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4737.0մ է:

#### **ՏԱՆՁԱՎԵՐ – ՏԱՎՐՈՒՍ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

Տանձավեր, Վերին Խոտանան և Տավրուս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, դաշտային ճանապարհով անցնում 309մ, հասնում Տանձավեր, Անտառաշատ և Տավրուս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 309մ է:

#### **ՏԱՆՁԱՎԵՐ – ԱՆՏԱՌԱՇԱՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»**

Տանձավեր, Աղվանի և Անտառաշատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 211մ հասնում թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևելք, անցնում 371մ, հասնում թիվ 2 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 102մ հասնում թիվ 3 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի արևելք, թիվ 4 սահմանակետով անցնում 636մ, հասնում թիվ 5 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս, անցնում 234մ, հասնում դաշտային

ճանապարհի եզրին գտնվող թիվ 6 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, դաշտային ճանապարհով թիվ 7-24 սահմանակետերով անցնում 2518մ հասնում Տանձավեր, Անտառաշատ և Տավրուս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4072մ է:

### **ՏԱՆԶԱՎԵՐ – ԱՂՎԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Զ»-«Ա»**

Տանձավեր, Աղվանի և Բարձրավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Տաթև-Շոռնուխ միջհամայնքային ճանապարհի եզրին, սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, լանջի անհարթություններով անցնում 301 մ, հասնում թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, հատում ձորը, այնուհետև կտրտված լանջերով և թիվ 2-5 սահմանակետերով անցնում է 1124 մ, հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը զառիթափ լանջով թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 320 մ, հասնում թիվ 7 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք, թիվ 8-9 սահմանակետերով անցնում 593 մ, հասնում թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 11 սահմանակետով անցնում 326 մ, հասնում թիվ 12 սահմանակետին, այնուհետև հատում է Աղվանի-Տանձավեր միջհամայնքային ճանապարհը, թեքվում հարավ-արևմուտք, անցնում 168 մ, հասնում է թիվ 13 սահմանակետին, որը գտնվում Աղչայ գետի ափին: Այնուհետև սահմանագիծը գետով հոսանքի ուղղությամբ, թեքվում է դեպի հարավ-արևելք, գետի ոլորաններով անցնում է 1461 մ, հասնում թիվ 14 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անտառի եզրով անցնելով 218 մ, հասնում է թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվելով հարավ-արևելք, անցնելով 169 մ, հասնում է թիվ 16 սահմանակետին, այնուհետև թեքվելով հարավ-արևմուտք, անցնելով 299 մ, հասնում է ձորի մեջ գտնվող թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը ձորով 18-27 սահմանակետերով անցնելով 1131 մ, հասնում է Տանձավեր, Աղվանի և Անտառաշատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6109 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՉԱՏԱՓ ՓՅՈՒՂԱԿԱՆ**

### **ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Տանձատափ գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսային մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Հալիձոր գյուղական համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Աղվանի գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Քաշունի գյուղական համայնքին, արևմուտքից և հյուսիսից «Դ»-«Ա» հատվածով՝ Տաթև գյուղական համայնքին:

### **ՏԱՆՉԱՏԱՓ – ՀԱԼԻՉՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Տանձատափ, Հալիձոր և Տաթև համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Որոտան գետի ափին, սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 1-2 սահմանակետերով անցնում 690մ, հասնում թիվ 3 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 4-7 սահմանակետերով անցնում 800մ, հասնում թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 519մ, հասնում թիվ 9 սահմանակետին, այստեղից ժայռերով թեքվում դեպի հարավ-արևմուտք, թիվ 10-12 սահմանակետերով անցնում 1198մ, հասնում թիվ 13 սահմանակետին, ապա կրկին թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 679մ, հատում է ձորերը, առուն, ժայռի վրա գտնվող թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը դարձյալ թեքվում է դեպի հարավ-արևմուտք, և անտառի եզրագծով անցնում 610մ, հասնում թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից դսահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 516մ, հասնում թիվ 16 սահմանակետին, ապա թեքվում է արևելք, անցնում 177մ, հասնում թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը նորից թեքվելով դեպի հարավ-արևելք՝ ժայռերի եզրագծով, թիվ 18-20 սահմանակետերով, անցնում 778մ, հասնում է թիվ 21 սահմանակետին: Թիվ 21 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 406մ, հասնում է թիվ 22 սահմանակետին: Թիվ 22 սահմանակետից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 23 սահմանակետով անցնում 366մ, հասնում «Գոլուկայա» կոչվող եռանկյունաչափական կետին, որը հանդիսանում է

Տանձատափ, Աղվանի և Հալիձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետը:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6739 մ է:

### **ՏԱՆՁԱՏԱՓ – ԱՂՎԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Տանձատափ, Աղվանի և Հալիձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից, որը «Գոլուկայա» կոչվող եռանկյունաչափական կետն է, սահմանագիծը հարթ ռելիեֆով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 260մ, հասնում ճանապարհի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին, ապա ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 174մ, հասնում թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հատում դաշտային ճանապարհներ, թիվ 3-4 սահմանակետերով անցնում 795մ, հասնում ժայռի գլխին գտնվող թիվ 5 սահմանակետին, որտեղից թեքվելով դեպի հարավ, անցնում է 147մ, հասնում Տանձատափ, Աղվանի և Քաշունի համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1376մ է:

### **ՏԱՆՁԱՏԱՓ – ՔԱՇՈՒՆԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Տանձատափ, Քաշունի և աղվանի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, հատում դաշտային ճանապարհներ, ձորեր և թիվ 1 սահմանակետով անցնելով 1320 մ, հասնում է թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծն անտառի եզրով թեքվում է դեպի հարավ, անցնում 78 մ, հասնում թիվ 3 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, սարալանջով թիվ 4-6 սահմանակետերով անցնում 1366 մ, հասնում Տանձատափ, Քաշունի և Տաթև գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2762 մ է:

## ՏԱԼՁԱՏԱՓ – ՏԱԹԵՎ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ա»

Տանձատափ, Տաթև և Հալիձոր համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը Որոտան գետով՝ հոսանքին հակառակ ուղղությամբ թեքվում է դեպի արևմուտք, թիվ 1-7 սահմանակետերով անցնում 1504 մ, հասնում Որոտան գետի և նրա Շվարիկադ վտակի հատման տեղում գտնվող թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը վտակով և ձորով թիվ 9-18 սահմանակետերով անցնում է 2311 մ, հասնում ժայռի վրա գտնվող թիվ 19 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, անտառի եզրով, թիվ 20-22 սահմանակետերով անցնում 571մ, հասնում թիվ 23 սահմանակետին: Թիվ 23 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 350 մ, հասնում թիվ 24 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի արևելք, անցնում 296 մ, հասնում թիվ 25 սահմանակետին, ապա անտառի եզրով, թիվ 26-31 սահմանակետերով անցնում է 603 մ, հասնում թիվ 32 սահմանակետին: Թիվ 32 սահմանակետից սահմանագիծը անտառի եզրով թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով դաշտային ճանապարհը, ջրբաժանով, թիվ 33-36 սահմանակետերով անցնում է 1409 մ, հասնում Տանձատափ, Տաթև և Քաշունի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7044 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱՇՏՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ**

### **ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Տաշտուն գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավային մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Քաջարան քաղաքային համայնքին, «Բ»-«Գ» հատվածով՝ Լեռնաձոր գյուղական համայնքին, արևելքից և հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Լիճք գյուղական համայնքին, արևմուտքից «Դ»-«Ե» հատվածով՝ պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն), արևմուտքից «Ե»-«Ա» հատվածով՝ Քաջարան գյուղական համայնքին:

#### **ՏԱՇՏՈՒՆ – ՔԱԶԱՐԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Տաշտուն, Քաջարան գյուղական և Քաջարան քաղաքային համայնքների տարածքների բաժանման, ճանապարհի եզրին գտնվող «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 1 սահմանակետով անցնում 662մ, հասնում 2592.0 մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող Տաշտուն, Լեռնաձոր գյուղական և Քաջարան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 662 մ է:

#### **ՏԱՇՏՈՒՆ – ԼԵՌՆԱԶՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Տաշտուն, Լեռնաձոր գյուղական և Քաջարան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի արևելք, թիվ 1-4 սահմանակետերով անցնում 1021 մ, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով 2691.2 մ նիշ ունեցող լեռան գագաթը, թիվ 6-11 սահմանակետերով անցնում 2958 մ, հասնում թիվ 12 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 193 մ, հասնում թիվ 13 սահմանակետին:

Թիվ 13 սահմանազետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի արևելք, հատելով 2556 մ նիշ ունեցող լեռան գագաթը, թիվ 14-15 սահմանակետերով անցնում 1077 մ, հասնում թիվ 16 սահմանակետին, այնուհետև կրկին բարձունքներով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 17-19 սահմանակետերով անցնում 1029 մ, հասնում 2720.0 մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող Տաշտուն, Լեռնաձոր և Լիճք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6278 մ է:

### **ՏԱՇՏՈՒՆ – ԼԻՃՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Տաշտուն, Լեռնաձոր և Լիճք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 886 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում հարավ-արևմուտք, թիվ 2-3 սահմանակետերով անցնելով 865 մ, հասնում չ, թիվ 4 սահմանակետին, որտեղից թեքվում է արևմուտք, թիվ 5 սահմանակետով անցնում 712 մ, հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 321 մ, հասնում թիվ 7 սահմանակետին, այնուհետև ջրբաժանով թեքվում դեպի հարավ, անցնում 254 մ, հասնում ջրբաժանի վրա գտնվող թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով անցնում է 240 մ, հասնում 2251.5 մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 10-12 սահմանակետերով անցնելով 2548 մ, հասնում չ ջրհավաքի եզրին գտնվող թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 14 սահմանակետով անցնում 197 մ, հասնում թիվ 15 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի արևմուտք, թիվ 16-17 սահմանակետերով անցնում 511 մ, հասնում թիվ 18 սահմանակետին, այնուհետև թեքվում է հյուսիս-արևմուտք, ապա հարավ-արևմուտք, թիվ 19 սահմանակետով անցնում 343 մ, հասնում թիվ 20 սահմանակետին, որտեղից կրկին թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա հարավ-արևմուտք, թիվ 21-22 սահմանակետերով անցնում 876 մ, հասնում թիվ 23 սահմանակետին: Թիվ 23 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 24-32

սահմանակետերով անցնում 3235 մ, հասնում 2444.8 մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 33 սահմանակետին, որտեղից ջրբաժանով թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 526 մ, հասնում թիվ 34 սահմանակետին: Թիվ 34 սահմանակետից սահմանագիծը լանջով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 769 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 35 սահմանակետին, որտեղից լանջերով, ժայռերի եզրերով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով ձորեր և ձորակներ, թիվ 36 սահմանակետով անցնում 969 մ, հասնում թիվ 37 սահմանակետին: Թիվ 37 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ-արևմուտք, թիվ 38 սահմանակետով անցնում 645 մ, հասնում Մեղրի գետի ափին գտնվող թիվ 39 սահմանակետին: Թիվ 39 սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի արևմուտք, անցնում 2000 մ, հասնում թիվ 40 սահմանակետին: Թիվ 40 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, հատում ձորը, թիվ 41 սահմանակետով անցնում 333 մ, հասնում թիվ 42 սահմանակետին, որտեղից բարձունքներով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք, թիվ 43-46 սահմանակետերով անցնում 1347 մ, հասնում ժայռի մոտ գտնվող թիվ 47 սահմանակետին: Թիվ 47 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 154 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 48 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 448 մ, հասնում լեռան գագաթին գտնվող թիվ 49 սահմանակետին: Թիվ 49 սահմանակետից սահմանագիծը բարձունքներով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 50 սահմանակետով անցնում 606 մ, հասնում Տաշտուն, Լիճք գյուղական համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 18776 մ է:

**ՏԱՇՏՈՒՆ – ՊԵՏԱԿԱՆ ՄԱՀՄԱՆ (ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ)  
ՄԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

«Դ»-«Ե» հատվածով սահմանագիծը համընկնում է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանի հետ:

### **ՏԱՇՏՈՒՆ – ՔԱԶԱՐԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Ե»-«Ա»**

Տաշտուն, Քաջարան գյուղական և Քաջարան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից,  $\text{ճճԱ} \cdot \text{ԻՂԻՁՍ} \text{ ; } ^{13}\text{Յi}^3\text{ՍՇԿ}$  ճանապարհի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ, թիվ 1 սահմանակետով անցնում 206 մ, հասնում թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը բարձունքներով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 3-4 սահմանակետերով անցնում 1375 մ, հասնում թիվ 5 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 154 մ, հասնում ժայռի եզրին գտնվող թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը ժայռերի եզրագծով, բարձունքներով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 7-10 սահմանակետերով անցնում 2398 մ, հասնում թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, ապա հարավ-արևմուտք, թիվ 12-14 սահմանակետերով անցնում 1706 մ, հասնում թիվ 15 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի արևմուտք, անցնում 197 մ, հասնում ժայռի եզրին գտնվող թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը բարձունքներով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 17-19 սահմանակետերով անցնում 2021 մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 20 սահմանակետին, որտեղից բարձունքներով թեքվում է դեպի արևմուտք և հյուսիս-արևմուտք, թիվ 21-23 սահմանակետերով անցնում 768մ, հասնում Քաջարան, Տաշտուն գյուղական համայնքների և պետական սահման (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 8825 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱՎՐՈՒՄ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Տավրուս գյուղական համայնքը գտնվում է մարզի կենտրոնական մասում:

Համայնքն արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Վերին Խոտանան համայնքին, «Բ»-«Գ» հատվածով՝ Ներքին Խոտանան գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Օխտար գյուղական համայնքին, արևմուտքից և հյուսիս-արևմուտքից «Դ»-«Ե» հատվածով՝ Անտառաշատ գյուղական համայնքին և հյուսիս-արևելքից «Ե»-«Ա» հատվածով՝ Տանձավեր գյուղական համայնքին:

### **ՏԱՎՐՈՒՄ – ՎԵՐԻՆ ԽՈՏԱՆԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Տավրուս, Տանձավեր և Վերին Խոտանան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը զազաթներով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1 սահմանակետով անցնում 409 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ, թիվ 3 սահմանակետով անցնում 459 մ, հասնում թիվ 4 սահմանակետին, որից հետո կտրուկ թեքվում է դեպի արևելք, անցնում 315 մ, հասնում թիվ 5 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 6-12 սահմանակետերով անցնում 2717 մ, հասնում Տավրուս, Վերին Խոտանան և Ներքին Խոտանան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3900 մ է:

### **ՏԱՎՐՈՒՄ –ՆԵՐՔԻՆ ԽՈՏԱՆԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Տավրուս, Վերին Խոտանան և Ներքին Խոտանան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 519 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, թիվ 2-4 սահմանակետերով անցնում 856 մ, հասնում Տավրուս, Ներքին Խոտանան և Օխտար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1374 մ է:

